

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
ԱՄԱՆՈՐԻ ՈՒՂԵՐԶԸ**

**ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԶԱՓԻ ՄԵՋ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՆՆՈՒՄՆԵՐ.  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**



**NEW YEAR ADDRESS OF THE DEFENSE MINISTER  
OF THE REPUBLIC OF ARMENIA**

**THE DEVELOPMENT OF THE ARMENIAN SCIENCE  
IN THE SCOPE OF ARMENIA'S NATIONAL SECURITY STRATEGY**

**THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA:  
INTERNATIONAL COOPERATION**

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝  
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ**



ՀՀ նախագահ, ՀՀ ազգային անվտանգության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ անցկացված խորհրդի նիստը՝ նվիրված ՀԱՊԿ-ի շրջանակներում կայացած «Ռ-ուրեժ 2008» հրամանատարաշտաբային համատեղ զորավարժության արդյունքների ամփոփման և ՀԱՊԿ-ում Հայաստանի նախագահության ընթացքում ռազմաքաղաքական համագործակցության զարգացման հարցերին.

Երևան, 2008 թ. հոկտեմբերի 11



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4 (58). 2008

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Քոթանջյան Հ. Ս.**  
քաղաքական գիտությունների  
դոկտոր (Ռ-Դ), Ռազմական  
գիտությունների ռուսաստանյան  
ակադեմիայի իսկական անդամ,  
հակահարեկչության գծով  
փորձագետ (ԱՄՆ)  
(նախագահ)
- Չիլինգարյան Գ. Ս.**  
(գլխավոր խմբագիր)
- Այդինյան Ռ. Ա.**
- Ապրիանով Է. Ա.**
- Ավետիսյան Վ. Պ.**  
(գլխ. խմբ. տեղակալ)
- Գասպարյան Վ. Ս.**
- Գասպարյան Տ. Շ.**
- Դավթյան Ա. Մ.**
- Իսախանյան Մ. Ռ.**
- Իսրայելյան Վ. Ս.**
- Խաչատուրով Յ. Գ.**
- Կարապետյան Մ. Ն.**
- Մաթևոսյան Ի. Ժ.**
- Մարգարյան Վ. Հ.**  
(գլխ. խմբ. տեղակալ)
- Մարտիրոսյան Ս. Ս.**
- Մարտիրոսով Լ. Ա.**
- Միրզաբեկյան Ա. Ռ.**
- Նազարյան Ա. Ս.**
- Շադյան Պ. Ա.**
- Սեդրակյան Ս. Գ.**
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
- Տոնոյան Գ. Է.**
- Փարսադանյան Ա. Մ.**
- Քոչունց Կ. Գ.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՄՈՒՄԻ ՈՒՂԵՐԶԸ ՀՀ ԶՈՒԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ** . . . . . 7

*Հ. Ս. Քոթանջյան*, Հայ գիտության զարգացումը Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության տրամաչափի մեջ (գեկուցում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գիտության և կրթության հանձնաժողովի լսումներում) . . . . . 30

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

*Գ. Է. Տոնոյան*, Պաշտպանական բարեփոխումների իրականացումը ռազմական համագործակցության շրջանակներում . . . . . 42

*Լ. Գ. Այվազյան*, Պաշտպանական բարեփոխումները ռազմավարական պլանավորման համատեքստում. մերոդարանություն և մտտեցումներ . . . . . 52

*Ա. Ա. Եղիզարյան*, Հարավկովկասյան պետությունների պաշտպանական ոլորտի բարեփոխումների նպատակների համեմատական քննարկում . . . . . 66

*Ս. Օ. Աբրահամյան*, ՀԱՊԿ-ի նոր անվտանգային ճարտարապետության ձևավորման որոշ հարցեր Հայաստանի Հանրապետության պաշտպանական անվտանգության ապահովման համատեքստում . 74

*Գ. Ս. Չիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Տ. Ռ. Մարտիրոսյան*, ԱՄՆ-ի պաշտպանական քաղաքականության համակարգի ղեկավարման ու կառավարման փորձի մասին . . . . . 85

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿՈՒՆՔ**

*Վ. Ա. Խաչատրյան*, Պետության որոշ պաշտպանական գործառնությունների ուսումնասիրություն միջազգային իրավունքի տեսանկյունից . . . . . 104

**ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Ն. Ս. Մկրտչյան, Լ. Հ. Պասիկյան, Գ. Ս. Չիլինգարյան*, Համարի բառարան . . . . . 116

# «АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА  
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ  
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА  
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 4 (58). 2008

Издается 4 раза в год

## РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

*Котанджян Г. С.*, доктор политических наук (РФ), Действительный член  
Российской Академии военных наук, научный эксперт  
по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),  
*Аветисян В. П.* (зам. гл. редактора), *Айдинян Р. А.*, *Априамов Э. А.*,  
*Гаспарян В. С.*, *Гаспарян Т. Ш.*, *Давтян А. М.*, *Исаханян М. Р.*, *Израелян В. С.*,  
*Карапетян М. Н.*, *Кочунц К. Г.*, *Маргарян В. Г.* (зам. гл. редактора),  
*Мартиросов Л. А.*, *Мартиросян С. С.*, *Матевосян И. Ж.*, *Мирзабекян А. Р.*,  
*Назарян А. С.*, *Парсаданян А. М.*, *Сегракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*,  
*Тоноян Д. Э.*, *Хачатуров Ю. Г.*, *Шагян П. А.*

## СОДЕРЖАНИЕ

### НОВОГОДНЕЕ 2009 ГОДА ОБРАЩЕНИЕ МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ СЕЙРАНА ОГАНЯНА К ЛИЧНОМУ СОСТАВУ ВС РА . . . . . 7 (18)\*

*Г. С. Котанджян.* Развитие армянской науки в масштабах стратегии национальной безопасности Армении (доклад на слушаниях Комиссии по науке и образованию Национального Собрания Республики Армения) . . . . . 30 (36)

### ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: МЕЖДУНАРОДНОЕ СОТРУДНИЧЕСТВО

*Д. Э. Тоноян.* Осуществление оборонных реформ в рамках военного сотрудничества . . . . . 42 (50)

*Л. Г. Айвазян.* Оборонные реформы в контексте стратегического планирования: методология и подходы . . . . . 52 (64)

*А. А. Едигарян.* Сравнительное обсуждение целей реформ оборонной сферы южнокавказских государств . . . . . 66 (72)

*С. О. Абрамян.* Некоторые вопросы формирования новой безопасностной архитектуры ОДКБ в контексте обеспечения оборонной безопасности Республики Армения . . . . . 74 (83)

*Д. С. Чилингарян, В. П. Аветисян, Т. Р. Мартиросян.* Об опыте руководства и управления системой оборонной политики США . . . . . 85 (102)

### МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

*В. А. Хачатрян.* Изучение некоторых оборонных функций государства в контексте международного права . . . . . 104 (115)

### ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

*Н. С. Мкртчян, Л. Г. Папикян, Д. С. Чилингарян.* Словарь номера . 116 (117)

\* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

**«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**

DEFENSE-ACADEMIC QUARTERLY,  
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,  
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4 (58). 2008

Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**

*Kotanjian H. S.*, Doctor of Political Sciences (RF), Fellow Member,  
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),  
*Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Apremov E. A.*,  
*Avetisyan V. P.* (Deputy Editor-in-Chief), *Davtyan A. M.*,  
*Gasparyan T. Sh.*, *Gasparyan V. S.*, *Idynyan R. A.*, *Isakhanyan M. R.*,  
*Israelyan V. S.*, *Karapetyan M. N.*, *Khachatourov Y. G.*, *Kotchunts K. G.*,  
*Margaryan V. H.* (Deputy Editor-in-Chief), *Martirosyan S. S.*, *Martirossov L. A.*,  
*Matevossyan I. Zh.*, *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*, *Parsadanyan A. M.*,  
*Sedrakyan S. G.*, *Shadyan P. A.*, *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*

**CONTENTS**

**2009 PRE-NEW YEAR ADDRESS OF THE DEFENSE MINISTER OF THE  
REPUBLIC OF ARMENIA SEYRAN OHANYAN TO THE RA AF STAFF . . . . . 7**

*H. S. Kotanjian.* The development of the Armenian science in the scope  
of Armenia's National Security Strategy (the report at the hearings of the  
Commission on Science and Education of the National Assembly of the  
Republic of Armenia) . . . . . 30

**THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA:  
INTERNATIONAL COOPERATION**

*D. E. Tonoyan.* The implementation of defense reforms within the  
framework of military cooperation . . . . . 42 (51)\*

*L. G. Ayyazyan.* Defense reforms in the context of strategic planning:  
methodology and approaches . . . . . 52 (65)

*A. A. Yedigarian.* A comparative examination of the defense reform  
goals in the South Caucasus States . . . . . 66 (73)

*S. O. Abrahamyan.* Some issues of the formation of new security  
architecture of the CSTO in the context of ensuring defense security of  
the Republic of Armenia . . . . . 74 (84)

*D. S. Chilingaryan, V. P. Avetisyan, T. R. Martirosyan.* On the experience  
of the governance and management of the USA Defense Policy System . . . 85 (103)

**INTERNATIONAL LAW**

*V. A. Khachatryan.* The study of some defense functions of the state  
in the context of International Law . . . . . 104 (115)

**MILITARY TERMINOLOGY**

*N. S. Mkrtchyan, L. H. Papikyan, D. S. Chilingaryan.* Volume Dictionary . . 116 (118)

\* Numbers in brackets mean the page of the text in English.

**ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

- Ռ. Վ. Աղուզումցյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
  - Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
  - Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
  - Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ռ. Գ. Գևորգյան*, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
  - Ա. Հ. Թռչունյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
  - Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
  - Պ. Մ. Հերունի*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
  - Ա. Հ. Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Մ. Մ. Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Վ. Մ. Մուսոյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
  - Յու. Մ. Չիլինգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
  - Վ. Մ. Սարգսյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Հ. Ս. Միսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

- Ք. Վ. Աղուզումյան*, кандидат психологических наук, доцент;
  - Ն. Մ. Արակելյան*, академик НАН РА;
  - Յ. Մ. Արությունյան*, академик НАН РА;
  - Գ. Է. Բաղդասարյան*, академик НАН РА;
  - Գ. Ա. Գևորգյան*, академик НАН РА;
- Ք. Գ. Գևորգյան*, доктор геологических наук, профессор;
  - Ս. Մ. Դերունի*, академик НАН РА;
  - Ա. Ա. Մանթաշյան*, академик НАН РА;
- Յ. Գ. Մինասյան*, доктор исторических наук, профессор;
- Մ. Մ. Միրիջանյան*, доктор медицинских наук, профессор;
  - Կ. Ս. Մոսոյան*, доктор технических наук, профессор;
  - Յ. Ս. Սարգսյան*, академик НАН РА;
- Ա. Ս. Մուսոյան*, доктор медицинских наук, профессор;
  - Ա. Ա. Թրչունյան*, член-корреспондент НАН РА;
  - Յու. Ս. Չилингарян*, академик НАН РА

**SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:**

- R. V. Aghouzoumstian*, Candidate of Psychological Sciences, Docent;
  - N. H. Arakelian*, Full Member, NAS RA;
  - G. Y. Baghdassarian*, Full Member, NAS RA;
  - Y. S. Chilingarian*, Full Member, NAS RA;
  - H. A. Gevorkian*, Full Member, NAS RA;
- R. G. Gevorkian*, Doctor of Geological Sciences, Professor;
  - V. M. Haroutyounian*, Full Member, NAS RA;
  - P. M. Herouni*, Full Member, NAS RA;
  - A. H. Mantashian*, Full Member, NAS RA;
- E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor;
- M. M. Miridjanian*, Doctor of Medical Sciences, Professor;
- K. S. Mossoyan*, Doctor of Technical Sciences, Professor;
  - V. S. Sargsian*, Full Member, NAS RA;
- H. S. Sissakian*, Doctor of Medical Sciences, Professor;
  - A. H. Trchounian*, Fellow Correspondent, NAS RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԻ  
2009 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ

Ո Ւ Ղ Ե Ր Ձ Ը

ՀՀ ՁՈՒ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ

НОВОГОДНЕЕ 2009 ГОДА ОБРАЩЕНИЕ  
МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
СЕЙРАНА ОГАНЯНА К ЛИЧНОМУ СОСТАВУ ВС РА

2009 PRE-NEW YEAR ADDRESS OF THE DEFENSE MINISTER  
OF THE REPUBLIC OF ARMENIA SEYRAN OHANYAN  
TO THE RA AF STAFF





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԻ  
2009 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՈՒՂԵՐՁԸ  
ՀՀ ԶՈՒ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ\*



Հարգելի՛ զինակիցներ:

Ավարտվում է բանակային հերթական տարին:

Հավատարիմ մնալով տարեմուտին ընդառաջ զինանձնակազմին ուղերձով դիմելու արդեն ավանդական դարձած իմ գործելաոճին\*\* այսօր, որպես ՀՀ պաշտպանության նախարար, այս կարգավիճակում առաջին անգամ պատիվ ունեմ իմ խոհերն ու մտորումները կիսելու ձեզ հետ 2008 թվականին կատարված և գալիք բանակային տարում նախատեսվող աշխատանքների շուրջ: Հակված եմ կարծելու, որ այսօրինակ շփումը հնարավորություն կտա մեր փոխհարաբերություններում լինել առավել անմիջական ու ան-

կեղծ, ինչը ոչ միշտ է ստացվում պաշտոնական հանդիպումների, համաբանակային խորհրդակցությունների կամ տարաբնույթ այլ միջոցառումների ժամանակ: Նշեմ նաև, որ ինչի մասին պիտի խոսեմ, հավասարապես վերաբերում է յուրաքանչյուրիս և ունի սոսկ մեկ վերջնական նպատակ՝ ԲԱՆԱԿԸ դարձնել հզոր, իսկ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ առավել անվտանգ, քան այսօր է:

Եվ այսպես. ո՞րն է մեր նպատակի իմաստը, առայսօր ի՞նչ ենք արել դրան հասնելու համար, և ինչպիսի՞ գործընթացներ են նախատեսվում մոտ ապագայում: Նախ նշեմ, որ կրկնողությունից զերծ մնալու համար մինչ այս՝ հայ ժողովրդի նորօրյա պատմության ընթացքում մեր արածների մասին կարելի է ընթերցել իմ «XXI դարի բանակը» գրքից և համոզվել, որ այն ամենը, ինչ մենք ունենք այսօր, ժողովրդի միահամուռ, միասնական ջանքերի շնորհիվ է, և դա մեզնից ոչ մեկը չի կարող իրեն վերագրել. պարզապես մենք **մեծ գործին** մեր փոքրիկ մասնակցությունն ենք բերել: Իսկ հիմա՝ այսօրվա համար վերոնշյալ հարցերին պատասխանելիս, իմ խորին համոզմամբ, նախ անհրաժեշտ է դիտարկել աշխարհաքաղաքական այն վիճակը, որում գտնվում է Հայաստանի Հանրապետությունը: Ակնհայտ է, որ 2008 թվականը ինչպես մեր հանրապետության ողջ բնակչության, այնպես էլ նրա զինված ուժերի համար առանձնահատուկ էր թե՛ ներքաղաքական և թե՛ տարածաշրջանային զարգացումների առատությամբ: Բավական է հիշել ՀՀ-ում անցկացված նախագահական

\* Տպագրվում է ըստ՝ «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի 2009 թվականի տարեմուտի ուղերձը ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմին»: Ե., «Հեռակետ» ՓԲԸ, 2008:

\*\* Այդպես ես վարվում էի 2000–2007 թվականներին, երբ զբաղեցնում էի Պաշտպանության բանակի հրամանատարի պաշտոնը:

ընտրություններին նախորդած և հաջորդած լարված օրերը, Մարտակերտի շրջանի Լևոնարխ գյուղին մերձակա պաշտպանական դիրքերի ուղղությամբ մարտի 3-ի լույս 4-ի գիշերը աղբբեջանական զինուժի կողմից ձեռնարկված աննախադեպ հարձակումը, հունիսին Չինարի գյուղի ուղղությամբ իրավիճակի սրումը հակառակորդի կողմից և մեր մարտական դիրքերի, խաղաղ բնակչության գնդակոծումը, նոյեմբերի 16-ին Հաղորթի շրջանում դիվերսիոն-հետախուզական խմբի ներթափանցման փորձը, օգոստոսին վրաց-օսական հակամարտության գոտում վերսկսված լայնածավալ մարտական գործողությունների արդյունքում տարածաշրջանում ստեղծված պայթյունավտանգ վիճակը, նոյեմբերի սկզբին Մոսկվայում տեղի ունեցած Ռուսաստան – Հայաստան – Ադրբեջան եռակողմ հանդիպման մասին հասարակության շրջանում թեկուզ անհիմն, բայց առայսօր ինչ-որ չափով իրեն զգացնել տվող կասկածի մթնոլորտը և ռազմաքաղաքական նշանակության էլի մի շարք իրադարձություններ ու հանգամանքներ, և մեզ համար պարզ կդառնա, որ Հայաստանի պետականության անվտանգության ապահովման ուղղությամբ անելիքները շատ են, ու պետք է կատարենք ավելին, քան մեզինց պահանջվում է: Ասել է, թե տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումների ընթացիկ իրավիճակում, երբ դեռևս կողմերի միջև լիովին համաձայնեցված չեն դարաբաղյան հիմնախնդրի քաղաքական կարգավորման սկզբունքները, իսկ Հայաստանը կանգնած է մի շարք լուրջ մարտահրավերների առաջ (շրջափակում, արտաքին ճնշումներ, համաշխարհային տնտեսական ճգնաժամ, նվազող, բայց դեռևս գոյություն ունեցող ներքաղաքական որոշ տարածայնություններ և այլն), տակավին Հայոց պետականաշինության թիվ մեկ օրակարգային հարցը շարունակում է մնալ պաշտպանական համակարգի ամրապնդումը: Համակարգ, որի «**զլխավոր, բայց ոչ միակ, օղակը բանակն է...**»:

Ելնելով այս իրողությունից՝ նախքան մեր առաջիկա անելիքների մասին խոսելը մի պահ հետադարձ հայացք ձգենք անցած ժամանակահատվածում, այն է՝ 2008 թ. բանակաշինության ոլորտում իրականացված գործընթացների վրա, առանձնացնենք դրանցում տեղ գտած ձեռքբերումներն ու թերացումները և այդ ամենից արվելիք հետևությունների հիման վրա փորձենք նախանշել դեպի առավել հզոր և մարտունակ բանակ տանող ճանապարհը:

1. ա) Միանշանակ կարող ենք փաստել, որ անցնող բանակային տարվա ամենակարևոր գործընթացն ուղղված էր հանրապետության զինված ուժերում դեռևս 2007 թվականին գործողության մեջ դրված պաշտպանական բարեփոխումների ծրագրի իրականացմանը: Ծրագիր, որի կատարումը բացառապես պայմանավորված է առավել հզոր, մարտունակ և միջազգայնորեն ճանաչված բանակ ունենալու խիստ անհրաժեշտությամբ: Ի դեպ, հակառակ դրան, ոմանց մոտ այն թյուր կարծիքն է իշխում, թե իբր այս բարեփոխումները ոչ ավելին են, քան սոսկ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությանը մերձենալու կամ նրա զինված ուժերի գործելակերպը Հայոց բանակին հարմարեցնելու ռազմավարական քայլ: Հարկ են համարում ի պատասխան մնան տեսակետների ընդգծել, որ դրանք ոչ միայն զուրկ են որևէ հիմքից, այլև խոսում են բանակաշինության վերաբերյալ նրանց ունեցած խիստ սահմանափակ պատկերացումների մասին:

բ) Չնայած այն հանգամանքին, որ Հայոց զինուժը, ըստ դիտորդական խմբերի

և անկախ փորձագետների, հանդիսանում է տարածաշրջանի ամենամարտունակ բանակներից մեկը և ունի պատերազմական հարուստ կենսափորձով թրծված մարտական ուղի, այդուհանդերձ, ժամանակը մեր առաջ դնում է նոր խնդիրներ ու պահանջներ: Հաշվի չառնել այդ ամենը և խուսափել բանակաշինության (այդ թվում նաև այլ պետությունների) լավագույն փորձը սեփական զինուժի հզորացմանը ծառայեցնելու մտքից առնվազն ճիշտ չէր լինի: Ես մի առիթով ասել ու այսօր էլ կրկնում եմ՝ մենք մշտապես պետք է գիտակցենք, որ սովորելու բան ունենք յուրաքանչյուրից, այդ թվում՝ և՛ գերիզոր ու ռազմականացված և՛, ինչու չէ, նաև ոչ նշանակալից պետությունների բանակների կամ զինված խմբավորումների փորձից: Շատ կարևոր է նաև այս ամենը անել ոչ թե կուրորեն, այլ կշռադատված և ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ:

զ) Հարկ է փաստել, որ առայսօր բավականին աշխատանք է տարվել բարեփոխումների ընթացքավորման ուղղությամբ: Դրա ապացույցն է արդեն իսկ մշակված և ընդունված այն տասնյակ օրենքների, իրավական ակտերի և ուղեցույց փաստաթղթերի առկայությունը, որոնք աստիճանաբար կյանքի են կոչվում զինված ուժերի տարբեր ոլորտներում: Այսօր գործնական կիրառման մեջ է դրված «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքը, սահմանված է քաղաքացիական փոխվող զինվորական պաշտոնների շրջանակը, զինանձնակազմի ուսուցման և կառավարման գործում ներդրվել է թեստավորման միջազգային համակարգ, առաջին քայլերն են արվում պայմանագրային սերժանտական համակարգի ներմուծման ուղղությամբ, դատախազության համակարգում իրականացված փոփոխության արդյունքում ստեղծված է քննչական վարչություն, ԱԺ-ի և հասարակության տեղեկացման նպատակով մշակվել է հասարակական իրազեկման ռազմավարության ծրագիր, ընթացքի մեջ են ՊՆ առընթեր Հասարակական խորհրդի ստեղծման, գորակոչային համակարգի բարելավման, պաշտպանական պլանավորման ու ռազմական փոխգործակցության կատարելագործմանն ուղղված բարեփոխումները և այլն:

2. Հատկանշական է, որ այս և մյուս գործընթացներն ուղեկցվում էին հանրապետության զինված ուժերի տարվա պատրաստության պլանով նախատեսված համաբանակային կարևոր նշանակության տարաբնույթ միջոցառումների իրականացմամբ: Անցնող տարում առաջնորդվելով «ՀՀ ՁՈՒ պատրաստությանը՝ նոր որակ, պաշտպանական բարեփոխումներին՝ հաստատուն ընթացք» կարգախոսով՝ բանակի անձնակազմը կարողացավ իր անդուլ և քրտնաջան ծառայության շնորհիվ հասնել որոշակի հաջողությունների: Առաջընթաց արձանագրվեց գրեթե բոլոր ուղղություններում. կատարելագործվեց բանակի մարտական, զորահավաքային, շտաբային և հրամանատարական պատրաստությունը, շարունակական աշխատանք տարվեց առաջնային գծի ինժեներական կառավորման ուղղությամբ, ինչը, բնականաբար, իր դրական ազդեցությունն ունեցավ մարտական հերթապահության կրման որակի վրա, բարելավման միտում գրանցվեց անձնակազմի ուսուցման և դաստիարակության ոլորտում, ամուր հիմքերի վրա դրվեց նյութատեխնիկական ապահովման, զորքերի բնակավորման, զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական բարելավման գործընթացը:

3. Հատուկ շեշտադրման են արժանի նաև ԱՊՀ և ՀԱՊԿ-ի անդամ երկրների,

ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ընդլայնման և փոխընդհանուր քաղաքականության շրջանակում ՀՀ զինված ուժերի դրսևորած ակտիվ կառուցողական հարաբերությունները, որոնց հաստատումն են «РУБЕЖ 2008» («Բնագիծ 2008») և ՀԱՅԱՍՏԱՆ–ՆԱՏՕ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրով անցկացված «Համատեղ աղեղ» («Cooperative longbow») և «Համատեղ նիզակակիր» («Cooperative lancer») գորախաղերը: Բացի վերոնշյալից, համաձայն ռազմական փոխգործակցության վերաբերյալ առկա պայմանավորվածության, մենք շարունակել ենք ընդլայնել քաղաքական երկխոսությունը ՆԱՏՕ-ի հետ և միաժամանակ խաղաղապահ գումարտակով ու մի շարք այլ ուժերով մասնակցել «Պլանավորման և վերանայման գործընթացին»: Հպարտությամբ կարող ենք ընդգծել, որ խաղաղության և անվտանգության ապահովման միջազգային գործողություններին (Կոսովո, Իրաք) ՀՀ զինված ուժերի խաղաղապահ ստորաբաժանումները իրենց դրսևորել են լավագույն կողմերով և արժանացել Միացյալ ուժերի հրամանատարության բարձր գնահատականին, ու երբ հոկտեմբեր ամսում Կոսովո կատարած իմ այցի ժամանակ ամերիկյան պատասխանատվության գոտու գորախմբի հրամանատար գեներալ Քեյնին խնդրեցի անկեղծորեն կարծիք հայտնել մեր զինծառայողների պատրաստվածության վերաբերյալ, նա խոստովանեց, որ շատ կուզենար իր կողքին նման զինվորներ ունենալ:

4. Այն, որ անցնող տարում ինչպես ներքանակային, այնպես էլ ռազմական համագործակցության ոլորտում մեր հանրապետության զինված ուժերի ունեցած ձեռքբերումները բավականին հուսադրող են, ինքնին փաստ է և հիմնավորվում է տարածաշրջանում պահպանված հարաբերական խաղաղության ու միջազգային ասպարեզում նրա հեղինակության աստիճանական բարձրացման իրողություններով: Սակայն այս ամենից եզրակացնել, որ 2008 թ. բանակային տարին գերծ է եղել թերացումներից, ամենևին էլ ճիշտ չէր լինի: Ցավոք, գրանցվեցին բազում կարգապահական խախտումներ, արտակարգ պատահարներ, ինքնախեղման դեպքեր: Սակայն ունեցած բացթողումներն ուռճացնելու ճանապարհով փորձել սովերել ընթացիկ այն հաջողությունները, որոնք մեզ կօգնեն արժանապատվորեն հաղթահարել առկա և սպասվող դժվարությունները, անշուշտ ճիշտ չէր լինի: Եկեք պարզապես հիմք ընդունենք ՀՀ Նախագահ, Գերագույն գլխավոր հրամանատարի հետևյալ միտքը և առաջնորդվենք այդ տրամաբանությամբ. «Այսօր առավելապես պետք է կենտրոնանանք ապագայի վրա, չփոշիացնենք մեր կարողություններն անցյալի բացթողումների և սխալների վերաբերյալ անհարկի բանավեճերում, այլ համագործակցենք ու կառուցողական երկխոսություն ծավալենք այն նպատակների և խնդիրների շուրջ, որոնք վերաբերում են մեր ազգային-պետական առաջնահերթություններին և միտված են ապագայի կերտմանը»: Այո՛, ձեռնպահ մնանք հենց անհարկի բանավեճերից ու կուլիսային բամբասանքներից և հարազատենք մեկ գործելաոճ, այն է՝ ապրենք ու գործենք **զինվորականին վայել ազնվությամբ**:

Հարգելի՛ համաժառայակիցներ, իմ խորին համոզմամբ, ցանկացած բնագավառում հաջողության հասնելու համար առաջնահերթ նախապայման են հանդիսանում նպատակի հանդեպ ունեցած **հավաստ** ու հանուն դրան գործելու **կամք**: Այս որակների առկայությունը զինվորական մարդու մեջ առավել քան անհրաժեշտություն է,

քանզի նրան է վստահված իրականացնելու ամենավեհ առաքելությունը՝ ՀԱՅԲԵՆԻՔԻ պաշտպանությունը: Եվ զինվորականին հենց այս հատկանիշներն են, որ վճռական պահերին օգնության են հասնում պատերազմի դաշտում՝ այնտեղ, որտեղ և ամենաձայրահեղ պայմաններում այնքա՛ն ցայտուն կերպով ընդգծվում են բոլոր մարդկանց բոլոր որակները՝ կամային, անձնվեր մարդուն մղելով սխրագործության: Վերջերս հնչող ռազմատենչ հայտարարություններ, պատերազմի վերսկսման մասին շրջանառող լուրեր լսելիս պետք է հիշել, որ, ի վերջո, պարտադրված պատերազմը մենք ընդունել ենք պարզ ճակատով և շնորհիվ **ազգային համախմբվածության** դուրս ենք եկել պատվով: Եվ չնայած պատերազմը կործանարար է, սաստիկ դաժան և պատճառում է մեզ պարզապես անփոխարինելի կորուստներ, այն, այնուամենայնիվ, ստիպում է, որ մարդկանց սրտերում աստվածային կայծ բոցավառվի ու բռնկվի կենդանի հրով, և թույլ է տալիս նրանց հասնել հերոսության բարձունքներին, ամբողջությամբ ու անշահախնդրորեն նվիրվել իրենց պարտքին, որակներ, որոնք, հնարավոր է, երբեք չէին բացահայտվի նույն մարդկանց մոտ խաղաղ ժամանակ: Ուրեմն, ինչո՞ւ վախենանք. եթե պետք լինի, նորից կկռվենք՝ պայքարելով սեփական իրավացիության գիտակցությամբ և հաղթանակի անխախտ համոզվածությամբ:

Կարծում եմ, որ ոչ ոք չի կասկածում, որ եթե չունենայինք պայքարելու կամք, հաղթելու համար անհրաժեշտ որակներ մեր երեկվա ազատամարտում, միանշանակ կունենայինք պարտված ու հայաթափ Արցախ: Հավատն ու գործելու կամքն են, որ բանակը կարող են տանել հզորացման ու նորանոր հաղթանակների, երկիրը դարձնել անխոցելի, ժողովուրդը՝ ազատ և հպարտ... Ուրեմն զինվենք **հավատով** ու **կամքով** և աշխատենք գալիք՝ 2009 թ., բանակային տարում անել ավելին, քան կատարել ենք 2008 թ., իսկ անելիքները, իրոք որ շատ են և անչափ կարևոր:

1. Սկզբից ևեթ ասեմ, որ նոր տարում նույնպես առաջնորդվելու ենք 2008 թվականին որդեգրած «ՀՀ ՁՈՒ պատրաստությանը՝ նոր որակ, պաշտպանական բարեփոխումներին՝ հաստատուն ընթացք» կարգախոսով, իսկ բանակային նոր տարվա գլխավոր խնդիրները տակավին լինելու են ռազմական ներուժի կատարելագործումը, բանակային տնտեսության աստիճանական զարգացումը, զորահավաքային ռեսուրսների հետ կազմակերպվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը, ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակային իրականացումը և, անկասկած, հանրապետության զինված ուժերի պաշտպանական բարեփոխումների 2007–2015 թթ. աշխատանքային ծրագրի ժամանակացույցով նախատեսված միջոցառումների շարունակական ու հետևողական կենսագործումը: Նպատակասլաց աշխատանք է սպասվում ՀՀ ռազմական դոկտրինին կից փակ հավելվածների մշակման, «Պաշտպանության մասին», «Զինվորական ծառայություն անցնելու մասին» և «Զինապարտության մասին» ՀՀ օրենքների վերանայման, ՀՀ Սահմանադրության պահանջներին պաշտպանական ոլորտի իրավական ակտերի համապատասխանեցման, ՁՈՒ-ի կառավարման համակարգի վերանայման և բարեփոխման, անձնակազմի ուսուցման և կառավարման, ռազմական փոխգործակցության, ռազմաարդյունաբերական համակարգի բարելավման և այլ ուղղություններով: Այս հիմնարար փաստաթղթերի մշակումն ու ընդունումը նպատակաուղղված են բանակային ոլորտների կենսագործունեության թարմացմանն ու

դրանց արդյունավետության բարձրացմանը: Սակայն ասել, որ միայն օրենսդրական և իրավական հիմնադրույթների ընդունումը բավարար է բարեփոխումները հաջողությամբ կյանքի կոչելու համար, իրատեսական չէր լինի: Այս գործընթացի վերջնական իրականացման կենտրոնական դերակատարությունը վերապահված է մեզմից յուրաքանչյուրին, ինչը ենթադրում է ամենօրյա նվիրական ծառայություն հանուն մեր բանակի հզորացման և մարտունակության բարձրացման:

2. Պաշտպանական բարեփոխումներին զուգընթաց՝ մենք անհրաժեշտաբար պետք է հետևողական աշխատանք տանենք հանրապետության զինված ուժերի գործնական պատրաստության առաջընթացն ապահովելու ուղղությամբ: Իսկ դա նշանակում է ուշադրության կենտրոնում պահել զինծառայողների գաղափարական և մասնագիտական որակների կատարելագործման, կրտսեր, միջին և բարձր օդակի հրամանատարների դերի բարձրացման, միջանձնային փոխհարաբերություններում զինվորական կանոնադրության և զինվորական ընկերակազմության զուգակցման, բանակաշինության մեջ հայրենական ու օտարերկրյա ռազմարվեստի ուսանելի փորձի կիրառման, գրագետ զինվորական կադրերի պատրաստման և վերջիններիս ներուժի նպատակային օգտագործման ու էլի մի շարք ուղղություններով նախատեսվող գործընթացների համալիրը՝ հասնելով զինծառայողների միջավայրում առողջ մթնոլորտի, բարձր տրամադրության ու միմյանց նկատմամբ վստահության ձևավորմանը, այսինքն՝ այնպիսի պայմանների ստեղծմանը, երբ ծառայությունը ոչ թե դժվարություն ու անհարմարություն, այլ հաճելի ու դյուրին պարտականություն է, տիրող իրավիճակը՝ գոհացուցիչ ու դուրեկան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոհիշյալ ոլորտներում մենք արդեն իսկ ունենք կատարված բավականին աշխատանք՝ այսօր մեզ անհրաժեշտ է բոլոր հնարավորությունները կիրառել այն կատարելագործելու և բանակի շարունակական առաջընթացն ապահովելու համար:

Իմ զինվորական ծառայության ողջ ընթացքում՝ դա լինի նախկին խորհրդային բանակում թե Հայոց զինված ուժերի շարքերում, ես եկել եմ այն համոզման, որ ցանկացած բանակի մարտունակության բարձրացման ամենագլխավոր ու թերևս անփոխարինելի գործոնը եղել ու մնում է **սզնիվ գաղափարներով բրծված** և իր ծառայողական ու մասնագիտական պարտականություններին լավագույնս տիրապետող զինվորը: Նա, ով գիտակցում է իր ծառայության իմաստը և դրան վերաբերվում հարգանքով ու պատասխանատվության բարձր զգացումով: Իսկ դաստիարակել նման որակներով օժտված զինվոր նշանակում է նախ ինքդ լինել այդպիսին և անձնական օրինակով նրան մղել կատարելության: Ասել է թե՛ հասկանալ, նոր միայն հասկացնել, որ Հայոց բանակը մեր ժողովրդից սերված արժանապատիվ զավակների այն ընտանիքն է, ուր իշխողը սուկ փոխադարձ **հարգանքն** ու **սերն** է, **վստահությունը** մեկը մյուսի հանդեպ և ո՛չ այլախոհությունն ու հատվածականությունը:

Ես հեռու եմ ձեզ խրատներ կարդալու մտքից, քանի որ լավ գիտեմ, որ դուք բացարձակ դրանց կարիքը չունեք: Դա երբեք չեմ արել նաև իմ երեք որդիների պարագայում՝ մշտապես ջանալով, որ իմ վարքն ու արարքները նրանց համար ծառայեն կենդանի օրինակ: Նույնն էլ ես՝ որպես Պաշտպանության նախարար, պահանջում եմ բոլոր հրամանատարներից իրենց ենթակաների հետ հարաբերվելիս: Դա երբեք չի

ենթադրում, որ բանակում պետք է «ախպերջանություն» տիրի: Համոզված եղեք, որ միմյանց նկատմամբ հարգանքը բնավ չի բացառում խստությունն ու երկաթյա կարգապահությունը, որոնք, ինչպես ցույց է տալիս կյանքը, զինվորի համար երբևէ չպետք է ծանր բեռ լինեն՝ ի վերջո առաջացնելով հոգնություն ու դժկամություն հրամանատարի և ընդհանրապես ծառայության նկատմամբ: Կարգապահությունը, պատասխանատվությունն ու ներքին մտազգաստությունը պետք է մտնեն զինվորականի արյան մեջ, դառնան **կենսաչե:** Իսկ դրան հասնելու համար պարտադիր է դաստիարակության այն սկզբունքի կիրառումը, որը սահմանում է *հնրակակների նկատմամբ պահանջկոտության զուգակցում նրանց անչնական արժանապատվության հարգանքի ու հոգաբարության հեղ:*

Դուք բոլորդ էլ անշուշտ գիտեք, որ ռուս մեծ հրամանատար Ալեքսանդր Մուվորովը, ում տատիկը հայ էր, «Հաղթելու արվեստը» հիանալի գրքի հեղինակն է, գիրք, որում այսօր էլ ցանկացած զինվորական կարող է գտնել իր համար անգնահատելի խորհուրդներ: Դրանցից տպավորիչ է հայտնի ռազմական գործչի հետևյալ միտքը. **«Դժվար է ուսման մեջ, հեշտ՝ մարտի դասչում»:** Եվ ես համոզված եմ, որ այս փիլիսոփայական միտքը գալիս է ռազմական իրականության խորքերից և մեզ համոզում, որ եթե անգամ զինվորական կարգապահությունը ծանր է, ապա դա վահանի ծանրություն է, այլ ոչ թե լուծ:

Դժվար է չհամաձայնել այն մտքի հետ, որ Հայաստանը, լինելով տարածքով և բնակչության թվաքանակով անհամեմատ փոքր երկիր, ունի այդ հանգամանքներով պայմանավորված մի շարք առանձնահատկություններ, որոնք այս կամ այն ձևով իրենց ազդեցությունն են ունենում նաև հանրապետության զինված ուժերում ընթացող զարգացումների վրա: Դրանցից թերևս ամենատարածվածը մարդկանց միջև առկա բարեկամական կամ ազգակցական կապերն են, որոնք բանակում չարաշահելու դեպքում շատ հաճախ բերում են բացասական հետևանքների, իսկ ավելի կոնկրետ՝ ծնում այսպես կոչված **«արտոնյալների խավ»**, ինչը ոչ միայն խաթարում է տվյալ զորամասի, այլև, վերջնական հաշվով, ողջ զինված ուժերի մարտունակությունը... Հասկանանք, որ հովանավորությամբ ծառայող զինվորը չի կարող լինել այն երաշխավորը, որից ժողովուրդը հայցում է իր անվտանգությունը: Բացառենք «արտոնյալների» ներկայությունը մեր շարքերում և պարտականությունները կատարենք ազնիվ ու արդար կերպով: Այստեղ երևի թե տեղին կլինի նորից մեջբերել Մուվորովի խոսքերը. **«Ծառայությունն ու բարեկամությունը երկու զուգահեռ գծեր են, որոնք երբևէ չեն հասկանում...»:**

Այն, որ մեր ազգային առանձնահատկությունների ներկայանալու ռազմական արվեստը միշտ էլ ունեցել է իր ուրույն գույնը, կասկածի ենթակա չէ: Վկան մեր ժողովրդի դարավոր պատմությունն է, այն զորավարական ու մարտավարական փայլուն հաջողությունները, որոնք կերտվել են հայ մարդու զինական տաղանդի և ոգու շնորհիվ: Եվ ասիա ունենալ այսօրինակ փայլատակումներ ու չչարունակել ներկայի համատեքստում իմաստավորել դրանց վեհությունը առնվազն պատիվ չէր բերի ոչ միայն մեզ, այլ նաև մեր հերոս նախորդներին: Այստեղ հատկապես մեծ աշխատանք ունեն կատարելու բոլոր օղակի հրամանատարները, քանզի առաջին հերթին հենց նրանց է վստահված կյանքի կոչել այն գործընթացները, որոնք նախա-

տեսված են տարվա պատրաստության պլանով: Իսկ դրանք արդյունավետորեն իրականացնելու համար առաջնահերթ անհրաժեշտություն է ունենալ մասնագիտորեն գրագետ և իր ենթակային դաստիարակելու ընդունակ բարձրակարգ հրամանատարական կազմ, որի ուղղությամբ մենք դեռևս անելիքներ ունենք: Նշեն, որ ՀՀ Պաշտպանական բարեփոխումների 2009 թ. աշխատանքային ծրագրի շրջանակում նախատեսվում է որոշակի բարելավումներ իրականացնել հանրապետության ռազմաուսումնական հաստատությունների դասախոսական կազմի վերապատրաստման (արտերկրում), ՌՌԻՀ-երի ուսումնական ծրագրերի վերանայման և նոր պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև զինվորական պաշտոնի նշանակման և առաջխաղացման թափանցիկությունն ապահովող մեխանիզմների հստակեցման ուղղությամբ: Այս և մյուս բարեփոխումները գլխավորապես նպատակաուղղված են գրագետ և հրամանատարական համապատասխան ընդունակություններով օժտված սպայակազմի պատրաստմանը, ինչը, անտարակույս, իր դրական ազդեցությունը կունենա բանակային անձնակազմի ուսուցման և կառավարման համակարգի վրա: Սակայն ասել, որ միայն վերոնշյալ ձեռնարկումները հնարավորություն կտան լրիվությամբ լուծել այս ոլորտում առկա հիմնախնդիրները, ճիշտ չէր լինի: Անչափ կարևոր է, որ բացի հրամանատարական պատրաստությանն ուղղված պլանային գործընթացների իրականացումից՝ սպան ունենա սեփական ընդունակություններն անընդհատ կատարելագործելու անձնական նախաձեռնություն, միջավայրում ճիշտ կողմնորոշվելու, միջանձնային փոխհարաբերություններում կանոնադրական պահանջներն ու զինվորական ընկերակազմության սկզբունքները զուգակցելու կարողություն: Հրամանատարն իր մարդկային ծառայողական ու մասնագիտական որակներով պետք է այնպիսի հեղինակություն վայելի ենթակաների շրջանում, որ վերջիններիս համար նրա կողմից տրված յուրաքանչյուր հրաման կամ հնչած խոսք լինի կատարման ենթակա և հետագա անելիքների ուղեցույց:

Միանշանակ անթույլատրելի է զինվորին հայտնելով կամ ծեծի ենթարկելով ստիպել կատարել որևէ հրաման, անգամ եթե այդ հրամանը վճռում է տվյալ պահի համար հույժ կարևոր հարց: Գուցե նման մեթոդի կիրառումը տվյալ պահին իրեն «արդարացնի», բայց, հավատացեք, ապագա համատեղ ծառայության ընթացքում դա ձեզ համար կատեղծի ավելի լուրջ հիմնախնդիր, քան այն հարցն է, որը դուք «լուծել» եք ծեծի կամ հայտնանքի «օգնությամբ»: Չգտեք բացառել կոպտությունը, հարգեք ու վստահեք դիմացինին այնպես, որ նա զգա ձեր ազնիվ ու մարդկային վերաբերմունքի ջերմությունը, և դուք արդյունքում կստանաք ամենայն լավն ու անհրաժեշտը, ինչը կարելի է ակնկալել լավագույն զինվորից:

Պարզապես պետք է գիտակցել, թե ինչքան բարձր է ամուր զինվորական ընկերության գինն ու նշանակությունը, որը մեր նախնիները հավասարեցնում էին իսկական գենքի: Այնտեղ, որտեղ չկա ամուր ընկերություն, հենց այդտեղ են հայտնվում այնպիսի վնասակար երևույթի բացիլներ, ինչպիսին է պառակտումը: Եվ այս ցավոտ խնդրի գոյությունը, ավաղ, նորություն չէ:

Եկեք հիշենք մեր ազգի համար այնքան բախտորոշ Ավարայրի ճակատամարտի ժամանակները: Այն ժամանակ՝ 5-րդ դարում, երբ պարսիկները հավատափոխություն էին պահանջում, յուրաքանչյուր հայ գիտակցում էր, որ հարցը միայն կրո-



նական չէր, այլ նժարին դրված էր ազգի լինել-չլինելու հարցը: Եվ ահա Ավարայրի ճակատամարտի մասնակից, փիլիսոփա, պատմաբան և հրապարակախոս Եղիշեի հրաշալի գրքից իմանում ենք, որ ազգի համար այդ ճակատագրական պահին, բացի արտաքին թշնամուց, գոյություն է ունեցել նաև ներքին թշնամի. դա պառակտումն էր: Եղիշեն, թվում է, դարերի խորքից մեզ զգուշացնում է, որ ինչքան էլ ամուր լինեն «հայրենի ամրոցի» պարիսպները, ինչ պատվախնդրությամբ էլ որ մարտնչեն նրա զավակները, երբեք չարիքից չես խուսափի, եթե «ամրոց» խուժի շարաքաստիկ պառակտումը, եթե, Աստված չանի, գորքի շարքերը ներթափանցեն այնպիսի վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են եասիրությունն ու թուլամորթությունը: Եղիշեն գրում է. «Եթե պառակտումը սողալով թափանցում է ներս և խախտում է միակամությունն ու միաբանությունը, ապա ի չիք է դառնում նաև ի վերուստ տրված հաջողությունը»: Իմանալով, որ ինչ-որ մի թևում պառակտում է տիրում՝ թշնամին այնտեղ համարձակորեն է գործում: Եվ նույն Եղիշեն, ում անվանել են «Ավարայրի տխակ», մի այլ տեղում պատմում է, թե ինչպես էր թշնամին վախենում հայերի միաբանությունից. «Արտաքին թշնամու աչքերում մեր միաբանությունը վտանգավոր էր թվում, այնպես որ երկու-երեք անգամ նրանք նույնիսկ չհամարձակվեցին դուրս գալ մեր դեմ»:

Հաջորդ կարևոր ուղղությունը, որ ես կցանկանայի առանձնացնել ինչպես 2009 թ. բանակային տարվա, այնպես էլ հանրապետության զինված ուժերի հետագա գործունեության համար ընդհանրապես, բանակ–հասարակություն փոխադարձ կապի շարունակական ամրապնդման գործընթացն է: Կյանքը ցույց է տալիս, որ այն երկրում, որտեղ պատշաճ հիմքերի վրա է դրված բանակի և ժողովրդի միջև փոխհամագործակցությունը, այնտեղ զինված ուժերի մարտունակությունն ուղիղ համեմատական է պետության լիարժեք պաշտպանվածությանը: Դրանում մենք համոզվել ենք Հայոց բանակի ստեղծման առաջին իսկ օրերից, երբ նախքան կանոնավոր զինուժի կազմավորումը հայրենիքի պաշտպանությանը կամավորագրվեց ողջ ժողովուրդը: Դա, թերևս, Հայաստանի նորանկախ հանրապետության պատմության մեջ բանակի և ժողովրդի միասնության անդրանիկ գործնական դրսևորումն էր, որն իր հաղթական շարունակությունն ունեցավ նաև հետագա տարիներին: Այսօր առանց երկմտելու կարող ենք արձանագրել, որ շնորհիվ հայության **հավաքական կամքի** մենք արդեն ունենք կայացած **ժողովրդական բանակ**: Մի իրողություն, որը մեզ պարտավորեցնում է մշտապես լինել փոխադարձ ուշադրության կենտրոնում և մեր կատարածով անընդհատ բազմապատկել Հայոց պետականության հզորությունը: Իսկ ի՞նչ է հարկավոր դրա համար, և ո՞րն է մեր հետագա անելիքը:

Հիմք ընդունելով բանակ–ժողովուրդ փոխադարձ կապի ամրապնդման ուղղությամբ մինչ այժմ ունեցած հաջողությունները՝ հանրապետության զինված ուժերը այսուհետ ևս պետք է շարունակեն ապահովել կառուցողական հարաբերությունները հասարակության հետ: Դրա լավագույն միջոցներից մեկը ՀՀ պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգի դրույթների գործնական կիրառումն է, ինչը հնարավորություն կտա առավել թափանցիկ դարձնել Ձինված ուժերը, կմեծացնի բանակաշինության գործընթացի վերաբերյալ հասարակության տեղեկացվածության աստիճանը, ինչպես նաև պայմաններ կստեղծի բանակում քաղաքացիական վերահսկողության լծակների կիրառման համար:

Այս տեսանկյունից անչափ կարևոր է հասարակության երեք խավերի հետ տարվելիք մեր աշխատանքը՝ դպրոցականների ու երիտասարդների, բանակի, վետերանների ու զորահավաքային ռեսուրսի: Պետք է ունենալ դպրոցականի ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված աշխատանքների հավակնոտ նախագիծ, որի գլխավոր նպատակը պետք է լինի հայ **երեխայից լավ զինվոր չեավորելը, լավ զինվորից՝ հայրենապաշտ զորահավաքային ռեսուրս**, ով հարկ եղած դեպքում կդառնա **հայրենիքը խիզախաբար պաշտպանող մարտիկ**: Չինված ուժերի համապատասխան վարչությունների և բաժինների ուշադրությունն են հրավիրում դպրոցներում, բարձրագույն և այլ ուսումնական հաստատություններում պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ անցկացվող տարաբնույթ միջոցառումների, նպատակային փոխայցելությունների կազմակերպման վրա: Հատկապես կարևորում են նշված ուսումնական հաստատություններում ազգային հերոսների անվան դասարանների ու լսարանների պատրաստումը, նախնական զինվորական ծառայության նախապատրաստման ծրագրի հետևողական իրականացումը և ուսումնանյութական բազայի ստեղծումը: Բանակ – հասարակություն կապի վերաբերյալ խոսելիս անհնար է չանդրադառնալ հայրենասիրական միությունների, Արցախյան պատերազմի բովից ծնված հասարակական կազմակերպությունների հետ Չինված ուժերի համագործակցությունը, պատերազմի հաշմանդամներին, զոհված կամ անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքներին ու հարազատներին հատկացվող համակողմանի (ֆինանսական, բարոյական և այլն) օժանդակությանը: Չպետք է մոռանալ, որ հենց նման նախաձեռնություններն են հասարակության մեջ բարձր գնահատական ձևավորում Բանակի մասին, ստեղծում փոխադարձ վստահության մթնոլորտ: Իսկ այս բոլորի համատեքստում ցանկանում են հիշեցնել ձեզ այն հայտնի ճշմարտությունը, որ **ամեն ինչի հիմքն է կարևոր**, և փառք ու պատիվ մատուցելով Հայրենական մեծ պատերազմի մասնակից հայ հերոսներին՝ հավաստել, որ մերօրյա բոլոր հաջողությունների, մեր մեծ ու փոքր հաղթանակների համար մենք պարտական ենք հենց նրանց: **Ճանաչենք, մեծարենք ու ընդօրինակենք մեր մեծերին:**

Վերջում կուզեի առանձին դիմել ժամկետային զինծառայողներին: Սիրելի զինվորներ, ձեր ողջ գիտակցական կյանքն անցել է արդեն անկախ Հայաստանում. դա նշանակում է, որ անկախ Հայաստանի բանակում այսօր ծառայում է մի սերունդ, որը մեծացել է ազատ երկրում՝ չիմանալով, թե ինչ է պատերազմը: Դ-ա, իհարկե, մեծ երջանկություն է, բայց միևնույն ժամանակ մեծ պատասխանատվություն՝ անխուսափելիորեն ընկած ձեր՝ նոր սերնդի ուսերին: Ոչ որ անշուշտ չի պահանջում, որ դուք ձեզ հետագայում ամբողջությամբ նվիրեք բանակին, զինվորական կյանքին: Դ-ա, ինչպես ասում են, նախախնամության ձեռքերում է: Ես, օրինակ, հպարտանում եմ, որ իմ կյանքը այնպես դասավորվեց, որ դպրոցն ավարտելուց հետո հավանաբար Աստծո կամոք ինձ ուղղակի «ձգեց» ռազմական ուսումնարանը: Անչափ հպարտ ու գոհ եմ, որ իմ ժողովրդի համար ճակատագրական պահին՝ Արցախյան շարժման սկզբում, ես արդեն արհեստավարժ զինվորական էի՝ գումարտակի հրամանատար, և սովետական բանակում շարունակելով ծառայությունը՝ ներգրավվել էի մեր ազգային շարժման մեջ որպես պատրաստի մարտական սպա: Իսկ այժմ ձեր հրամանա-

տարներից շատերը արհեստավարժ զինվորականներ են դարձել՝ ավարտելով արդեն մեր հարազատ, ազգային բարձրագույն ռազմական ուսումնական հաստատությունը:

Ես այսօր՝ Նոր տարվա շեմին, որոշեցի անդրադառնալ այս ամենին, որպեսզի ասեմ ձեզ երևի ամենակարևորի մասին: Այն մասին, որ դուք՝ նոր սերունդը՝ մեծացած անկախ Հայաստանում, անպայման պետք է իմանաք ոչ միայն հին Հայաստանի պատմությունը, որը անցել էք դպրոցում, այլև նորագույն պատմությունը: Պետք է իմանաք այն մասին, թե ինչ անչափելի գնով է մեզ տրվել մեր հաղթանակը: Պետք է ճանաչեք ինչպես ազատարար Հայրենական պատերազմի հռչակավոր հայորդիներին, այնպես էլ ոչ պակաս ազատարար Արցախյան գոյապայքարի և ՀՀ բնակավայրերի ու սահմանների պաշտպանության ժամանակ փառավորված հերոսներին: Նախկինի շատ հրամանատարներ իրենց այս կամ այն մարտում հաղթանակից հետո խոստովանում էին, որ պատերազմը հաղթել է ոչ միայն ռազմավարությունը, այլև... պատմության ուսուցիչը:

Կարող եք իհարկե վիճել, թե ինչու չարչարվել գիշեր ու ցերեկ, ընդհանրապես՝ ինչու ծառայել ամբողջ երկու տարի, եթե, այնուամենայնիվ, հիմա խաղաղություն է: Եվ ես ձեզ կպատասխանեմ, որ **խաղաղություն է միմիայն այն պատճառով, որ դուք հիմա գրկվում եք շարքում: Բացի այդ, բռնամին գիպի, որ դուք պատրաստ եք ցանկացած պահի պատասխանել ցանկացած ուրվագծության, վստահ է, որ սպանալու է արժանի հակահարված:** Եվ ոչ միայն դա: Չէ՞ որ այդ մենք չենք ասել, որ՝ «Եթե ուզում ես խաղաղություն, պատրաստ եղիր պատերազմի»: Իսկ երկու տարի բարեխղճորեն ծառայելով՝ դուք ձեռք եք բերում մարտական փորձ և տղամարդուն բնորոշ կամային հատկանիշներ ձեր ամբողջ կյանքի համար: Եվ եթե, Աստված չանի, Հայրենիքը «ստիպված կլինի կանչել» ձեզ օգնության, ապա ամենակարճ ժամկետում դուք կվերականգնեք նախկինում կուտակած ձեր անգին փորձը:

Միբելի՛ զինակիցներ, տարեմուտի իմ խոսքը ամփոփելուց առաջ ուզում եմ հույս հայտնել, որ այն ամենը, ինչը փորձեցի համառոտ ներկայացնել ձեր ուշադրությանը, մտորումների և համապատասխան եզրահանգումների տեղիք կտա: Հավատացած եմ, որ մեզնից յուրաքանչյուրը, գիտակցելով իր տեղն ու դերը Հայոց պետականության պաշտպանության և անվտանգության ապահովման գործում, կանի իրենից կախված հնարավորը, որպեսզի մեր երկրի զինված ուժերը 2009 թ. լինեն առավել մարտունակ, քան անցնող տարում: Կցանկանալի, որ այս հանգամանքը դուք պայմանավորեիք ոչ միայն տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումների ներկա վիճակով, այլև բոլոր ժամանակների համար հզոր Հայկական բանակ ունենալու անհրաժեշտությամբ: Հիշենք ու հարազատենք մեկ ճշմարտություն և միշտ առաջնորդվենք դրանից բխող հետևյալ սկզբունքով՝ «Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ե Ն Զ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ը՝ այժմ և միշտ...»:

Անխախտ գաղափարակցության հույսով  
և համատեղ ձեռքբերումների համոզվածությամբ՝



Ս. ՕՇԱՆՅԱՆ

## НОВОГОДНЕЕ 2009 ГОДА ОБРАЩЕНИЕ МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ СЕЙРАНА ОГАНЯНА К ЛИЧНОМУ СОСТАВУ ВС РА

Уважаемые соратники!

Завершается очередной армейский год.

Сохраняя приверженность уже ставшей для меня традиционной форме предновогоднего обращения к личному составу\*, сегодня я впервые как Министр Оборона РА имею честь разделить с вами мои мысли и раздумья по поводу нашей деятельности в 2008 году, а также предусмотренной в наступающем армейском году. Считаю, что благодаря такому общению наши взаимоотношения станут более непосредственными и искренними, чего не всегда удастся достичь во время официальных встреч, общеармейских совещаний или различных мероприятий. Хотелось бы также отметить, что то, о чем я буду говорить, равным образом относится к каждому из нас и преследует только одну конечную цель—сделать нашу АРМИЮ более мощной и боеспособной, а ОТЕЧЕСТВО—более безопасным, чем сегодня.

Итак, в чем смысл нашей цели, что сделано нами на сегодняшний день для ее достижения и какие процессы предусматриваются в ближайшем будущем? Прежде всего во избежание повтора отмечу, что о нашей деятельности на нынешнем этапе истории армянского народа можно прочесть в моей книге «Армия XXI века» и убедиться, что все, чего мы достигли на сегодня, приобретено благодаря консолидированным усилиям всего народа, и никто из нас не может приписать это лишь себе—просто мы внесли свою посильную лепту в **эти свершения**. А сейчас, прежде чем ответить на вышеупомянутые вопросы, по моему глубокому убеждению, необходимо рассмотреть некоторые геополитические характеристики Республики Армения и обстановки вокруг нее.

Очевидно, что как для всего населения нашей республики, так и для ее Вооруженных сил 2008 год был особенным в плане обилия внутриполитических и региональных событий. Достаточно вспомнить напряженные дни до и после президентских выборов в РА, нападение азербайджанских вооруженных сил на наши оборонительные позиции близ села Левонарх Мартакертского района в ночь с 3-го на 4-ое марта, обострение ситуации противником в направлении села Чинар в июне и обстрел наших боевых позиций и мирного населения, попытку проникновения дивер-

---

\* Так я поступал в 2000—2007 гг., когда занимал должность командующего Армией Оборона (НКР).

сионно-разведывательной группы в Гадрутском районе 16 ноября, хотя и безосновательную, но до сих пор дающую о себе знать атмосферу определенного недоверия в кругах общественности в связи с состоявшейся в начале ноября в Москве трехсторонней встречей Россия—Армения—Азербайджан, взрывоопасную ситуацию, сложившуюся в зоне грузино-осетинского конфликта в августе вследствие возобновления широко-масштабных боевых действий, а также ряд других событий и обстоятельств военно-политического значения. Из этого со всей очевидностью следует, что нужно приложить еще много усилий для обеспечения безопасности Армении и делать это с максимальной отдачей. А значит, при нынешнем состоянии региональных военно-политических процессов, когда между сторонами Карабахского конфликта не достигнуто полного согласия относительно принципов его политического урегулирования и Армения стоит перед рядом серьезных вызовов (блокада, внешнее давление, мировой экономический кризис, имеющие тенденцию к сглаживанию, но все еще существующие некоторые внутривнутриполитические разногласия и прочее), вопросом № 1 повестки дня строительства армянской государственности продолжает оставаться укрепление оборонной системы, **«главным, но не единственным звеном которой является армия...»**.

Исходя из этих реалий, прежде чем говорить о предстоящих задачах, вкратце рассмотрим процессы, осуществленные в сфере строительства ВС в 2008 году, отметим достижения и упущения и на основе сделанных выводов попытаемся предначертать путь создания более мощной и боеспособной армии.

1. а) Однозначно можем констатировать, что самым важным процессом уходящего армейского года было осуществление программы оборонных реформ, введенной в действие в Вооруженных силах республики еще в 2007 году. Данная программа обусловлена исключительной необходимостью иметь мощную, боеспособную и признаваемую международным оборонным сообществом армию. Кстати, некоторые люди придерживаются того превратного мнения, что оборонные реформы являются лишь стратегическим шагом в направлении сближения с Организацией Североатлантического Договора или адаптации образа действий ее вооруженных сил к Армянской армии. Считаю необходимым в ответ на подобные высказывания подчеркнуть, что они не только совершенно безосновательны, но и свидетельствуют о недостаточных представлениях относительно многовекторности оборонно-безопасностной политики РА.

б) Несмотря на то, что армянские Вооруженные силы, по мнению международных наблюдателей и независимых экспертов, являются одной из самых закаленных и боеспособных армий в регионе, прошедшей через горнило войны, имеющей богатый военный опыт, тем не менее время

ставит перед нами новые задачи и требования. Не учитывать всего этого и отказаться от мысли о применении лучшего опыта строительства ВС (в том числе и других государств) в целях укрепления собственных Вооруженных сил, по меньшей мере, было бы неправильно. Я уже говорил и сегодня повторяю: мы должны постоянно сознавать, что надо учиться как на опыте армий или вооруженных группировок сверхмощных и милитаризованных, так и малых государств. Очень важно все это делать не вслепую, а взвешенно, с учетом национальных особенностей.

в) Следует констатировать, что по задействию процесса реформирования до сегодняшнего дня было сделано достаточно. Доказательством тому служит наличие десятков разработанных и принятых законов, правовых актов и направляющих документов, которые постепенно внедряются в различных сферах жизнедеятельности Вооруженных сил. Сегодня уже получает практическое применение Закон РА «О специальной гражданской службе», устанавливается круг военных должностей, подлежащих конвертации в гражданские, в обучении и управлении личным составом используется международная система тестирования, делаются первые шаги по внедрению контрактной сержантской системы, в результате трансформаций системы прокуратуры создано следственное управление, в целях осведомления НС и общества разработана Концепция общественного информирования, продолжаются работы по созданию Общественного совета при МО, совершенствованию системы призыва, оборонного планирования и военного сотрудничества и т. д.

2. Примечательно, что параллельно с этими и другими процессами осуществлялись различные мероприятия важного всеармейского значения, предусмотренные годовым планом подготовки Вооруженных сил республики. В 2008 году личный состав армии под девизом «Подготовке ВС РА—новое качество, оборонным реформам—постоянное развитие» сумел благодаря непрестанной и самоотверженной службе достичь определенных успехов. Прогресс был зафиксирован почти по всем направлениям: была усовершенствована боевая, мобилизационная, штабная и командная подготовка армии, проведена целенаправленная работа по инженерному оборудованию передовой линии, что, естественно, положительно отразилось на качестве несения боевого дежурства. Намечались тенденции к улучшению положения в сфере обучения и воспитания личного состава, на прочные основы поставлен процесс материально-технического обеспечения, квартирования войск, улучшения социального положения военнослужащих и их семей.

3. Следует также особо отметить развитие продуктивных отношений Вооруженных сил РА в рамках расширения сотрудничества со странами-членами СНГ и ОДКБ, НАТО, а также многовекторной политики, подтверждением чему служат учения «Рубеж-2008» и проведенные по

программе «Партнерство ради мира» Армения—НАТО учения «Совместный лук» («Cooperative longbow») и «Совместный копьеносец» («Cooperative lancer»). Кроме того, по достигнутой договоренности о военном сотрудничестве мы продолжили расширение политического диалога с НАТО и одновременно в составе миротворческого батальона и ряда других сил приняли участие в «Процессе планирования и пересмотра». С гордостью можем отметить, что в международных операциях по обеспечению мира и безопасности (Косово, Ирак) миротворческие подразделения Вооруженных сил РА проявили себя с наилучшей стороны и удостоились высокой оценки Командования Объединенных сил. Когда в октябре, во время моего визита в Косово, я попросил командира войсковой группы в зоне американской ответственности генерала Кея откровенно высказаться о степени подготовленности наших военнослужащих, он признался, что очень хотел бы рядом с собой иметь таких воинов.

Հայաստանի շուրջ ձևավորված անվտանգության միջավայրից բխող բազմաթիվ համաչափ և անհամաչափ, տարածաշրջանային և արտատարածաշրջանային մարտահրավերների չեզոքացման խնդիրներով, ձևերով ու եղանակներով են մեծապես պայմանավորված ՀՀ պաշտպանական բարեփոխումների բնույթն ու բովանդակությունը, սկզբունքները, նպատակները և խնդիրները, ընդհանրապես՝ պաշտպանական համակարգի կառուցվածքն ու զարգացման հեռանկարները: Բարեփոխումների հիմնական նպատակները և խնդիրները ձևակերպված են «ՀՀ ռազմական դոկտրինում»<sup>1</sup>, իսկ դրանց հիմնավորումն ու մեկնաբանությունները տրված են ՀՀ պաշտպանության նախարարի մի շարք ելույթներում և ուղերձներում<sup>2</sup>:

Արդի պայմաններում հարկ է էապես վերաիմաստավորել անվտանգության վերաբերյալ ավանդական պատկերացումները՝ զգալի չափով ընդլայնելով անվտանգության, այդ թվում՝ պաշտպանության ոլորտին առնչվող, հարցերի շրջանակը: Դրա հետևանքով անհրաժեշտություն է ծագում վերանայելու ինչպես պետության պաշտպանական համակարգի առջև դրվող խնդիրների համալիրը, այնպես էլ զինված ուժերի կիրառման պայմաններն ու պահանջները, դրանց թվաքանակն ու կա-

<sup>1</sup> Տես «ՀՀ ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեքստեր», 2007, հմ. 4:

<sup>2</sup> Տես, օրինակ, *Ս. Մ. Օհանյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումներ. երկրորդ փուլ: «Հայկական բանակ», 2008, հմ. 2–3:



նուցվածքը, ռազմատեխնիկական քաղաքականությունը, մարտական պատրաստման բուն էությունն ու ուղղվածությունը:

Հայաստանի Հանրապետությունը, արտաքին անվտանգության ռազմավարության մեջ կիրառելով միջազգային ինտեգրման ու փոխլրացման սկզբունքները, ձգտում է արտաքին ռազմաքաղաքական հարաբերությունների բազմազանեցմամբ ու պաշտպանական համակարգի կատարելագործմամբ ապահովելու իր ռազմական անվտանգությունը<sup>3</sup>: Այդ նպատակով մենք որդեգրել ենք պաշտպանական ոլորտում շարունակական բարեփոխումների ռազմավարություն, որն իրականացնում ենք ազգային ինքնության պահպանման պայմանով՝ առաջնորդվելով ՀՀ շահերով, հենվելով առավելապես ազգային ներուժի վրա, միևնույն ժամանակ օգտագործելով միջազգային հանրության փորձն ու աջակցությունը: Այս համատեքստում շատ կարևոր են ազգային և միջազգային հնարավորությունների ճշգրիտ գնահատումն ու հարաբերակցումը:

Եթե, օրինակ, ռազմական անվտանգության ապահովման երաշխիքը մարտունակ, արդիական սպառազինությամբ զինված, բարձր մակարդակի մարտական ու բարոյահոգեբանական պատրաստություն ունեցող, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելու ունակ, ռազմական անվտանգության սպառնալիքների կանխմանն ու չեզոքացմանը պատրաստ Ձինված ուժերն են<sup>4</sup>, ապա ռազմական անվտանգության ապահովման գործում միջազգային հնարավորությունների կիրառումն արտահայտվում է անվտանգության համակարգերի շրջանակներում դաշնակցային և գործընկերային հարաբերությունների հաստատմամբ ու շարունակական զարգացմամբ: Դրա կարևոր բաղադրիչներն են, մի կողմից՝ համագործակցության զարգացումը ռազմավարական գործընկեր Ռուսաստանի Դաշնության հետ և անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը, մյուս կողմից՝ բարձր մակարդակի հարաբերությունների հաստատումը Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության և նրա անդամ պետությունների, ինչպես նաև Չինաստանի՝ որպես առանձին ուժային կենտրոնի հետ:

Այսպես. Հայաստանի Հանրապետությունը, հաշվի առնելով անվտանգության ապահովման գործում ռազմաքաղաքական շահերի ընդհանրությունը, ելնելով այս ուղղությամբ ջանքերի կենտրոնացման անհրաժեշտությունից, իր գործունեությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության հետ ներդաշնակեցնում է ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակման, տարածաշրջանային սկզբունքով անվտանգության համակարգի զարգացման, ԱՊՀ հակաօդային պաշտպանության համակարգի կատարելագործման, ռազմատեխնիկական համագործակցության, ռազմական ենթակառուցվածքների զարգացման, զինվորական կադրերի պատրաստման, ռազմական գիտության, միջազ-

<sup>3</sup> Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 30–45:

<sup>4</sup> Տես «ՀՀ ռազմական դոկտրին», էջ 34:

գային ահաբեկչության և այլ միջազգային հանցագործությունների դեմ պայքարի հարցերում:

Մինևույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունը, իր եվրոպական ինտեգրման քաղաքականությունից ելնելով, ակտիվ համագործակցություն է իրականացնում Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության և նրա անդամ գործընկեր պետությունների հետ՝ Եվրասատլանտյան գործընկերության խորհրդի (ԵԱԳԽ) և «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ) ծրագրի շրջանակներում: ՆԱՏՕ-ի հետ հեռանկարային և բարձր մակարդակի հարաբերություններ զարգացնելու և փոխգործողության կարողություններն ընդլայնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը ՆԱՏՕ-ի հետ իրականացնում է «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր» և մասնակցում է ՆԱՏՕ-ի «Պլանավորման և վերանայման գործընթացին», ինչպես նաև երկկողմ ռազմական համագործակցության ծրագրեր է իրականացնում ՆԱՏՕ-ի անդամ գործընկեր պետությունների հետ:

Ընդհանրապես, բարեփոխումները շարունակական գործընթաց են: Դրանք իրականացվում են բոլոր ոլորտներում և բոլոր երկրներում: Սակայն ժամանակ առ ժամանակ, մի շարք մարտահրավերների ու գործոնների բերումով, բարեփոխումներն ստանում են ավելի համընդհանուր և արմատական բնույթ: Որո՞նք են այդ հանգամանքները:

Առաջինը անվտանգության միջավայրի կտրուկ փոփոխությունն է: Այսօր մի շարք ոչ համաչափ սպառնալիքների ազդեցությամբ ամբողջ աշխարհում անվտանգության միջավայրը ենթարկվում է էական փոփոխությունների: Եվ օրինաչափ է, որ բոլոր մեծ ու փոքր պետություններում, միջազգային և տարածաշրջանային կառույցներում տեղի է ունենում անվտանգության հայեցակարգերի, սպառնալիքներին հակազդեցության ավանդական մեխանիզմների արդիականացում: Օրինակ՝ «ասառը պատերազմի» ավարտից հետո Կանադայի Չինված ուժերը ռազմավարական վերանայման արդյունքներով ամբողջությամբ հրաժարվեցին զրահատանկային ստորաբաժանումներից: Սակայն Աֆղանստանում իրականացվող միջազգային առաքելությանը մասնակցության հետևանքով ստեղծվեց նման ստորաբաժանումների վերականգնման անհրաժեշտություն:

Հարավային Կովկասում ևս անվտանգության միջավայրը զգալիորեն փոփոխվում է: Ընդ որում, այդ փոփոխությունների բնույթն ու մասշտաբները այնքան համընդհանուր և անկանխատեսելի են, որ ավելի ճիշտ է դրանք բնութագրել ոչ թե որպես առկա անվտանգության միջավայրի փոփոխություն, այլ նոր միջավայրի ձևավորում: Համապատասխանաբար, նույնքան հիմնարար բարեփոխումների անհրաժեշտություն ունեն նաև իրենց անվտանգության ապահովման վերաբերյալ տարածաշրջանային պետությունների պատկերացումները:

Պաշտպանական բարեփոխումների երկրորդ խթանը պետության քաղաքական ու տնտեսական զարգացմանը համարժեք պաշտպանական համակարգի ստեղծման անհրաժեշտությունն է: Մասնավորապես՝ Խորհրդային Միության փլուզումից և խորհրդային պլանային տնտեսության անկումից հետո հետխորհրդային

տարածքի բոլոր պետությունները ձեռնամուխ եղան իրենց պաշտպանական համակարգերի համապատասխանեցմանը շուկայական տնտեսության պահանջներին:

Հայաստանում ևս տեղի ունեցավ մնան գործընթաց: Բայց, ցավոք, հակամարտությունների և տարաբնույթ հակասությունների առկայության հետևանքով տարածաշրջանային պետությունների կայացումն ու տնտեսական զարգացումը հանգեցրեցին սպառազինությունների մրցավազքի, պատերազմի անմիջական վտանգի ստեղծման և առկա սպառնալիքների ընդլայնման: Այս հանգամանքն իր «ճշգրտումներն» է մտցնում պաշտպանական բարեփոխումների գործընթացում:

Հաջորդը ժողովրդավարացման գործընթացներն են: Ժողովրդավարական հաստատությունների կայացումն իր հետ բերում է այնպիսի հրամայականներ, որոնք ազդում են պաշտպանական համակարգի կառուցվածքի, գործունեության մեխանիզմների և մեթոդների վրա: Օրինակ՝ խորհրդային ժամանակաշրջանում միակուսակցական քաղաքական վերահսկողության տակ գտնվող զինված ուժերը բոլոր հետխորհրդային պետություններում ապաքաղաքականացվեցին՝ համապատասխանեցվելով ժողովրդավարական նորմերին:

ՀՀ պաշտպանական բարեփոխումների մի զգալի մասն ուղղված է հենց Ձինված ուժերում ժողովրդավարական նորմերի ներդրմանը, ինչն արտահայտվում է քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ստեղծմամբ և ընդլայնմամբ: Հայաստանի Հանրապետությունը հետևողական է Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների ապահովման խնդրում<sup>5</sup>: Թեև, ընդհանուր առմամբ, զինված ուժերի ժողովրդավարացումը նպաստում է դրանց մարտունակության մակարդակի բարձրացմանը, սակայն իր դասական իմաստով լիովին կիրառելի չէ և կարող է բացասաբար անդրադառնալ մարտունակության վրա (օրինակ՝ ցանկացած երկրի սահմանադրությամբ նախատեսված մարդու իրավունքների որոշակի շրջանակ զինված ուժերում օրենքով սահմանափակված է): ՌԽստի Ձինված ուժերում ժողովրդավարացումն ստեղծում է որոշակի հակասություններ և դրանք հարթելու անհրաժեշտություն: Այս ուղղությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը փոխառելի է համարում եվրոպական գործընկեր պետությունների փորձը:

Մյուս նպատակն է պետության միջազգային ինտեգրվածության ապահովումն ու միջազգային անվտանգության ապահովման չափաբաժնի ստանձնումը: Օրինակ՝ թեև Գերմանիան ՆԱՏՕ-ի անդամ է, սակայն մինչև վերջերս նրան արգելված էր ռազմարշավային (էքսպեդիցիոն) ուժերի և կարողությունների ստեղծումը: Մինչդեռ Գերմանիայի մասնակցությունը Աֆղանստանում և Բալկաններում իրականացվող առաքելություններին ստիպեց փոխել այս դիրքորոշումը, իսկ Գերմանիային՝ վերանայել իր գորային կառույցը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պաշտպանական բարեփոխումների իրականացման համատեքստում միջազգային ինտեգրումը դիտում է որպես առաջնային նպատակ՝ ստեղծելով անվտանգության տարբեր համակարգերի ուժերի հետ

<sup>5</sup> Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 24:

փոխգործելի ստորաբաժանումներ և կարողություններ<sup>6</sup>: Մասնավորապես, մի կողմից՝ ՀՀ ՋՈՒ-ի և ՌԳ- ՋՈՒ-ի գորքերի (ուժերի) միացյալ խմբավորումը ոչ միայն ՌԳ-ի հետ, այլև ՀԱՊԿ-ի շրջանակներում լիարժեք փոխգործություն է ապահովում, մյուս կողմից՝ Խաղաղապահ բրիգադի կազմավորումն ստեղծում է ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր պետությունների հետ համատեղ գործողություններ իրականացնելու հնարավորություններ:

«Մառը պատերազմի» ավարտից հետո ՆԱՏՕ-ի անդամ պետությունները, սկսելով իրենց պաշտպանական համակարգերի վերափոխման գործընթացը, համագամադրեն ուսումնասիրեցին խորհրդային ռազմական մշակույթը, ինչի հետևանքով այդ մշակույթի շատ տարրեր ընդօրինակվեցին և ներմուծվեցին այդ պետությունների ժամանակակից համակարգերի մեջ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը նույնպես ձգտում է պաշտպանական բարեփոխումներն իրականացնելու միջազգային ռազմական համագործակցությանը հնարավորինս համակողմանի ինտեգրմամբ, քանի որ առանց միջազգային փորձի փոխառման հնարավոր չէ իրականացնել բարեփոխումների այն լայն շրջանակը, որն անվտանգության ժամանակակից միջավայրում կապահովի և՛ պաշտպանունակություն, և՛ փոխգործելիություն: Այս առումով առավել հետաքրքրական է արևմտյան փորձը, քանի որ ներկայումս քիչ թե շատ կիրառելի և արդյունավետ խորհրդային ստանդարտներն արդեն իսկ ներդրվել են ՀՀ Ձինված ուժերում:

Դա է պատճառը, որ պաշտպանական բարեփոխումների հիմքում դրված են հիմնականում ՆԱՏՕ-ի, ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների հետ համագործակցության ծրագրերը, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու և կիրառելու այնտեղ գործող ստանդարտները, մեթոդիկան ու մարտավարությունը: Սա հույժ կարևոր է, քանի որ առաջադիմական արևմտյան ստանդարտների ու մարտավարության համադրումը ՀՀ Ձինված ուժերում գործող տեղայնացված խորհրդային ստանդարտների և անցած 15 տարիների ընթացքում ձեռք բերված ազգային մարտական փորձի հետ կարող է հանգեցնել շատ լավ արդյունքների:

Նման համադրման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության միջավայրի, առկա ու հնարավոր ռազմական սպառնալիքների յուրահատուկ բնույթից, հետևաբար նաև Ձինված ուժերի բարեփոխումների և արդիականացման որոշակի առանձնահատկություններից, ինչը հնարավորություն չի տալիս ո՛չ ամբողջությամբ պահպանելու նախկին խորհրդային ստանդարտները, և ո՛չ էլ պաշտպանական բարեփոխումներն իրականացնելու զուտ արևմտյան երկրների օրինակով: Այսպես. Արևելյան Եվրոպայի և ՆԱՏՕ-ի անդամ երկրների համար առկա սպառնալիքների բնույթը, այն է՝ դասական սպառնալիքներ չլինելու հանգամանքը, թելադրում է շարժունակ, ինքնաբավ, օպերատիվ տեղակայման և ծավալման (ցամաքային գորքերի առնվազն 40 %-ը), ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում ինքնուրույնաբար մարտական գործողություններ վարելու ունակ (ցամաքային գորքերի առնվազն 8 %-ը) ստորաբաժանումների (ցամաքային,

<sup>6</sup> Տես «ՀՀ ռազմական դոկտրին», էջ 56:

ռազմաօդային և ռազմածովային) ստեղծման անհրաժեշտություն, ընդամին դրանք պետք է լինեն միմյանց հետ լիարժեքորեն փոխգործելի<sup>7</sup>: Այդ բարեփոխումներն ընթանում են ՆԱՏՕ-ի անդամ երկրների համար մշակված ընդհանուր ստանդարտների հիման վրա: Հայաստանի Հանրապետությունը այդ ստանդարտներին լիովին համապատասխան կազմավորում է Խաղաղապահ բրիգադ, իսկ մյուս ոլորտներում ստեղծում է միայն փոխգործելիության հնարավորություններ՝ առանց տվյալ ստանդարտներին լիովին անցնելու, քանի որ, ի տարբերություն եվրոպական երկրներից, Հայաստանի համար գոյություն ունեցող ռազմական սպառնալիքներն առավելապես դասական բնույթի են (համաչափ, ներտարածաշրջանային, լիամասշտաբ պատերազմի հավանականություն):

Ընդհանրապես, տարբեր պետություններում ընթացող պաշտպանական բարեփոխումներն ունեն մի քանի ակներև միտումներ: Առաջինը թե՛ միջազգային, թե՛ ներքին պաշտպանական համակարգերի ինտեգրված բնույթն է: Եթե միջազգային ինտեգրումը պայմանավորված է անվտանգության նոր սպառնալիքներին համատեղ հակազդեցության անհրաժեշտությամբ, ապա ներքին ինտեգրումը պայմանավորված է պաշտպանական համակարգերի արդյունավետ գործելու, մասնավորապես, որոշումների կայացման, խնդիրների ձևավորման և իրականացման ժամանակը կրճատելու, ՁՈՒ-ի կենտրոնացված նյութատեխնիկական ապահովման և այդ նպատակով ֆինանսական միջոցների խնայողության, Գլխավոր շտաբում՝ առկա սպառնալիքներին համապատասխան ուժերի և կարողությունների պլանավորման նկատմամբ կենտրոնացված քաղաքական իշխանությունների կողմից վերահսկողություն իրականացնելու հրամայականով: Պատահական չէ, որ Հայաստանի պաշտպանական համակարգը, այսինքն՝ պաշտպանության նախարարությունն ու ՁՈՒ-ի Գլխավոր շտաբը, նույնպես ունի ինտեգրված բնույթ:

Հաջորդ միտումը պրոֆեսիոնալիզմի և պայմանագրային պահեստազորային համակարգի<sup>8</sup> համատեղումն է: Եթե պրոֆեսիոնալիզմը բարձրացնում է ՁՈՒ-ի մարտունակության մակարդակը, ապա պայմանագրային պահեստազորային համակարգն անհրաժեշտ է գորահավաքի միջոցով տարածքային պաշտպանություն իրականացնելու համար: Միևնույն ժամանակ այս համակարգի ներդրումը զորացումից հետո ակտիվ զինձառայողներին քաղաքացիական մասնագիտությամբ վերապատրաստման, իսկ ՁՈՒ-ի կրճատման դեպքում (օրինակ՝ Գարաբաղյան հակամարտության լուծումից հետո) նաև զորամասերի կոնվերսիայի անհրաժեշտություն է ստեղծում:

ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրն այն ձևաչափն է, որը համագործակցության դաշտ է ապահովում միաժամանակ ՆԱՏՕ-ի կառույցների, անդամ պետությունների և գործընկերների միջև: Հայաստան–ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը», «Պլանավորման և վերա-

<sup>7</sup> Տես «Comprehensive Political Guidance», endorsed by NATO Heads of State and Government on 29 November, 2006, Paragraph 13:

<sup>8</sup> Տես «ՀՀ ռազմական դոկտրին», էջ 53–54:

մայնան գործընթացը» և մյուս ծրագրերը, գորավարժություններն ու միջոցառումները, ինչպես նաև ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների հետ երկկողմ համագործակցության պլանները մշակվում և իրականացվում են ԳՀԽ շրջանակներում: Այս ամենի հետևանքով ՆԱՏՕ-ի կառույցների և անդամ երկրների հետ ձևավորված բարձր մակարդակի ռազմական համագործակցությունը լայն հնարավորություններ է ընձեռում փորձի փոխանակման, գրեթե բոլոր մասնագիտություններով փորձագետների ամենաբարձր մակարդակով խորհրդատվությունների կազմակերպման, փոխգործելության ընդլայնման, այդ թվում՝ Խաղաղապահ բրիգադի կազմավորման, մի շարք կարևոր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման ու վերապատրաստման համար:

Վերջին տարիներին ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունն անցնում է որակապես նոր մակարդակի: Մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի կողմից առաջարկվող մի շարք ծրագրեր և նախաձեռնություններ, ինչպիսիք են «Պաշտպանական հաստատությունների կառուցում» գործընկերության գործողությունների ծրագիրը (ՊՀԿ Գ-ԳԾ), «Արդար կառավարում» նախաձեռնությունը, գիտահետազոտական կենտրոնների հետ սերտ կապերի հաստատումը և այլն, լրացուցիչ հնարավորություններ են ստեղծել պաշտպանական պլանավորման, հայեցակարգային փաստաթղթերի մշակման, օրենսդրական ապահովման, պաշտպանական կառույցների արդիականացման ուղղությամբ արդյունավետ համագործակցություն զարգացնելու համար, իսկ դրանք պաշտպանական բարեփոխումների առանցքային ոլորտներն են:

Յավոք, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության վերոնշյալ ձևաչափից բացի, եվրոպական մյուս կառույցների հետ համագործակցության ծրագրերը հնարավորություն չեն տալիս դրանք ծառայեցնելու պաշտպանական բարեփոխումների իրականացման նպատակին: Մասնավորապես՝ Եվրոպական Միության հետ պաշտպանության ոլորտում համագործակցությունը, չնայած փոխադարձ շահագրգռվածությանն ու մեծ հեռանկարներին, դեռ սաղմնային վիճակում է, իսկ ԵԱՀԿ-ի հետ համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է ռազմաքաղաքական բնույթի խնդիրներով և սպառազինությունների վերահսկման ոլորտով:

Ընդհանուր առմամբ, պաշտպանական բարեփոխումների ծրագրային գործընթացը ՀՀ պաշտպանության նախարարի կողմից բաժանվել է երեք փուլի.

1. *հայեցակարգային մուրեցումների և համապարասիսան փաստաթղթերի մշակում*՝ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթների հստակեցման նպատակով (2007–2008 թթ.),

2. *պաշտպանության ռազմավարական վերանայում*՝ Զինված ուժերի առկա հնարավորությունների և արդիականացման անհրաժեշտությունների, պահանջվող բարեփոխումների ծավալների որոշման և պլանավորման նպատակով (2008–2010 թթ.),

3. *գործնական բարեփոխումների իրականացում*՝ Զինված ուժերի համար մատչելի ազգային ու միջազգային հնարավորությունների կիրառմամբ (2010–2015 թթ.):

Այս տարվա մայիսին ՀՀ պաշտպանության նախարարը ՆԱՏՕ-ի Հյուսիսատլանտյան խորհրդի «26+1» ձևաչափով նիստի ժամանակ ներկայացրեց ՀՀ–ՆԱՏՕ

ԱԳԳԾ-ով իրականացված բարեփոխումների առաջին երկամյա փուլի կատարողականը:

Բարեփոխումների երկրորդ փուլի՝ առաջիկա երկու տարիների հիմնական խնդիրն է լինելու պաշտպանության ռազմավարական վերանայման իրականացումը, որի ընթացքում կօգտագործվեն միջազգային ռազմական համագործակցությամբ ընձեռնվող հնարավորություններն ու առաջավոր միջազգային փորձը: ՀՀ պաշտպանության նախարարի ցուցումով ռազմավարական վերանայման գործընթացը ճիշտ ուղղորդելու և առաջադրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է՝

1. «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» և «ՀՀ ռազմական դոկտրինի» մեջ ուրվագծված ՀՀ անվտանգային միջավայրն ու ռազմական սպառնալիքները ենթարկել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարով վերլուծության՝ այդ ձևաչափով Հայաստանի ազգային անվտանգության առաջնահերթությունները, ինչպես նաև ազգային անվտանգության սպառնված գործում Ձինված ուժերի դերն ու առաքելությունը որոշելու համար,

2. Հայաստանի ազգային անվտանգության առաջնահերթությունները և Ձինված ուժերի դերն ու առաքելությունները հաշվի առնել ՁՈՒ-ի համապատասխան գործառույթային ոլորտներում (անձնակազմ, կրթություն, պահեստագործ, ռազմատեխնիկական արդիականացում, մարտական պատրաստություն և այլն), ինչի շնորհիվ հնարավոր կլինի որոշել այդ առաքելությունների համար անհրաժեշտ ռազմական կարողությունների պահանջարկն ու ՀՀ ՁՈՒ-ի ուժային կառուցվածքը (լավագույն կազմակերպման, համալրման և սպառազինման ձևերը),

3. պարզել, թե ՀՀ Ձինված ուժերը որ դեպքերում կարող են պահպանել առկա կառույցները, իսկ որ դեպքերում հարկ կլինի փոփոխել կամ արդիականացնել որոշ օղակներ: Որոշել ՀՀ ՁՈՒ-ի թվաքանակը՝ հաշվի առնելով նրա առաքելությունները և առկա ռիսկերը, որպեսզի սպահովված լինի այդ առաքելությունների կատարումը,

4. Ձինված ուժերի կառուցվածքը և թվաքանակը որոշելիս հաշվի առնել արտաքին հարձակման հավանականության աստիճանը, քանի որ այն կարող է վտանգի տակ դնել ՀՀ ՁՈՒ-ի առաջնային առաքելության կատարումը՝ երկրի անվտանգության, պաշտպանության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության սպառնվումը,

5. ՁՈՒ-ի առաջնային առաքելության հետ մեկտեղ դիտարկել այլ կարևոր առաքելություններ, ինչպիսիք են, օրինակ, մասնակցությունը բազմազգ խաղաղապահական գործողություններին և արձագանքումը բնական կամ տեխնածին աղետներին, զանգվածային ոչնչացման զենքի (ՁՈԶ) տարածմանը, թմրադեղերի վաճառքին ու ահաբեկչությանը: Պետք է ուշադրություն դարձնել հատկապես արձագանքմանն այն ճգնաժամներին, որոնք հանգեցնում են արտակարգ դրության հայտարարմանը, դրանց ժամանակ ՁՈՒ-ի առաքելությունների սահմանմանը և կատարմանը: Յուրաքանչյուր առաքելության հավանականությունը, արդարացված ռիսկերը և ռիսկերի նվազեցմանն ուղղված քայլերը՝ ռազմավարությունը (ինչպիսիք են, օրինակ, տարածաշրջանային կամ միջազգային գործընկերների ու դաշնակիցների հետ

նազանական փոխգործության ընդլայնումը), նույնպես պետք է հաշվի առնվեն նախա-  
քան ՁՈՒ-ի կառուցվածքի որոշումը,

6. պաշտպանության ռազմավարական վերանայումը իրականացնել՝ հաշվի առ-  
նելով ՁՈՒ-ի արդիականացման ու կառուցվածքային փոփոխությունների ժամանա-  
կային կանխատեսումները և այդ փոփոխությունների հնարավոր ազդեցությունների  
որոշումը մինչև Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը ու դրանից հետո:

ՀՀ պաշտպանության նախարարի նախաձեռնությամբ պաշտպանության ռազ-  
մավարական վերանայումն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետու-  
թյան նախագահի կարգադրությամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով և  
հաստատվել են վերանայման փուլերն ու ժամանակացույցը: Ռազմավարական  
վերանայման տրամաբանությունը հուշում է, որ այս ժամանակաշրջանը պետք է լինի  
խորը ուսումնասիրությունների, համակողմանի վերլուծությունների և գիտական  
եզրահանգումների ժամանակաշրջան: ՌԽտի այս գործընթացին պետք է ծառայեց-  
վեն միջազգային ռազմական համագործակցությամբ ընձեռնվող բոլոր հնարավորու-  
թյուններն ու միջազգային փորձը:

## ОСУЩЕСТВЛЕНИЕ ОБОРОННЫХ РЕФОРМ В РАМКАХ ВОЕННОГО СОТРУДНИЧЕСТВА

*Д. Э. ТОНОЯН, полковник, начальник Управления Международного военного  
сотрудничества и оборонных программ МО РА*

### РЕЗЮМЕ

За последние годы международное военное сотрудничество Министерства  
обороны РА стремительно развивается. Это развитие обусловлено не только  
расширением объемов и рамок сотрудничества, но и качественным характе-  
ром преследуемых целей; оно полностью служит эффективному осуществле-  
нию оборонных реформ.

Международная вовлеченность Республики Армения в безопасностную и  
оборонную сферы, с одной стороны—членство в Организации Договора о кол-  
лективной безопасности, а с другой—построение постоянно развивающихся  
отношений на основе индивидуального плана сотрудничества с Организацией  
Североатлантического Договора, двустороннее сотрудничество с Российской  
Федерацией, США, Китаем и европейскими государствами, не только создают  
надежные международные гарантии для обеспечения безопасности, но и  
предоставляют широкие возможности для синтеза и применения концепций  
безопасности, принципов и стандартов этих организаций и государств.

Подписываемые и осуществляемые программы сотрудничества в двусто-  
ронних и многосторонних рамках, включенные в них мероприятия с точки  
зрения оборонных реформ взаимосопоставимы и целенаправлены на обеспе-  
чение перспективного развития Вооруженных сил РА в соответствии с совре-  
менными требованиями.

Сегодня Министерству обороны РА оказывается международное эксперт-  
ное, консультационное и практическое содействие в достаточных объемах.



Оно затрагивает почти все сферы реформ—от стратегического уровня до тактического. С целью создания современных и достаточных возможностей для коллективной и индивидуальной обороны осуществляемые заимствование, адаптирование и внедрение передового международного опыта представляют собой один из главных элементов целенаправленного проведения оборонных реформ в РА.

## THE IMPLEMENTATION OF DEFENSE REFORMS WITHIN THE FRAMEWORK OF MILITARY COOPERATION

*D. E. TONOYAN, Colonel, Head of the Board of International Military Cooperation  
and Defense Programs, MoD, RA*

### SUMMARY

In recent years the international military cooperation of the RA Ministry of Defense is impetuously developing. This development is conditioned not only by the extension of range and framework of cooperation, but also by qualitative nature of pursued goals; it fully serves the efficient implementation of defense reforms.

The international involvement of the Republic of Armenia in security and defense spheres, on one hand—the membership in the Collective Security Treaty Organization, on the other—the establishment of constantly developing relations on the basis of individual partnership plan with the North Atlantic Treaty Organization, the bilateral cooperation with the Russian Federation, the USA, China and European States, are not only reliable international guarantees for ensuring security, but also provide great opportunities for the synthesis and use of security conceptions, principles and standards of these security organizations and states.

The cooperation programs being signed and implemented, those in bilateral and multilateral framework, the measures included in them in terms of defense reforms are mutually comparable and targeted at ensuring perspective development of the RA Armed Forces in accordance with contemporary requirements.

Today, the RA Ministry of Defense is sufficiently rendered international expert, consulting and practical support. It touches upon almost all the spheres of reforms—from the strategic level to the tactical one. For the creation of modern and sufficient capabilities for the collective and individual defense the current adoption, adaptation and introduction of advanced international practice is one of the key elements of targeted implementation of the RA defense reforms.

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

*Լ. Գ. ԱՅՎԱԶՅԱՆ, մայր, ՀՀ ՊՆ ՄՈՎ և ՊԾ վարչության  
պաշտպանական ծրագրերի մշակման բաժնի պերի տեղակալ*

Պաշտպանական ոլորտը, լինելով պետության կենսագործունեության կարևորագույն և ծախսատար ոլորտներից մեկը, չի կարող մնալ հաստատուն վիճակում, այլ պետք է մշտապես համապատասխանի պետության անվտանգության միջավայրին. այսինքն՝ այդ միջավայրի կերպափոխումներին համահունչ զարգացող, արդիականացող և անընդհատ փոփոխվող ոլորտ է: Այս առումով պաշտպանական ոլորտում տեղի ունեցող գործընթացները կարելի է որակել որպես պետության «արձագանք» միջավայրին: Սակայն պաշտպանական բարեփոխումներ ասելով պետք չէ հասկանալ այդ «արձագանքման» հետ կապված ընթացիկ փոփոխությունները: Պաշտպանական բարեփոխումներն ունեն ավելի ընդհանուր, խորքային ու հեռանկարային բնույթ, այսինքն՝ ենթադրում են ոչ թե ընթացիկ, այլ «արտակարգ», արմատական փոփոխություններ: ՌԻստի պաշտպանական բարեփոխումներ իրականացնելիս պետք է պլանավորել ոչ թե մոտ ապագան, այլ երկարաժամկետ (ռազմավարական) հեռանկարը:



Վերը նշված հանգամանքների հաշվառմամբ ՀՀ ՁՈՒ-ի պաշտպանական բարեփոխումների պլանավորման և իրականացման համար անհրաժեշտ է ճշգրիտ ռազմավարական պլանավորում, ինչը պահանջում է բավարար կարողություններ, այն է՝ ռազմավարական պլանավորման ստորաբաժանումների, համապատասխան մասնագետների, փորձի և գիտելիքների առկայություն:

Բացի այդ, անկախ բարեփոխումների ծավալներից և ընթացքից, ռազմավարական պլանավորումը և ռազմավարական կառավարումն ընդհանրապես պետական կառավարման հիմնական առաջնահերթություններից են: Երբ Խորհրդային Միության և նրա պլանային տնտեսության փլուզումից հետո սկսվեց հետխորհրդային տարածքի նորանկախ պետությունների զինված ուժերի հարմարեցումը շուկայական տնտեսության պահանջներին, առաջին պլան մղվեց պաշտպանական ոլորտում ռազմավարական պլանավորումը: Վերջին տարիներին կառավարման և պլանավորման մեթոդաբանությունն ու ռազմավարությունը զգալիորեն փոխվեցին, հատկապես պաշտպանության ոլորտում մշակվեցին նոր մոտեցումներ, արդի մարտահրավերների ազդեցությամբ առաջ եկավ ավելի հեռանկարային ու մանրամասն պլանավորման անհրաժեշտություն: Եթե դրան ավելացնենք առկա սպառնալիքների անհամաչափ

բնույթն ու զարգացման միտումները, գաղափարախոսական հակամարտության փոխարինումը քաղաքակրթական հակասությունների դրսևորումներով, միջազգային անվտանգության միջավայրի փոփոխության դինամիկությունը, ապա պարզ է, որ պաշտպանության ոլորտում միջավայրի արագ փոփոխություններին համարժեքորեն արձագանքելու համար երկարաժամկետ ռազմավարական մոտեցումները հրամայական են դառնում:

**«ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

«Ուսումնական պլանավորում» հասկացությունը գործածության մեջ է դրվել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և կիրառվել է զուտ ռազմական գործողություններ պլանավորելու համար: Սակայն անցած տասնամյակների ընթացքում «ռազմավարական պլանավորում» հասկացությունն անցել է զարգացման մի քանի փուլ՝ ընդգրկելով երկարաժամկետ հեռանկարներ (5 տարուց ավելի, ի տարբերություն օպերատիվ պլանավորումից, որը նախատեսվում է 1–2 տարվա համար): Խորհրդային Միության պլանավորման համակարգը, ձևավորվելով դեռ 20-րդ դարի 20-ական թվականներին, ոչ այլ ինչ էր, եթե ոչ ռազմավարական պլանավորման ցայտուն դրսևորում\*։ Ընդհանրապես, Խորհրդային Միության ամբողջ պետական-տնտեսական համակարգը հիմնված էր ռազմավարական պլանավորման վրա (հիմնականում՝ հնգամյա), ինչի շնորհիվ միութենական տնտեսությունը 20-րդ դարի 50–60-ական թվականներին ոչ միայն կարողանում էր մրցել արևմտյան շուկայական տնտեսության զարգացման տեմպերի հետ, այլև մի շարք ոլորտներում առաջ էր անցել նրանից: Սակայն նախորդ դարի 50-ական թվականներին Խորհրդային Միությունում երկարաժամկետ պլանավորումը կատարվում էր հիմնականում նախկին փորձի և այն միտումների վերլուծության հիման վրա, որոնք կարող էին որոշիչ լինել առաջիկա հինգ տարիների կտրվածքով: 1960-ական թվականներին երկարաժամկետ պլանավորումը (հիմնականում ևս հնգամյա) փոխառվեց Արևմուտքի կողմից և ստացավ «ռազմավարական» բնույթ՝ հիմնված երկարաժամկետ հեռանկարով միջավայրի ու ռեսուրսների գնահատման վրա: Դրա հետ մեկտեղ առաջ եկավ նաև այդ միջավայրի վրա ազդելու հնարավորությունների ստեղծման խնդիր: 1970-ական թվականներին ռազմավարական պլանավորումն սկսեց կիրառվել ամբողջ արևմտյան կառավարման մեթոդաբանության մեջ (նաև՝ մասնավոր ոլորտում) և ստացավ համընդհանուր նշանակություն (Խորհրդային Միությունում երկարաժամկետ պլանավորումը շարունակում էր հիմնվել զուտ միջավայրի ու ռեսուրսների գնահատման վրա՝ առանց կառավարման ոլորտի մեթոդաբանական փոփոխությունների)\*\*:

\* Առաջին երկարաժամկետ ռազմավարական պլանը 1920 թ. Խորհրդային Ռուսաստանի ընդունած էլեկտրաֆիկացման պետական պլանն է (ГОЭЛПО)՝ նախատեսված 15 տարվա համար:

\*\* Առաջին անգամ «ռազմավարական պլանավորում» և «ռազմավարական կառավարում» տերմինները, որպես առանձին հասկացությունների անուններ, օգտագործվել են 1971 թ. Ֆրանկեն-հոֆսի և Գրեգերի աշխատություններում, այնուհետև՝ Շենդելի ու Հատենի (1972 թ.) և Իրվինի (1974 թ.) կողմից:

Օպերատիվ պլանավորումից ռազմավարական պլանավորման անցնելու հիմնական իմաստը միջավայրի փոփոխություններին պատեհաժամ հակազդեցության ապահովումն էր:

Ներկայումս «ռազմավարական պլանավորում» և «ռազմավարական պլան» հասկացությունները կառավարման մեթոդաբանության մեջ ստացել են նոր որակ ու նշանակություն և զգալիորեն տարբերվում են, օրինակ, ֆինանսական, օպերատիվ,

Հիմնական չափանիշներ	Օպերատիվ կառավարում	Ռազմավարական կառավարում
1. Առաքելությունը, նպատակները	Առկա անվտանգության միջավայրի գնահատում և ռազմական անվտանգության սպառնալիքների չեզոքացում	Երկարաժամկետ հեռանկարում անվտանգության խնդիրների արդյունավետ իրականացում՝ փոփոխվող միջավայրի հաշվառմամբ
2. Հիմնական բնորոշիչներ	Արձագանքում արտաքին միջավայրին	Արտաքին միջավայրի փոփոխության վրա ազդելու հնարավորություն
3. Առաջնահերթ ուշադրության կենտրոնացում	Ներքին խնդիրներ, ռեսուրսների արդյունավետ օգտագործում	Արտաքին խնդիրներ, միջավայրի փոփոխությունների դինամիկայի գնահատում և հարմարեցում
4. Ժամանակի գործոնի հաշվառում	Կողմնորոշում կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարով	Կողմնորոշում երկարաժամկետ հեռանկարով
5. Կադրերի կառավարում	Կադրերը դիտվում են որպես կադրային ռեսուրս, որպես առանձին աշխատանքներ կատարողներ և գործառույթներ իրականացնողներ	Կադրերը դիտվում են համընդհանուր ձևաչափում՝ որպես հիմնական գործոն
6. Արդյունավետության գնահատում	Արդյունավետությունը որոշվում է ռեսուրսների օգտագործման և գործողությունների իրականացման արդյունավետության հաշվարկմամբ	Արդյունավետությունը որոշվում է արտաքին միջավայրի փոփոխություններին ժամանակին և լիարժեքորեն արձագանքելու ունակության գնահատմամբ

սցենարային և այլ տեսակի պլանավորումներից: Այդ տարբերությունները ցույց տալու համար փորձենք ըստ ընդհանուր չափանիշների համեմատել ռազմավարական և օպերատիվ տեսակների կառավարումը (պլանավորումը) պաշտպանական ոլորտում:

Միևնույն ժամանակ, չնայած առկա տարբերություններին, ռազմավարական և օպերատիվ պլանավորումները սերտորեն փոխկապված են և լրացնում են միմյանց<sup>1</sup>:

<sup>1</sup> «Ի տարբերություն ռազմավարական պլանավորումից, օպերատիվ պլանավորումը վերաբերում է կոնկրետ օպերացիաներին, գործողություններին, դրանց հաջորդականությանը, կոնկրետ գրաֆիկների կազմմանը, գրաֆիկներում արտացոլված պլանի այս կամ այն կետերի կատարման համար անհրաժեշտ ռեսուրսների հստակ որոշմանը և այլն: Արդի պայմաններում մեծ նշանակություն են ստացել քաղաքական-հոգեբանական ազդեցության գործողությունները, վիրտուալ գործողությունները (քաղաքականության, ձեռնարկչության, ռազմական ոլորտներում): Դա մի հատուկ թեմա է, որը անգլո-սաքսոնական երկրների, Ֆրանսիայի և Չինաստանի համեմատությամբ մեր հայրենական տեսական, քաղաքական, ռազմաքաղաքական և ռազմական ռազմավարական մտքի կողմից քիչ է

Ռազմավարական պլանավորումը սկզբունքների, արժեքների և երկարաժամկետ նպատակների հստակեցման, ինչպես նաև այդ նպատակների իրականացման ռազմավարության մշակման գործընթաց է: Այլ կերպ ասած՝ ռազմավարական պլանավորումը առկա վիճակից հեռանկարում ցանկալի վիճակի անցնելու ուղին է: ՌԻստի ռազմավարական պլանավորման առաջնային խնդիրն է պարզել, թե ինչ ունենք ներկայումս, ինչ պետք է ունենանք ապագայում, և մշակել ներկայից ապագային անցնելու ռազմավարություն:

Ռազմավարական պլանավորումն ունի մի քանի հիմնարար բնորոշիչներ.

- ռազմավարությունը ոչ թե պատահականորեն համախմբված գործողությունների ամբողջություն է, այլ հստակորեն որոշված նպատակների իրականացմանն ուղղված ներդաշնակ գործողությունների հաջորդականություն (համակարգ),
- ռազմավարական նպատակները կարող են լինել կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ, սակայն դրանք բոլորն էլ հիմնարար նշանակություն ունեն հենց երկարաժամկետ պլանավորման համար,
- կոնկրետ ռազմավարության իրականացումն արտացոլում է պլանավորողների սկզբունքները, արժեքներն ու առաջնահերթությունները,
- ռազմավարության իրականացման արդյունավետությունը պայմանավորված է ինչպես ներքին (ուժեղ և թույլ կողմեր), այնպես էլ արտաքին (հնարավորություններ և սպառնալիքներ) գործոններով,
- ռազմավարական պլանավորումը դինամիկ գործընթաց է և պահանջում է «իրո-դությունների» պարբերական գնահատում:

Ռազմավարական պլանավորումը պետք է հիմնավորված լինի գիտական հետազոտություններով և փաստացի տվյալներով: Պաշտպանական ոլորտում կատարվող աշխատանքների արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մշտապես հավաքել ու վերլուծել այդ ոլորտին առնչվող հսկայական ծավալներով տեղեկույթ: ՌԻստի ռազմավարական պլանավորման համար անհրաժեշտ են պլանավորման և վերլուծության համապատասխան կարողություններ (մասնագիտական օղակներ):

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ռազմավարական պլանավորումը պետք է այնպես մշակվի, որ ոչ միայն կարողանա երկարաժամկետ հեռանկարում պահպանել իր ամբողջականությունը, այլև լինի բավարար չափով ճկուն՝ անհրաժեշտության դեպքում արդիականացվելու և վերակողմնորոշվելու համար: Պաշտպանության ռազմավարական պլանավորումը պետք է դիտել որպես մի ամբողջական ծրագիր, որը պաշտպանական ոլորտի զարգացումն ուղղորդում է երկարաժամկետ հեռանկարով, թեև հակամարտային և մշտապես փոփոխվող արտաքին միջավայրը անխուսափելի է դարձնում այդ պլանի հաճախակի փոփոխությունները:

Անվտանգության միջավայրի փոփոխությունների ներկայիս տեմպերն այնքան մշակված: Ընդհանուր առմամբ օպերատիվ պլանավորումը կարելի է համարել ռազմավարությունը օպերացիոնալացնելու, մանրամասնելու, տեղափոխումը տարբեր կառույցների և կազմակերպությունների գործունեության կոնկրետ ցուցանիշների վերածելու փուլ» (տես *А. А. Кокошин. О стратегическом планировании в политике. М., 2007, с. 23*):

արագ են, որ ռազմավարական պլանավորումը ապագա խնդիրների ու հնարավորությունների իրատեսական կանխատեսման միակ հավաստի միջոցն է: Այն ռազմաքաղաքական ղեկավարությանը հնարավորություն է տալիս մշակելու երկարաժամկետ ծրագրեր, ինչպես նաև հիմքեր է ստեղծում ճիշտ որոշումներ կայացնելու համար՝ նվազեցնելով սխալվելու ռիսկերը: Բացի այդ, նպատակների հստակ որոշումն օգնում է դրանց հասնելու արդյունավետ միջոցների ընտրությանը:

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ  
ԱՌՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ռազմավարական պլանավորումն ունի մի շարք առավելություններ և թերություններ:

Ռազմավարական պլանավորմանը բնորոշ են հետևյալ հիմնական առավելությունները.

- *ակնհայտորեն մեծացնում է գործունեության արդյունավետությունն ու նպատակաուղղվածությունը:* Անհրաժեշտ դարձնելով զարգացման վերջնակետի, ապանաև նպատակների, առաջնահերթությունների, ձեռնարկվելիք քայլերի, դրանց իրականացման ժամկետների և պատասխանատուների որոշումը՝ ռազմավարական պլանավորումը հնարավորություն է ընձեռում բոլոր ռեսուրսները նպատակաուղղելու երկարաժամկետ հեռանկարին,

- *կարող է նվազեցնել հնարավոր կրիտիկական իրավիճակների թիվը:* Կրիտիկական իրավիճակը սովորաբար ստեղծվում է վատ ցուցանիշների առկայության դեպքում, քանի որ նախապես չի կատարվել այդ իրավիճակի կանխատեսում: ՌԲՍՏի ռազմավարական պլանավորման ընթացքում անպայմանորեն մշակվում և հստակեցվում են ապագա պահանջներն ու առաջնահերթությունները,

- *ինչպես արտաքին, այնպես էլ ներքին սպառնալիքների և մարտահրավերների «վաղ ազդարարման համակարգ» է:* Այս գործոնների վաղօրոք հայտնաբերման շնորհիվ կարելի է բոլոր միջոցների կիրառմամբ նվազագույնի հասցնել հնարավոր սպառնալիքները,

- *պահովում է որակական չափանիշների մշտական քարելավում և սահմանում է արդյունքների համար պատասխանատվություն:* Գործողությունների մշակված պլանը հնարավորություն է ընձեռում ամենօրյա աշխատանքը ծառայեցնելու երկարաժամկետ նպատակներին,

- *կարող է ծառայել որպես հիմք առանձին ոլորտների և հարկապես՝ պաշտոնյա անձանց գործունեությունը գնահատելու համար:* Անհատական նպատակները ռազմավարական նպատակների հետ կապելու միջոցով կարելի է մշակել այնպիսի համակարգ, որը հնարավորություն տա որոշելու անհատների ձեռքբերումները ռազմավարական նպատակների շրջանակներում:

Այնուամենայնիվ, այս առավելությունների հետ մեկտեղ, ռազմավարական պլանավորումն ունի որոշակի թերություններ և սահմանափակումներ, որոնցից, մեր կարծիքով, հիմնականներն են.

- չի տալիս և չի կարող տալ ապագայի ամբողջական՝ ճշգրիտ և մանրամասն, պատկերը,
  - չի կարող հանգեցնել ճշգրիտ գործողությունների: Չունենալով անհրաժեշտ կանխատեսումային կարողություններ՝ այն չի կարող նախապես ճշգրիտ կերպով նկարագրել, թե ինչ և ինչպես անել առանձին իրավիճակներում կոնկրետ խնդիրների լուծման համար,
  - պահանջում է մեծ ջանքեր և ռեսուրսների ու ժամանակի զգալի ծախս,
  - ռազմավարական պլանավորման ընթացքում թույլ տված սխալները հանգեցնում են բացասական հետևանքների կտրուկ աճմանը:
- Ռազմավարական պլանավորումը բեկումնային գործընթաց է, քանի որ հենց դրա հաջողության դեպքում է ապահովվում առաջադրված նպատակների իրականացումը: Սակայն հաճախ լինում են իրավիճակներ, երբ ռազմավարական պլանը հնարավոր չէ կատարել: Դա կարող է պայմանավորված լինել կա՛մ սխալ վերլուծությամբ և սխալ եզրակացություններով, կա՛մ արտաքին միջավայրի անկանխատեսելի փոփոխությամբ: Ռազմավարությունը կարող է չիրականացվել մաս ներուժի սխալ օգտագործման և ոչ ճշգրիտ պլանավորման հետևանքով:

### **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ**

Ռազմավարական պլանի մշակման նպատակն է հանգամանալից նախապատրաստումն ապագային: Ընդհանուր առմամբ, այն ունի մի քանի փուլեր և բաղկացուցիչներ: *Առաջին* փուլը նախադրման փուլն է, որի ընթացքում սահմանվում է առաքելությունը և որոշվում են ռազմավարական նպատակները: *Երկրորդը* կանխատեսման փուլն է, որի ընթացքում գնահատվում է իրավիճակը՝ արտաքին և ներքին միջավայրները: *Երրորդ* փուլը իրականացման հիմնական փուլն է, որի ընթացքում ընտրվում և իրագործվում է գործողությունների ծրագիրը (ռազմավարությունը): Եվ վերջապես, վերջին՝ *չորրորդ*, փուլը ամփոփման փուլն է, որի ընթացքում առաքելության համատեքստում գնահատվում է իրականացված ռազմավարությունը:

#### **1-ին փուլ. Նախադրում**

Ռազմավարական պլանի առաջին և կարևորագույն խնդիրն է առաքելության ու ռազմավարական նպատակների սահմանումը: Դրա իմաստն է «ցանկալի ապագայի հստակեցումը», ինչպես որևէ տեղ գնալուց առաջ անհրաժեշտ է հստակեցնել այդ տեղը: Ի տարբերություն «ցանկալի ապագայի» հստակեցումից, ռազմավարական նպատակները այդ ապագան երաշխավորելու միջոցն են: Իմաստային առումով ռազմավարական նպատակները «ցանկալի ապագան» իրականության վերածելու որոշիչ գործոններն են: Այդ նպատակները ցույց են տալիս այն, թե ինչ պետք է արվի, բայց ոչ այն, թե ինչպես պետք է արվի:

Առաքելությունը հիմնական և ընդհանուր նպատակն է: Օրինակ՝ ՀՀ Ձինված ուժերի առաքելությունը «Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության, պետական սահմանների անձեռնմխելիության և ան-

վտանգության զինված պաշտպանության ապահովումն է»<sup>2</sup>: Առաքելության նշանակությունը պետք չէ թերագնահատել, քանի որ դրա հիման վրա մշակված նպատակները ծառայում են որպես առաքելության իրականացման համար որոշումների կայացման չափանիշներ: ՈՒՒՍԻ առանց առաքելության՝ որպես կողմնորոշիչ սահմանման, կայացվող որոշումները չեն կարող արդյունավետ լինել:

Նպատակները մշակվում և սահմանվում են առաքելության և ընդհանուր սկզբունքների հիման վրա: Նպատակներն ունեն նկարագրական բնույթ և արդյունավետ լինելու համար պետք է լինեն հեռանկարային՝ ունենալով մի շարք բնորոշիչներ.

*առաջին*. նպատակները պետք է լինեն հստակ և ոչ վերացական: Այդ կերպ արտահայտված նպատակները ամուր հիմք են ստեղծում հետագա որոշումների և գնահատումների համար,

*երկրորդ*. նպատակները պետք է լինեն իրականանալի: Այն նպատակները, որոնք արտաքին անբարենպաստ գործոնների կամ ռեսուրսների անբավարարության պատճառով չեն կարող լիարժեքորեն իրականացվել, կարող են ունենալ կործանարար հետևանքներ,

*երրորդ*. մշակվող բազմաթիվ նպատակները պետք է լինեն փոխլրացնող և փոխհամաձայնեցված, այսինքն՝ մի նպատակին ուղղված գործողություններն ու որոշումները չպետք է խոչընդոտեն մեկ այլ նպատակի իրականացմանը: Նպատակների փոխլրացման և փոխհամաձայնեցման անհնարինությունը անխուսափելիորեն կհանգեցնի այդ նպատակներին հասնելու համար աշխատանքներ կատարող ստորաբաժանումների գործունեությունների բախմանը:

## **2-րդ փուլ. Կանխատեսում**

Առաքելության և նպատակների սահմանումից հետո սկսվում է ռազմավարական պլանավորման կանխատեսման փուլը: ԵՃԳԻԽ ռազմավարական պլանավորումը պետք է հիմնված լինի հավաստի տվյալների վրա և պահանջում է ճշգրիտ կանխատեսումներ<sup>3</sup>:

Հաճախ ռազմավարական պլանավորման համար մեծ խնդիր է «ոչ թե այն, ինչը հայտնի է, այլ այն, ինչը կարծում են, թե հայտնի է»: ՈՒՒՍԻ այս փուլի առաջին քայլը ներքին գնահատումն է: Ներքին գնահատումն անհրաժեշտ է ոչ միայն առկա ներքին

<sup>2</sup> «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»։ «Աշխատանքային տեսերթ», 2007, հմ. 4, էջ 45:

<sup>3</sup> «Եթե խստիվ ղեկավարվենք ցանկացած պլանավորման տրամաբանությամբ, այսպես այն պետք է առաջին հերթին հիմնվի կանխատեսման արդյունքների վրա: Կանխատեսման և պլանավորման միջև գոյություն ունի փոխադարձ սերտ կապ. երբեմն դրանց միջև սահմանը լինում է հազիվ նշմարելի (դա հատկապես վերաբերում է այսպես կոչված նորմատիվային կանխատեսման և պլանավորման միջև եղած տարբերություններին): Կանխատեսման ժամանակային տիրույթը պետք է կանգնեցնենք զերազանցի պլանի ժամանակային տիրույթը, կամ էլ առնվազն համընկնի նրա հետ: Ռազմավարական պլանավորման պրակտիկան ցույց է տալիս, որ պլանավորման ժամանակային տիրույթը գերազանցող ժամանակային տիրույթով կանխատեսումների առկայությունը պլանավորողների շրջանում առաջացնում է հոգեբանական ու մտավոր «ամրության պաշար» (տես *Ա. Ա. Կոկոշին*, նշ. աշխ., էջ 34–35):



խնդիրները, ներքին ռեսուրսները և հնարավորությունները (մարդկային, ֆինանսական, ռազմատեխնիկական, հաստատութենական և այլն), այլև կարիքները որոշելու համար: Եթե ռեսուրսները սահմանափակ են, ապա կարիքները պետք է համապատասխանեցվեն այդ ռեսուրսներին՝ իրատեսական հնարավորություններ սահմանելու համար (առավել վտանգավոր է, երբ փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ ռեսուրսներ ընդհանրապես չկան): Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեսուրսները միշտ էլ լինում են սահմանափակ և խնդիրների լուծման համար սովորաբար «անբավարար», դրանց գնահատումը հնարավորություն պետք է ընձեռի հատակեցնելու, թե նպատակների իրականացման ո՞ր փուլում այդ ռեսուրսները հանդես կգան որպես առավելագույն ուժեղ և նվազագույն թույլ գործոններ:

Ընդհանրապես, ներքին գնահատումը՝ ռեսուրսների և հնարավորությունների որոշումը, ռազմավարական պլանավորման ամենահեշտ և պարզ ենթափուլն է: Հաճախ դա առիթ է անտեսելու ներքին գնահատումը, ուստի և չկարևորելու արդյունքները: Սակայն երբեմն ներքին գնահատումն ավելի դժվար է կատարել, քան արտաքին գնահատումը, որովհետև գնահատողների շրջանում ի հայտ է գալիս «կողմնակալության» գործոնը:

Ներքին գնահատմանը զուգահեռ պետք է կատարվի նաև արտաքին գնահատում\*։ Դա մի գործընթաց է, որի միջոցով ռազմավարական պլանավորողները վերլուծում են արտաքին գործոններն ու ազդակները, որպեսզի հայտնաբերեն առկա հնարավորություններն ու հնարավոր վտանգները: Արտաքին միջավայրի գնահատումը հնարավորություն է տալիս որոշելու, թե արտաքին միջավայրում ինչ իրադարձություններ են տեղի ունենում, և ինչ հետևանքներ դրանք կարող են ունենալ:

Արտաքին գնահատումը շատ ավելի բարդ գործընթաց է, քան ներքին գնահատումը: Դա վերաբերում է հատկապես պաշտպանական ոլորտին, քանի որ վերջինիս կախվածությունը արտաքին միջավայրից շատ ավելի մեծ է և պայմանավորված է ազդեցությունների լայն շրջանով: Արտաքին միջավայրի գնահատումը պահանջում է հստակ հաշվարկումներ, ճշգրիտ կանխատեսումներ և հեռանկարային վերլուծական կարողություններ:

Արտաքին գնահատումն ունի երեք կարևոր ուղղություն. պաշտպանության ոլորտի վրա ազդող առկա ու հավանական արտաքին գործոնների որոշում, կանխատեսում, թե այդ գործոնները սահմանված ժամկետի ընթացքում ինչ փոփոխությունների կարող են ենթարկվել (նվազել կամ աճել), և տվյալ ժամանակահատվածում դրանց ազդեցության հնարավոր հետևանքների վերլուծություն:

Պաշտպանական ոլորտի վրա ազդող առկա և հավանական արտաքին գործոնների որոշումն առավելապես ճշգրիտ հաշվարկում է պահանջում: Օրինակ՝ արտաքին միջավայրում տեղի ունեցող բազմաթիվ և բազմատեսակ գործընթացների մեջ հաճախ հանդիպում են այնպիսիները, որոնք առաջին հայացքից չեն առնչվում

\* Հաճախ արտաքին գնահատումից բացի կատարվում է «անմիջական արտաքին միջավայրի գնահատում», ինչը նպատակահարմար է նաև Հայաստանի Հանրապետության պարագայում, եթե հաշվի առնենք անմիջական արտաքին միջավայրի որոշիչ ազդեցությունը ՀՀ անվտանգության վրա:

պաշտպանական ոլորտին, սակայն դրանց զարգացումներն անմիջական ազդեցություն են ունենում հենց պաշտպանության վրա: Դա դիտարկման դաշտից շատ գործոններ դուրս թողնելու վտանգ է ստեղծում:

Երկրորդ ուղղությունը առավելապես կանխատեսումների կարիք ունի, քանի որ պահանջվում է որոշել, թե ի հայտ բերված գործոնները ինչպես կարող են փոխվել սահմանված ժամանակի ընթացքում: Օրինակ՝ եթե մշակվում է պլան 2015 թ. համար, ապա պետք է պարզել, թե ինչպիսի կլիմի անվտանգության միջավայրը այդ թվակալանին: Հետևաբար, անհրաժեշտ է կանխատեսել նաև, թե այսօր ի հայտ բերված գործոնները, որոնք ձևավորում են այդ միջավայրը, ինչպիսի կլիմեն 2015 թ. և ինչպես կձևավորվեն, որ գործոնները կդառնան առավել որոշիչ կամ կանհետանան, և այլն:

Արտաքին միջավայրի գնահատումը ներառում է մի շարք, այդ թվում՝ միջազգային և տարածաշրջանային, ռազմաքաղաքական, ներքաղաքական, տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական և այլ գործոնների հաշվառում, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է առանձին-առանձին գնահատում: Արտաքին գնահատման հիմնական խնդիրներից մեկն էլ արտաքին հնարավորությունների որոշումն է:

Արտաքին միջավայրի գնահատման արդյունքները շատ կարևոր են: Դրանք ժամանակային ռեսուրս են ստեղծում հնարավորությունները կանխատեսելու, անկանխատեսելի իրավիճակների համար համապատասխան պլաններ մշակելու, հավանական սպառնալիքների կանխարգելման հնարավորություններ ստեղծելու և նպաստավոր միջավայրի ձևավորման ռազմավարություն մշակելու համար:

Արտաքին և ներքին գնահատումը կատարվում է նաև դրանց համամասնությունը որոշելու և օպտիմալ լուծումներ գտնելու համար, քանի որ հաճախ արտաքին հնարավորությունները (օրինակ՝ ուժեղ և թույլ կողմերը) ավելի շատ են լինում, քան դրանք օգտագործելու ներքին հնարավորությունները, կամ՝ հակառակը<sup>4</sup>:

### **3-րդ փուլ. Իրականացում**

Կանխատեսման փուլին հաջորդում է ռազմավարական պլանավորման իրականացման փուլը: Եթե նախադրման և կանխատեսման փուլերում որոշվում է, թե ինչ կա և ինչ պետք է լինի, ապա իրականացման փուլում մշակվում է ներկա վիճակից ծրագրված վիճակին անցնելու ուղին: Այլ կերպ ասած՝ այս փուլի նպատակն է ընտրել (մշակել) և իրականացնել անհրաժեշտ ռազմավարությունը՝ պլանը: Ռազմավարության ընտրությունը պետք է լինի հստակ և միանշանակ: Այդ ընտրության վրա ազդում են մի շարք գործոններ, ինչպիսիք են ռիսկերը, նախկին փորձը, նպատակահարմարությունը, ժամանակի գործոնը և այլն:

Ռազմավարական պլանը պետք է նկարագրի, թե ինչ ճանապարհով պետք է հասնել ռազմավարական նպատակներին: Այն պետք է ներառի ինչպես հիմնական

<sup>4</sup> «Ռազմավարական պլանավորման ժամանակ անհրաժեշտ է շատ սթափ կերպով հաշվի առնել ինչպես իր, այնպես էլ մրցակիցների (ընդդիմախոսների), գործընկերների թույլ և ուժեղ կողմերը: Յուրաքանչյուր ռազմավարության մեջ կարևոր նշանակություն ունի Սուև-Յգիի պատգամներով «զխտավոր հարվածի ուղղության» կամ ըստ Կլաուզեֆի՝ «Գրավիտացիայի կենտրոնի» որոշումը» (տես *Լ. Ա. Կոկոշին*, նշ. աշխ., էջ 31):

խնդիրները, այնպես էլ այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ գործողությունները:

Հիմնական խնդիրները սահմանում են, թե ինչ պետք է անել նպատակներին հասնելու համար, սակայն չեն հստակեցնում, թե ինչպես: Ընդհանրապես, ռազմավարական պլանն ունենում է սահմանափակ թվով հիմնական խնդիրներ: Այդ խնդիրները պետք է լինեն անհրաժեշտ և բավարար: Այսինքն՝ յուրաքանչյուր հիմնական խնդիր պետք է բացարձակապես անհրաժեշտ լինի ռազմավարական նպատակին հասնելու համար: Համապատասխանաբար, հիմնական խնդիրները միասին վերցրած պետք է լինեն նպատակին հասնելու համար բավարար: Հիմնական խնդիրները ճշգրտորեն սահմանելու համար անհրաժեշտ է վերստուգել և համոզվել, որ դրանք.

- ուղղված են նպատակների իրականացմանը,
- ընդգրկում են այն առավել կարևոր գործողությունները, որոնք պետք է կատարվեն նպատակներին հասնելու համար,
- անհրաժեշտ և բավարար են,
- կենտրոնացված են այն բանի վրա, թե ինչ պետք է արվի, այլ ոչ թե՝ ինչպես,
- հստակ են սահմանված և գաղափարապես համապատասխանում են անելիքին:

Հիմնական խնդիրները ռազմավարական պլանի հիմքն են, սակայն միայն դրանց սահմանումը բավական չէ. խնդիրների հետ մեկտեղ անհրաժեշտ է սահմանել նաև գործողությունները: Եթե հիմնական խնդիրները ցույց են տալիս, թե ինչ պետք է արվի, ապա գործողությունները սահմանում են, թե ով, երբ և ինչպես պետք է դա անի:

Գործողությունների սահմանմամբ հստակեցվում են այն առանձնահատուկ քայլերը, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր խնդրի կատարման համար, ներառյալ՝ ժամանակային և պատասխանատվության շրջանակները.

- գործողությունները պետք է ներկայացված լինեն հնարավորինս կոնկրետ և մանրամասնորեն: Այդպիսի մանրամասնություն ապահովելու համար դրանք կարող են ունենալ բազմաթիվ ենթանպատակներ,
- գործողությունները պետք է կոչված լինեն ծառայելու որպես ռեսուրսների համակարգման և համատեղման միջոց,
- առանձին-առանձին վերցրած գործողությունները պետք է լինեն այնքան մատչելի, որպեսզի իրականացնողների համար հնարավորություն ստեղծեն դրանք տեղավորելու ընդհանուր պատկերի մեջ,
- գործողությունները պետք է ոչ միայն նկարագրեն, թե ինչ է անհրաժեշտ անել, այլև բովանդակային առումով այնպես ձևակերպվեն, որ նաև ցույց տան, թե ինչ պետք չէ անել:

Գործողությունների պլանավորումը պետք է ունենա երեք պարտադիր բնորոշիչներ, որոնցով սահմանվեն՝

1. խնդիրների կատարման համար անհրաժեշտ մանրամասն քայլերը,
2. այդ քայլերի կատարման ժամկետները,

3. քայլերի կատարման պատասխանատուները:

Պլանավորման ընթացքում մշակման մանրամասնության մակարդակը կախված է խնդրի բարդությունից և այն հանգամանքից, թե որքանով են անհրաժեշտ այդ մանրամասնությունները: Սակայն, ամեն դեպքում, գործողությունների պլանավորումը պետք է լինի բավարար չափով մանրամասնեցված, որպեսզի ղեկավարության և բոլոր մակարդակների կատարողների համար պարզ լինեն յուրաքանչյուր քայլը, նպատակը, խնդիրը, ժամկետը և այլն:

**4-րդ փուլ. Գնահատում**

Ռազմավարական պլանավորման վերջին փուլը ռազմավարության գնահատումն է: Հաճախ պլանավորման գործընթացներն անցնում են բոլոր փուլերով, մշակվում են բարդ և բազմաքայլ պլաններ միայն այն բանի համար, որպեսզի դրանք պարզապես գոյություն ունենան, մինչդեռ այդ պլաններն այդպես էլ չեն իրագործվում կամ իրագործվում են ձևականորեն: Սա հատկապես Խորհրդային Միության պլանավորման համակարգի անկատարությունից բխող «ախտանիշ» է և առավել վտանգավոր է ռազմական ռազմավարական (երկարաժամկետ) պլանների մշակման դեպքում: Որպեսզի ռազմավարական պլանը դառնա պաշտպանության զարգացման արդյունավետ միջոց, այն պետք է մշակվի, իրագործվի, և այդ իրագործումը պետք է գնահատվի:

Գնահատման փուլը միայն պայմանականորեն կարելի է համարել վերջինը, քանի որ գնահատումը պետք է կատարվի ռազմավարական պլանավորման ամբողջ ընթացքում, որպեսզի հստակեցվի, թե որքանով է պլանը գործուն, ինչ բացթողումներ կան, փոխվել են արդյոք արտաքին և ներքին գործոնները, ինչն է պլանում համապատասխան փոփոխություններ պահանջում, պահպանվում են արդյոք կատարման ժամկետները:

Ռազմավարության մշտական գնահատումը դրա դինամիկությունն ու գործունությունն ապահովելու ամենարդյունավետ միջոցն է, ուստի բոլոր ռազմավարական փաստաթղթերը նախատեսում են այդ գնահատմամբ պայմանավորված պարբերական վերանայումներ և ճշգրտումներ<sup>5</sup>:

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Ռազմավարական պլանավորման գործընթացն արդյունավետ կերպով իրականացնելու և ճշգրիտ արդյունքներ ստանալու նպատակով կիրառվում են մի շարք սկզբունքներ և մեթոդներ:

Այդ սկզբունքներից է այսպես կոչված «սահուն» պլանավորման սկզբունքը\*, որով նախատեսվում են պարբերական ծրագրային ընթացիկ ճշգրտումներ: Մասնավորապես՝ եթե նպատակը նախատեսված է մեկ տարվա համար, ապա յուրաքանչ-

<sup>5</sup> Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 13, «ՀՀ ռազմական դոկտրին», էջ 28–30:

\* Սահուն պլանավորման սկզբունքը կիրառվում է նաև օպերատիվ պլանավորման ժամանակ:

յուր եռամսյակը մեկ դրանում կատարվում են ճշգրտումներ՝ կապված միջավայրի և այլ գործոնների փոփոխության հետ: Եթե նպատակը նախատեսված է հինգ տարվա համար, ապա նման վերանայումներ կատարվում են տարին մեկ անգամ: Սահուն պլանավորման սկզբունքը կարգավորումների արդյունավետ և ճկուն միջոց է:

Ռազմավարական պլանավորման մեջ կիրառելի սկզբունքներից է նաև «բազմատարբերականություն» սկզբունքը: Ըստ այդ սկզբունքի՝ մշակվում են պլանի ոչ թե մեկ, այլ մի քանի, որպես կանոն, երկու կամ երեք տարբերակ՝ նվազագույն, օպտիմալ և առավելագույն: Նվազագույն տարբերակը նախատեսում է զարգացման վատագույն սցենարը՝ միջոցներն ու միջավայրը, իսկ առավելագույն տարբերակը՝ լավագույն սցենարը:

Ռազմավարական պլանավորման մեջ առավել տարածված մեթոդը ՌԻԹ-ՀՄ\* վերլուծությունն է: Որպես կանոն, ՌԻԹ-ՀՄ-վերլուծությունը կատարվում է ուժեղ և թույլ կողմերը (ներքին գործոններ), ինչպես նաև հնարավորություններն ու սպառնալիքները որոշող աղյուսակների (մատրից) միջոցով.

- թվարկվում են ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև հնարավորություններն ու սպառնալիքները,

- մշակվում են այդ թվարկումներից բխող մատրիցները (քարձրից դեպի ցածր)՝ գույգերով. ուժեղ կողմեր – հնարավորություններ, ուժեղ կողմեր – սպառնալիքներ, թույլ կողմեր – հնարավորություններ, թույլ կողմեր – սպառնալիքներ:

Սակայն ՌԻԹ-ՀՄ-վերլուծության մեջ թույլ կողմեր – սպառնալիքներ մատրիցը հիմնականում չի կիրառվում, քանի որ տվյալ մեթոդաբանության դեպքում այն պարզապես անիմաստ է (սպառնալիքների համատեքստում թույլ կողմերը էլ ավելի են թուլանում):

ՌԻԹ-ՀՄ-վերլուծության համար անհրաժեշտ չէ ունենալ հատուկ պատրաստություն կամ տվյալների լայն բազա: Յուրաքանչյուր անձ, որը քիչ թե շատ տեղյակ է տվյալ ոլորտի խնդիրներին, կարող է կատարել նման վերլուծություն՝ ՌԻԹ-ՀՄ մեթոդի կիրառմամբ: Սակայն մեթոդի գերպարզությունը կարող է հանգեցնել հապշտապ և ոչ ճշգրիտ եզրակացությունների: Մյուս կողմից՝ թեև ՌԻԹ-ՀՄ-ն ամբողջ աշխարհում վերլուծության ամենաընդունված և ամենատարածված մեթոդն է, բայց երկարաժամկետ վերլուծության ու պլանավորման դեպքում այնքան էլ ճշգրիտ չէ, քանի որ վերլուծության բաղադրիչները խիստ փոփոխական են (ժամանակի ընթացքում ուժեղ կողմերը կարող են թուլանալ, սպառնալիքները կարող են էլ ավելի ուժգնանալ, կամ հնարավորությունները կարող են չարդարացնել իրենց):

ՌԻԹ-ՀՄ-վերլուծությանը զուգընթաց մշակվում են դրա բաղադրիչների փոփոխման դինամիկան որոշող այլ աղյուսակներ: Թեև մեթոդը պարզ է, այդուհանդերձ, նպատակահարմար է, հատկապես՝ պաշտպանական ոլորտում ՌԻԹ-ՀՄ-վերլուծությունը հանձնարարել մասնագետների:

\* ՌԻԹ-ՀՄ՝ *SWOT* – Strengths – ուժեղ (կողմեր), *Weaknesses* – թույլ (կողմեր), *Opportunities* – հնարավորություններ, *Threats* – սպառնալիքներ: Առաջին անգամ ՌԻԹ-ՀՄ-վերլուծության մասին խոսել է պրոֆեսոր Բ. Էնդրյուն՝ 1963 թ. Հարվարդում բիզնես-խնդիրներին նվիրված համաժողովում:

## ԱՄՓՈՓՈՒՄ

2008 թ. սկսվեց ՀՀ Ջինվաժ ուժերի պաշտպանական բարեփոխումների երկրորդ փուլը: Ըստ էության, բարեփոխումների առաջին փուլի նպատակն էր ՋՈՒ-ի հեռանկարային զարգացումն ապահովող բարեփոխումների իրականացման համար ամուր հիմքերի ստեղծումը: Ուստի այդ փուլում որպես բարեփոխումների հայեցակարգային հիմք առաջին հերթին մշակվեցին հայեցակարգային մոտեցումներ ու համապատասխան փաստաթղթեր («ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն» և «ՀՀ ռազմական դոկտրին») և իրավական հիմք ապահովելու համար իրականացվեցին առաջնահերթ օրենսդրական բարեփոխումներ:

Ուսումնասիրական պլանավորման տեսանկյունից կարելի է նույնպես ավարտված համարել առաջին՝ նախադրման, փուլը, քանի որ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունն» ու «ՀՀ ռազմական դոկտրինը» սահմանեցին ՀՀ Ջինվաժ ուժերի առաքելությունն ու տեսլականը, ինչպես նաև ռազմավարական նպատակները: 2008–2010 թթ. ընթացքում կիրականացվի ռազմավարական պլանավորման երկրորդ՝ կանխատեսման ամենապատասխանատու փուլը՝ Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացի ձևով:

## ОБОРОННЫЕ РЕФОРМЫ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЧЕСКОГО ПЛАНИРОВАНИЯ: МЕТОДОЛОГИЯ И ПОДХОДЫ

*Л. Г. АЙВАЗЯН, майор, заместитель начальника отдела разработки оборонных программ Управления МВС и ОП МО РА*

### РЕЗЮМЕ

Современная военная наука проявляет специализированный и глубокий подход к вопросу планирования. В частности, полностью разделены понятия «оперативное» и «стратегическое» планирование, которые требуют соответствующих возможностей.

Благодаря стратегическому планированию, западным государствам удается осуществлять долгосрочное точное планирование сил и возможностей, разрабатывать научно обоснованные планы развития ВС и целенаправленную оборонную политику, осуществлять адекватный изменениям военно-политической обстановки стратегический пересмотр ВС, за короткий срок приводя силы и возможности в соответствие с новой ситуацией. В целом, основу эффективности деятельности ВС составляет осуществление созвучного с оборонной политикой стратегического планирования.

Задачи второго этапа оборонных реформ в РА неизбежно приводят к необходимости повышения уровня планирования вооруженных сил от оперативного до стратегического, формирования культуры и соответствующих возможностей стратегического планирования. В частности, этой цели послужит создание звеньев стратегического планирования (в Министерстве обороны РА—Управление оборонной политики, в Главном Штабе ВС—Управление стратегического планирования), которые станут прочной основой для руко-

водства ВС РА при принятии долгосрочных решений, в частности, при оценке ситуации, вне зависимости от прогнозов дальнейшего развития, при определении необходимых изменений, разработке соответствующих стратегий, выборе и использовании эффективных средств их осуществления.

## DEFENSE REFORMS IN THE CONTEXT OF STRATEGIC PLANNING: METHODOLOGY AND APPROACHES

*L. G. AYVAZYAN, Major, Deputy Head of the Department of Defense Programs  
Elaboration of the Board of IMC and DP, MoD, RA*

### SUMMARY

The contemporary military science manifests a specialized and profound approach to the planning issue. Particularly, the notions «operative» and «strategic» planning are completely separated, which require relevant opportunities.

Owing to strategic planning, the Western States succeed in implementing long-term precise planning of forces and opportunities, elaborating scientifically grounded plans for the development of the Armed Forces and targeted defense policy, and carrying out strategic review of the Armed Forces, adequate to the changes of military-political environment, and that makes forces and opportunities conform to the new situation in short term. On the whole the basis of efficient activities of the Armed Forces is the implementation of strategic planning sound with defense policy.

The tasks of the second stage of the RA defense reforms necessarily raise the level of the Armed Forces planning from the operative to strategic one, forming the culture and corresponding opportunities of strategic planning. Particularly, the creation of strategic planning links will serve that goal (the Board of Defense Policy—in the RA Ministry of Defense, the Board of Strategic Planning—in the Main Staff of the Armed Forces), which will become a firm basis for the RA AF governance while making long-term decisions, particularly, while assessing the situation, irrespective of prognoses of further development, and while defining necessary changes, elaborating corresponding strategies, choosing and using effective means for their implementation.

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ  
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԸՆՆԱՐԿՈՒՄ

*Ա. Ա. ԵԴԻԳԱՐՅԱՆ, ՀՀ ԱԳՆ Սպառազինությունների վերահսկման  
և միջազգային անվտանգության վարչության պետ*



Հարավային Կովկասում ԽՍՀՄ փլուզման հետևանքով ստեղծված աշխարհաքաղաքական վակուումի, ժամանակակից պետական կառույցներ չլինելու և ուժգնացող էթնոքաղաքական հակամարտությունների պայմաններում Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը վերսկսեցին, իսկ պետական շինարարության որոշ կարևորագույն ոլորտներում «դատարկ էջից» մեկնարկեցին կենսունակ պետականության կերտման մրցավազքը: «Գատարկ էջի» իրավիճակն առաջին հերթին վերաբերում էր այդ երկրների ազգային պաշտպանական և արտաքին քաղաքական կառույցների ստեղծմանն ու կայացմանը, ապա նաև ժամա-

նակի թելադրանքով՝ դրանց կատարելագործմանը:

Հաշվի առնելով այն պարզ հանգամանքը, որ ինչպես երկրի ամբողջ քաղաքական ու սոցիալ-տնտեսական ոլորտների կառավարման համակարգի, այդպես էլ դրանց ուրույն մաս կազմող պաշտպանական բնագավառի բարեփոխումները պետք է ծառայեն ազգային շահերի իրականացմանը, հարավկովկասյան երեք պետություններն էլ որդեգրեցին պաշտպանական ոլորտի բարեփոխումների տարբեր ճանապարհներ, որոնք, սակայն, երեք դեպքերում էլ, ի վերջո, տրամաբանորեն ուղղված են այդ ոլորտի հնարավորինս մոտեցմանը արդի լավագույն միջազգային ստանդարտներին:

Հեռու լինելով այն մտքից, որ հենց Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունն է այսօր մենաշնորհային կերպով ներկայացնում այդ լավագույն ստանդարտները, այնուամենայնիվ, փորձենք առավելապես հակիրճ կերպով ներկայացնել երեք հարավկովկասյան պետություններում ՆԱՏՕ-ի հետ համագործակցությամբ իրականացվող պաշտպանական բարեփոխումների տրամաբանության և նպատակների համեմատականը:

Հարավային Կովկասի երեք պետություններն էլ՝ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը, ՆԱՏՕ-ի հետ ներկայումս ունեն հարաբերությունների որոշակի մակարդակ և քիչ թե շատ համեմատելի դինամիկա: Երեքն էլ Եվրաստրատևյան գործընկերության խորհուրդը (ԵԱԳ-Խ) կազմող 47 պետությունների շարքում են, «Գործընկերություն հանուն խաղաղության» (Գ-ՀԽ) և դրա շրջանակներում իրականացվող «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» (ԱԳ-ԳԾ), ինչպես նաև «Պլանավորման և վերանայման գործընթացի» (ՊՎԳ) մասնակիցներ



են: Ասելով «քիչ թե շատ համեմատելի» դիմամիկա՝ նկատի ունենք գլխավորապես երկու հանգամանք.

- ժամկետային առումով երեք պետությունների ներկայացվածության համընկնումը նշված ատյաններում և ծրագրերում, որը տարբերվում է, միգուցե, հաշվված ամիսներով,

- երեք պետություններում ԱԳԳԾ-ների իրականացման տեմպերը, այսինքն՝ ծրագրով սահմանված նպատակների իրագործման ժամանակացույցի կատարումը:

Կարելի է արձանագրել, որ 2008 թ. օգոստոսին ՆԱՏՕ – Վրաստան հանձնաժողովի ստեղծմամբ Վրաստանը դաշինքի հետ մերձեցման գործընթացում առաջ անցավ իր երկու հարևաններից, սակայն, տպավորությունն այլ կլինի, եթե անտեսվեն այդ ատյանի ստեղծման քաղաքական դրդապատճառներն ու նկատառումները, որոնք կապված են Վրաստանի և Հյուսիսատլանտյան դաշինքի որոշ անդամների հեռագնա նպատակների հետ:

Եթե ՆԱՏՕ-ի հետ ընթացող համագործակցությունը դիտարկենք այդ կազմակերպությանը նրանց հնարավոր անդամակցության տեսանկյունից, ապա կհամոզվենք, որ այս հարցում հարավկովկասյան պետությունների դիրքորոշումները տարբեր են:

Վրաստանն իր քաղաքականության գլխավոր նպատակ է սահմանել անդամակցությունը ՆԱՏՕ-ին՝ մշտապես որպես շարժառիթ մատնանշելով Վաշինգտոնյան պայմանագրի 5-րդ հոդվածը:

Այդ նպատակին են ամբողջովին ծառայեցված Վրաստանի պաշտպանական ոլորտում իրականացվող արմատական բարեփոխումները: Այդ գործընթացը ծավալվել է «Պաշտպանության ռազմավարական վերանայման» համալիր ծրագրի շրջանակներում՝ ՆԱՏՕ-ի հետ ամբողջովին համատեղելի ՋՈՒ-ի ստեղծման նպատակով: Ավելի ճշգրիտ ասած՝ դա նշանակում է.

- մարտունակության մակարդակի բարձրացում,
- ռազմական ենթակառուցվածքի բարելավում,
- նյութական և մարդկային ռեսուրսների կառավարման ՆԱՏՕ-ի համակարգերի ընդօրինակում,

- ռազմական կրթության և մարտական պատրաստման համակարգի ստեղծում՝ ըստ ՆԱՏՕ-ի ստանդարտների,

- կապի այնպիսի համակարգի ստեղծում, որը ՆԱՏՕ-ի հետ համատեղելի լինի,
- թիկունքային ապահովում՝ ըստ ՆԱՏՕ-ի ստանդարտների:

Եթե Վրաստանում ռազմական ոլորտի բարեփոխումների արդյունավետությունը դիտարկենք 2008 թվականի օգոստոսյան պատերազմի տեսակետից, ապա առաջին հայացքից կարելի է արձանագրել, որ դրա մակարդակը բավականին ցածր է: Սակայն այդ գնահատականը կարող է լինել ոչ այնքան ճշգրիտ, եթե հաշվի առնենք պատերազմում կարճ ժամանակահատվածում հաղթող կամ պարտվող լինելու քաղաքական վճռի հարաբերականությունը, զինված բախման վերջնարդյունքի վրա ազդող բազում գործոնների շարանը, այդ թվում՝ քաղաքական որոշումների, ինչպես

ման ռազմավարական և օպերատիվ պլանավորման քերթությունները: Ընդունենք, որ վրացական բանակի որոշ ստորաբաժանումներ, օրինակ, Իրաքից շտապ տեղափոխված բանակային Առաջին բրիգադը, ցուցաբերեցին բարձր մակարդակի պատրաստություն՝ կարողանալով ռուսաստանյան զորքի վճռորոշ առաջխաղացման հետևանքով Յիսինվալը կորցնելուց և վրացական ռազմական ավիացիան ոչնչացվելուց հետո ստեղծված ծանր իրավիճակում օգոստոսի 9-ին կազմակերպել Պլիսյան բարձունքներից հակահարձակում Հարավային Օսեթիայի մայրաքաղաքի ուղղությամբ<sup>1</sup>:

Չնայած վրաց-ռուսական պատերազմում կրած պարտությանը՝ Վրաստանի Ջինված ուժերում «արևմտամետ» բարեփոխումների գործընթացը վերստին կարելի է գնահատել որպես անդառնալի:

ՆԱՏՕ-ին անդամակցելու իր մտադրությունը չի ժխտում նաև Ադրբեջանը: Սակայն Ադրբեջանի ղեկավարությունը հանդես չի գալիս այդ մասին հրապարակային հայտարարություններով՝ գերադասելով զբաղեցնել սպասողական դիրք, որպեսզի խուսափի Ռուսաստանն ու Իրանն անիմաստ կերպով օտարացնելուց, եթե ոչ թշնամացնելուց\*:

Չի կարելի ասել, որ նույն սպասողական վիճակը տիրում է Ադրբեջանի բանակաշինության ոլորտում, որն զգալիորեն աշխուժացել և զարգանում է (ի դեպ, ինչպես նաև այդ երկրի արտաքին քաղաքականության իրականացմամբ զբաղվող կառույցի գործունեությունը) հատկապես Ի. Ալիևի իշխանության գալուց հետո: Եվ հարցը միայն հինգ տարում ռազմական բյուջեի գրեթե տասնապատիկ աճումը չէ: Կան հիմքեր պնդելու, որ, ի տարբերություն Հեյդար Ալիևի կառավարման ոճից, կրտսեր Ալիևը պետական կառավարման մարմինները, այդ թվում և պաշտպանական ոլորտը, զարգացնում է հետևողականորեն և, ինչն ավելի կարևոր է, համակարգված ձևով: Ադրբեջանում պաշտպանական բարեփոխումների հիմքում դրված է ոլորտի ռազմաքաղաքական ղեկավարման, զինված ուժերի կառավարման ու գործունեության կազմակերպման համակարգերի վերափոխումը՝ ԱՄՆ-ի և Թուրքիայի փորձի օգտագործմամբ: Փորձագետների շրջանում ընդունված է, որ Ադրբեջանի պաշտպանական ոլորտի բարեփոխումների գլխավոր նպատակն է արդյունավետ ռազմաքաղաքական ղեկավարության (Պաշտպանության նախարարություն՝ Պենտագոնի մոդելով) և

<sup>1</sup> Տես *E. Григорьев*. Грузинские генералы винят Саакашвили. «Независимая газета», 10 сентября 2008 г.:

\* Հեղինակը 2006 թ. հունվարին ներկա էր բրիտանական ՌԻԽթոն Փարկի համաժողովներից մեկին, որտեղ ՆԱՏՕ–Ադրբեջան հարաբերությունների թեմային նվիրված ելույթով հանդես եկավ ԱդրՀ փոխարտգործնախարար Ա. Ազիմովը: ՆԱՏՕ-ին Ադրբեջանի հավանական անդամակցության վերաբերյալ ամերիկացի մասնակիցներից մեկի հարցին Ա. Ազիմովը պատասխանեց բառացիորեն հետևյալը. «Մենք պատրաստ կլինենք անդամակցելու ՆԱՏՕ-ին, երբ վերջինս պատրաստ լինի իր շարքերն ընդունելու Ադրբեջանը»: Ազիմովի այս պատասխանը, ինչպես նաև այլ առյուծկերպերում Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների նմանատիպ հայտարարությունները հաստատում են, որ ադրբեջանական իշխող քաղաքական ընտրախավի շրջանում գերակայում է նշված սպասողական դիրքը:

ԶՈՒ-ի ռազմական կառավարման ուժեղ մարմնի (Գլխավոր շտաբ՝ Թուրքիայի ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի մոդելով) համադրումը:

Կարելի է ենթադրել, որ այդ մտեցումը, բացի համակարգային արդյունավետության մակարդակի բարձրացմանն ուղղված լինելուց, կարող է Ադրբեջանի իշխանություններին ծառայել պաշտպանական համակարգի կառավարելիությունն իր համար ավելի դյուրին դարձնելու նպատակով՝ այդ բնագավառում պետական կառավարման քաղաքականության հակակշիռների (ՊՆ-ԳՇ) ստեղծման առումով: Այս պնդումը զուրկ չէ տրամաբանությունից. եթե հիշենք, օրինակ, այդ երկրում 1990-ական թվականների առաջին կեսին իրականացված զինվորական հեղաշրջումը, ինչպես նաև հայտնի կամ անհայտ մնացած մի շարք նմանատիպ փորձեր:

ՆԱՏՕ-Ադրբեջան ԱԳ-ԳՇ-ի բովանդակության և ընթացքի մասին բաց աղբյուրներից ստացվող տվյալները սակավաթիվ են: Ամենայն հավանականությամբ, Ադրբեջանը մասամբ կամ ամբողջովին չի կատարել ՆԱՏՕ-ի կողմից գործընկեր երկրներին առաջադրվող ԱԳ-ԳՇ-ի գաղտնագերծման պահանջը, ինչպես արել են Վրաստանն ու Հայաստանը: Մասնագետների կարծիքով՝ սա կարող է լինել ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային անվտանգության հարցերում Ադրբեջանի կողմից թաքցվող ռազմավարական մտադրությունների վկայություն:

Ոչ պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ Ադրբեջանի ԱԳ-ԳՇ-ի և ՊՎԳ գլխավոր ուղղվածությունն է մարտավարական և օպերատիվ մակարդակներում ՆԱՏՕ-ի հետ համատեղելի ԶՈՒ-ի ստեղծումը: Դա նախատեսում է բրիգադ-կորպուս օպերատիվ-մարտավարական օղակում ՆԱՏՕ-ի հետ բարձր աստիճանի համատեղելիության ապահովում: Թե որքանով է այդ նրանց հաջողվում, ներկայումս բաց հարց է, քանի որ ժամանակ առ ժամանակ Բրյուսելից հնչում են դժգոհության երանգներ՝ կապված Ադրբեջանի ԶՈՒ-ում բարեփոխումների դանդաղ ընթացքի հետ: Չի նկատվում նաև բարեփոխումների անդառնալիության երանգը, որն առկա է Վրաստանի պարագայում: Այդուհանդերձ, քաջ հայտնի է, որ Ադրբեջան-ՆԱՏՕ ռազմական համագործակցության ասպարեզում առաջնայնությունը տրվում է Թուրքիային:

Ադրբեջանում նաև մեծ ուշադրություն է դարձվում տարբեր մակարդակների սպայակազմի համար ՆԱՏՕ-ի ստանդարտներին համապատասխանող ռազմական կրթության մատչելիության ապահովմանը\*:

Ադրբեջանում ընթացող ռազմական ոլորտի բարեփոխումների վերաբերյալ արևմտյան փորձագետների կարծիքը, քննադատության մասով, խտացված կերպով հանգում է հետևյալ կետերին: Եթե Ադրբեջանի կառավարությունը իրոք ձգտում է ունենալու ավելի արդյունավետ, ՆԱՏՕ-ի ստանդարտներին ավելի համապատասխանող զինված ուժեր, որոնք ենթակա կլինեն ավելի բարձր աստիճանի քաղաքացիական վերահսկողության, ապա այն պետք է.

\* Հեղինակը 2006 թ. նոյեմբերին Օբերամերգաումում (Գերմանիա) մասնակցել է ՆԱՏՕ-ի դպրոցի դասընթացներից մեկին: Այնտեղ այդ պահին միաժամանակ ընթանում էին 3 դասընթացներ, որոնց ներկա էին 4-5 ադրբեջանցի սպա՝ կապիտանից մինչև գնդապետ կոչումներով:

• ուժեղացնի երկրի օրենսդիր մարմնի վերահսկիչ կարողությունները, հատկապես՝ պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի ու վերահսկիչ պալատի գործառնությունների առումով, ինչպես նաև խրախուսի ռազմական բարեփոխումների բնագավառում ավելի իրազեկ լինելու նպատակով պատգամավորների վերապատրաստումը՝ սեմինարների և գիտաժողովների հետևողական անցկացման միջոցով,

• Ադրբեջան–ՆԱՏՕ ԱԳ-ԳԾ-ի հրապարակման միջոցով բարելավի հանրային իրազեկումը, ինչպես նաև խթանի հանրության մասնակցությունը անվտանգության ոլորտի կառավարման աշխատանքներին՝ մեծացնելով տեղեկատվության մատչելիությունը և հիմնելով պաշտպանության նախարարության մշտապես թարմացվող ինտերնետային կայք,

• ուժեղացնի քաղաքացիական վերահսկողությունը պաշտպանության նախարարության նկատմամբ,

• ավարտին հասցնի Ռ-ազմական դոկտրինի մշակումը և անցկացնի Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը,

• բարելավի զինվորական օրենսդրությունը՝ համաձայն պետության ստանձնած մարդու իրավունքների պաշտպանության միջազգային պարտավորությունների, հատկապես՝ զինծառայողներին առանց համապատասխան դատավճռի կալանման առումով, ընդունի նոր օրենք այլընտրանքային զինծառայության մասին և ստեղծի մարդու իրավունքների զինվորական պաշտպանի՝ օմբուդսմենի պաշտոն,

• բարելավի զինվորական կադրերի կառավարումն ու վերապատրաստումը՝ վճարման և փոխհատուցման, սպայական շրջափոխության (ռոտացիայի), ռեզերվիստների վերապատրաստման, ռազմական կրթության և ծառայողական առաջխաղացման ապահովման արդյունավետ համակարգերի ստեղծման միջոցով:

Փորձագետները նաև ցանկալի են համարում, որ Ադրբեջանի հետ իր հարաբերություններում ՆԱՏՕ-ն ներկայումս կենտրոնանա վերը նշված կետերի հետևողական իրականացման վրա՝ սահմանափակելով ԱԳ-ԳԾ-ի շրջանակներում համագործակցությունը, քանի դեռ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորված չէ<sup>2</sup>:

Ինչպես Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Ռ. Քոչարյանի, այդպես էլ ներկայիս նախագահ Ս. Սարգսյանի վարչակազմերը երկրի քաղաքական օրակարգում ՆԱՏՕ-ին անդամակցելու հարց չեն դնում: Տեսանելի ապագայի համար Հայաստանն արդեն ընտրել է իր ազգային շահերից բխող անդամակցությունն անվտանգության այլ կառույցում: ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններում Հայաստանը որդեգրել է պրակտիկ ուղղություն՝ սերտորեն համագործակցել այդ կազմակերպության հետ այն կոնկրետ ոլորտներում, որոնք ուղղակիորեն նպաստում են երկրի անվտանգության և պաշտպանական բնագավառների կատարելագործմանը և բնականոն զարգացմանը:

<sup>2</sup> Տես «International Crisis Group, ICG, Azerbaijan: Defence Sector Management and Reform». Europe Briefing № 50, 2008, 29 October:

Եվրաստանի տարածքային կապերի ակտիվացումն առաջին հերթին պայմանավորված է ՆԱՏՕ-ի և Եվրամիության ընդլայնման գործընթացներով, «Եվրոպական հարևանության» ծրագրում Հարավային Կովկասի ներառմամբ և այն հանգամանքով, որ Եվրաստանի տարածքում և Եվրոպական կառույցների հետ սերտ կապերի հաստատումը հռչակվել է Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություն<sup>3</sup>:

Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները տեսանելի ապագայում խարսխված են լինելու «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» վրա: Այդ ծրագրի իրագործումը միտված է Հայաստանում պաշտպանական և, ավելի լայն իմաստով, քաղաքական հաստատությունների բարեփոխմանը, անվտանգության, պաշտպանության ու ճգնաժամային կառավարման կառույցների արդիականացմանը, մարտավարական և օպերատիվ մակարդակներում ՆԱՏՕ-ի անդամ երկրների ուժերի հետ Հայաստանի խաղաղապահ ստորաբաժանումների գործակցելիության ապահովմանը: Ավելի լայն քաղաքական իմաստով ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների զարգացումը նաև ուղղված է կազմակերպության անդամ եվրոպական երկրների հետ երկկողմ համագործակցության ամրապնդմանը:

Պաշտպանական բնագավառում Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությունը զարգանում է հետևյալ առանցքային ուղղություններով.

- ռազմական կրթություն,
- պաշտպանական պլանավորում և բյուջետավորման ոլորտի բարելավում,
- թիկունքային ապահովման բարելավում,
- փոխգործության հաստատում և ընդլայնում, առավելագույնը՝ բրիգադի մակարդակով:

Առաջին երեք ոլորտներում բարեփոխումների հետևողական իրականացմամբ Հայաստանը, ինչպես արդեն նշվեց, հիրավի ձգտում է հնարավորինս մոտենալու արդի լավագույն միջազգային ստանդարտներին: ՆԱՏՕ-ի հետ փոխգործելիության կամ համատեղելիության հաստատման ոլորտի զարգացումն ունի որոշակի օբյեկտիվ սահմանափակումներ, որոնք ուղղակիորեն կապված են անվտանգության այլ կառույցում Հայաստանի լիարժեք անդամակցության հետ, ինչպես նաև այն հանգամանքի հետ, որը վերացական իմաստով լավ արտահայտում է հայտնի ժողովրդական ասացվածքը, թե՛ «գետն անցնելիս ձիեր չեն փոխում», այսինքն՝ մեր տարածաշրջանում ներկայումս տիրող փխրուն ռազմաքաղաքական իրավիճակի պայմաններում Հայաստանը, ի տարբերություն իր երկու հարևաններից, չի կարող նշված ոլորտում իրեն թույլ տալ հեղափոխական փոփոխությունների շքեղությունը: Այս պայմաններում նման մոտեցումը կարող է վտանգել Հայաստանի պաշտպանունակությունը ինչպես քաղաքական և նյութատեխնիկական, այնպես էլ անգամ բարոյահոգեբանական առումով:

Այստեղ հարկ է ավելացնել հետևյալը. որպես Հայաստանի պաշտպանական

<sup>3</sup> «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 33–34:

ոլորտի բարեփոխումների «հաջորդ սերնդի» գործողություն՝ ծրագրված է կատարել Պաշտպանության ռազմավարական վերանայում: Պաշտպանության ռազմավարական վերանայման համալիր գործընթացը բխում է «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինից»<sup>4</sup> և, ի թիվս այլ նպատակների, նախատեսում է առկա սպառնալիքների վերագնահատում ու երկարաժամկետ հեռանկարում ռազմական ռազմավարության առաջնահերթությունների հստակեցում և, ըստ այդմ, ՀՀ ՋՈՒ-ում առկա կարողությունների ու կարիքների համապատասխանեցում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է նշել, որ, բացառությամբ ՆԱՏՕ-ի ՋՈՒ-ի հետ համատեղելիության ոլորտից, պաշտպանական բարեփոխումները երեք հարավկովկասյան պետություններում ընթանում են եթե ոչ նույն տրամաբանությամբ, ապա զուգահեռ ուղղություններով: Տարբերվում է Արևմուտքի հետ ռազմական համակարգերի ինտեգրման խորությունը. իրավիճակային սպեկտրի մեկ կողմում Վրաստանն է՝ որպես ամենաինտեգրված, մյուս եզրում՝ Հայաստանը՝ որպես ՆԱՏՕ-ի ռազմական կառույցների հետ համեմատաբար նվազ ինտեգրման աստիճան ունեցող երկիր: Ադրբեջանն էլ, դատելով եղած տեղեկույթից, դրանց միջակայքում է:

Ի մի բերելով ներկայացված համեմատական դիտարկումները՝ կարելի է արձանագրել, որ պաշտպանական բարեփոխումների ոլորտում Հայաստանի վարած չափավոր և հավասարակշռված քաղաքականությունը տվյալ պահին լիովին նպաստում է մեր Հայրենիքի ազգային շահերի իրականացմանը, հատկապես՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների ռազմաքաղաքական անվտանգության ապահովմանը:

<sup>4</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեքստեր», 2007, հմ. 4, էջ 28:

## СРАВНИТЕЛЬНОЕ ОБСУЖДЕНИЕ ЦЕЛЕЙ РЕФОРМ ОБОРОННОЙ СФЕРЫ ЮЖНОКАВКАЗСКИХ ГОСУДАРСТВ

А. А. ЕДИГАРЯН, начальник Управления контроля над вооружениями  
и международной безопасности МИД РА

### РЕЗЮМЕ

В статье проводится компаративный анализ целей оборонных реформ в трех южнокавказских республиках. Отмечается, что каждая страна, осуществляя реформы, в частности, по программам ПДИП (ИРАР) с НАТО, преследует различные цели. Грузия преследует цель вступления в НАТО, в связи с чем нацеливает реформы на внедрение стандартов НАТО и обеспечение полной интероперабельности с ВС стран—членов Альянса. Азербайджан стремится использовать реформирование своей оборонной системы в рамках ПДИП для наращивания военного потенциала, возможно, в целях разрешения Карабахского конфликта вооруженным путем, а также для обеспечения интеропера-

бельности с ВС стран НАТО, в первую очередь—со своим стратегическим партнером Турцией. Армения осуществляет сотрудничество с НАТО в рамках диверсификации программ военно-политического сотрудничества, направленных на повышение обороноспособности страны и, в частности, обеспечение интероперабельности создаваемой миротворческой бригады для участия в миротворческих операциях.

A COMPARATIVE EXAMINATION  
OF THE DEFENSE REFORM GOALS  
IN THE SOUTH CAUCASUS STATES

A. A. YEDIGARIAN, *Director, Department of Arms Control  
and International Security, MFA, RA*

SUMMARY

A comparative analysis of goals of the defense reforms in the three South Caucasus republics is presented in this article. It is mentioned that each country, while implementing reforms, particularly through IPAP Programs with NATO, pursues different goals. Georgia is pursuing the objective to join NATO, and hence it is directing its reforms towards introducing NATO standards and ensuring complete interoperability with the Armed Forces of member countries of the Alliance. Azerbaijan is trying to exploit reforming in its defense sphere within the framework of IPAP for developing its military potential, possibly to resolve the Karabakh conflict through military means, as well as to ensure interoperability with the Armed Forces of NATO countries, especially, with those of its strategic partner Turkey. Armenia is cooperating with NATO within the framework of diversification of the military-political cooperation programs aimed at enhancing the defense capability of the country, including the provision of interoperability for its peace-making brigade currently being formed to participate in the peacekeeping operations.

ՀԱՊԿ-Ի ՆՈՐ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Ս. Օ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, գեղասպետ, ՀՀ ՊՆ ՄՈՂ և ՊԾ վարչության  
միջազգային ռազմական համագործակցության  
բաժնի պետ-վարչության պետի տեղակալ*

2008 թ. Հայաստանի Հանրապետությունը Ղրղզստանի Հանրապետությունից ընդունեց նախագահությունը Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) Հավաքական անվտանգության խորհրդում (ՀԱԽ): ՀԱՊԿ-ի ՀԱԽ-ում նախագահության հանձնման ընթացակարգը կատարվեց ՀԱՊԿ-ի կանոնադրության 13-րդ հոդվածին համապատասխան:



Նույն հոդվածով նախատեսվում է, որ խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպության մարմինների կողմից ընդունվող որոշումների իրականացման գործում անդամ պետությունների փոխգործության համակարգման հարցերով զբաղվում է «Կազմակերպությանը առընթեր մշտական խորհուրդը», որը սահմանված ընթացակարգերին համապատասխան՝ գլխավորեց Մշտական խորհրդում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչը:

Կազմակերպության կանոնադրական մարմինների կանոնադրություններին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներին է անցել նախագահությունը նաև Արտաքին գործերի նախարարների խորհրդում, Պաշտպանության նախարարների խորհրդում և Անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեում: Կազմակերպության Միացյալ շտաբը գլխավորեց Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի Գլխավոր շտաբի պետը:

Հայաստանի Հանրապետությունը արդեն նախագահել էր ՀԱԽ-ում և ՀԱՊԿ-ի կանոնադրական մարմիններում: Հայաստանի Հանրապետության նախորդ նախագահության ընթացքում ընդունվել են կազմակերպության զարգացման ուղղությունը երկարաժամկետ հեռանկարով կանխորոշող այնպիսի կարևոր փաստաթղթեր, ինչպիսիք են Հավաքական անվտանգության խորհրդի որոշումը ՀԱԽ-ի կանոնադրության նոր խմբագրման մասին և Խորհրդի մարմինների կանոնադրությունները պայմանագրի շրջանակներում ծավալված համագործակցության արդի փուլի խնդիրներին համապատասխանեցնելու անհրաժեշտության վերաբերյալ, Հավաքական անվտանգության մասին պայմանագրի (ՀԱՊ) մասնակից պետությունների կողեկտիվ



անվտանգության համակարգի ուժերի և միջոցների ձևավորման ու գործառնման կարգի մասին արձանագրությունը, որի հիմքում դրված է Հավաքական անվտանգության համակարգի ձևավորման տարածաշրջանային սկզբունքը, և ըստ որի սահմանվել են Հավաքական անվտանգության տարածաշրջանները, Հավաքական անվտանգության Կենտրոնասիական տարածաշրջանի արագ ծավալման Հավաքական ուժերի Կանոնադրությունը և այլն: Ընդհանրապես, պետք է նշել Հայաստանի Հանրապետության ակտիվ դերը ՀԱՊԿ-ի գործունեության, պայմանագրի գործառնման մեխանիզմի բարեփոխման ու միջազգային հարաբերությունների արդի համակարգին համապատասխանեցման հարցում:

ՀԱՊԿ-ի Գլխավոր քարտուղար Ն. Բորդյուժան նշել է. «Հայաստանի Հանրապետությունը ՀԱՊԿ-ի անդամ պետությունների դաշնակցային հարաբերությունների համակարգում հուսալի, ժամանակով ստուգված գործընկեր է: Նա հանգուցային դեր է խաղում կոլեկտիվ անվտանգության Կովկասյան տարածաշրջանի գորքերի միացյալ խմբավորման կազմում, արտաքին քաղաքականության հարցերում, ակտիվորեն համագործակցում է այլ անդամ պետությունների հետ՝ հակազդելով արդի սպառնալիքներին և մարտահրավերներին: Այդ բոլոր գործերում մեր հայ ընկերները և գործընկերները աչքի են ընկնում նախաձեռնողականությամբ, ընդունված որոշումների իրականացման համար բարձր պատասխանատվությամբ, ՀԱՊԿ-ի ձևաչափում ինտեգրման գործընթացների հետագա խորացման պատրաստակամությամբ»<sup>1</sup>:

Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը ստորագրվել է 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում: Հայաստանի Հանրապետությունը Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և ՌԻգբեկստանի Հանրապետության հետ նրա հիմնադիրներից էր: Ավելի ուշ ՀԱՊԿ-ին միանալու փաստաթուղթն ստորագրեցին՝ 1993 թ. սեպտեմբերի 24-ին՝ Ադրբեջանի Հանրապետությունը, 1993 թ. դեկտեմբերի 9-ին՝ Վրաստանը, 1993 թ. դեկտեմբերի 31-ին՝ Բելառուսի Հանրապետությունը:

Հավաքական անվտանգության մասին պայմանագիրն ստորագրված էր հետխորհրդային տարածքի պետությունների համակողմանի զարգացման համար բարենպաստ ու կայուն պայմանների ստեղծման նպատակով՝ ի շահ կոլեկտիվ անվտանգության ապահովման, և բաղկացած էր 11 հոդվածից: Պայմանագիրը ենթակա էր մասնակից պետությունների կողմից վավերացման (Հայաստանի Հանրապետությունն առաջիններից վավերացրեց այն 1992 թ. հուլիսի 28-ին) և ուժի մեջ մտավ 2004 թ. ապրիլի 20-ին, համաձայն 11-րդ հոդվածի՝ 5 տարի ժամկետով: 1995 թ. նոյեմբերի 1-ին Պայմանագիրը գրանցվեց Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում (գրանցման վկայական հմ. 41878):

Պայմանագրով նախատեսվում էր, որ մասնակից պետությունները պետք է իրենց շահերը շոշափող միջազգային անվտանգության բոլոր կարևոր հարցերով

<sup>1</sup> «Интервью Генерального секретаря Организации Договора о коллективной безопасности Николая Бордюжи Агентству международной информации «Новости-Армения»» (<http://newsarmenia.ru/exclusive/20070118/41627762.html>).

խորհրդակցեն միմյանց հետ, և իրենց դիրքորոշումները համաձայնեցնեն այդ հարցերի առնչությամբ<sup>2</sup>: Պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսվում էր, որ եթե մասնակից պետություններից մեկը ինչ-որ պետության կամ պետությունների կողմից ենթարկվի ագրեսիայի, ապա դա կդիտվի որպես ագրեսիա Պայմանագրի բոլոր մասնակից պետությունների դեմ<sup>3</sup>: Նույն հոդվածով նախատեսվում է նաև, որ ցանկացած մասնակից պետության դեմ ագրեսիայի ակտ իրականացվելու դեպքում մնացած բոլոր մասնակից պետությունները նրան կտրամադրեն անհրաժեշտ օգնություն, այդ թվում՝ ռազմական, ինչպես նաև կաջակցեն իրենց տրամադրության տակ գտնվող միջոցներով՝ ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն կոլեկտիվ պաշտպանության իրավունքների իրականացման կարգով<sup>4</sup>:

Հավաքական անվտանգության մասին պայմանագիրն ստորագրելիս ՀՀ-ն այն դիտում էր որպես ներդրում համաեվրոպական անվտանգության ու կայունության ամրապնդման գործում և Ասիայի ու Եվրոպայի կոլեկտիվ անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս: Հայաստանը ելնում էր այն նկատառումից, որ առճակատման հաղթահարման, ռազմական ոլորտում գործընկերության ու բազմակողմանի համագործակցության ընդլայնման և վստահության ամրապնդման, միջուկային ու սովորական սպառազինության կրճատման հետևանքով ստեղծվում են բարենպաստ պայմաններ՝ միջազգային խնդիրներ լուծելիս ուժի կիրառումից հրաժարվելու համար: Մասնակցելով անվտանգության նոր կառույցի ստեղծմանը՝ ՀՀ-ն նպատակ ուներ ապահովել իր անվտանգությունը և նվազեցնել ռազմական ծախսերը՝ հաշվի առնելով ռազմական ենթակառուցվածքի և գիտահետազոտական ու ռազմաուսումնական բազայի առկայությունը, սպառազինության և ռազմական տեխնիկայի միատիպությունը, պաշտպանական ոլորտի ձեռնարկությունների պահպանված համագործակցությունը: ՀՀ-ն պլանավորում էր պայմանագրի շրջանակներում կազմակերպել մասնակից պետությունների հետ ավելի սերտ համագործակցություն նաև երկկողմ հիմունքներով:

1999 թ. ապրիլի 2-ին ՀԱԽ-ի նիստում, որը կայացավ Մոսկվայում, Բելառուսի, Հայաստանի, Ղազախստանի, Վրդգստանի, Ռուսաստանի և Տաջիկստանի ղեկավարներն ստորագրեցին «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի երկարաձգման մասին» արձանագրություն: Ընդ որում, տարբեր պատճառներով այն չստորագրեցին Ադրբեջանը, Վրաստանը և ՌԻգրեկստանը: ՌԻգրեկստանը վերականգնեց ՀԱՊԿ-ին իր անդամությունը 2006 թ. օգոստոսի 16-ին:

Ելնելով ՀԱՊԿ-ի գործառնման մեխանիզմը արդի միջազգային հարաբերությունների համակարգին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից, ինչպես նաև ղեկավարվելով մասնակից պետությունների ազգային ու կոլեկտիվ շահերի ավելի արդյունավետ ապահովման նպատակով պայմանագրի իրավական կարգավիճակը բարձրացնելու և որակապես նոր կազմակերպական ու գործառութային մակար-

<sup>2</sup> Տես «Содружество». Минск, 1992, вып. V, с. 9:

<sup>3</sup> Տես նույն տեղում:

<sup>4</sup> Տես նույն տեղում:

դակի հասնելու ձգտմամբ՝ ՀԱԽ-ը 2002 թ. մայիսի 14-ին որոշում ընդունեց ՀԱՊ-ի մասնակից պետությունների համագործակցության առկա մեխանիզմներն ու կառույցները միջազգային տարածաշրջանային կազմակերպության վերափոխելու մասին: Բացի այդ, ՀԱՊ-ի ստեղծման հիմքում դրված էր ռազմական բաղադրիչը, մինչդեռ ՀԱՊ-ի շրջանակներում համագործակցության ընթացքում մասնակից պետությունների ձեռք բերած փորձը ցույց տվեց, որ առանց քաղաքական բաղադրիչի հետագա զարգացման պայմանագիրը հեռանկար չի ունենա: ՈՒստի 2002 թ. հոկտեմբերի 7-ին Քիշնևում ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստի շրջանակներում կայացավ ՀԱՊ-ի մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի նիստ, որի ժամանակ ստորագրվեցին Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունը և ՀԱՊԿ-ի իրավական կարգավիճակի մասին համաձայնագիրը: Այս երկու փաստաթուղթն էլ ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց 2003 թ. սեպտեմբերի 10-ին:

ՀԱՊԿ-ի կազմակերպական կառույցը ձևավորվեց 2003 թ. ապրիլի 28-ին Դուշանբեում, երբ ՀԱԽ-ի որոշմամբ հաստատվեցին կազմակերպության Հավաքական անվտանգության խորհրդի, Արտաքին գործերի նախարարների խորհրդի, Պաշտպանության նախարարների խորհրդի, Անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեի, ՀԱՊԿ-ին առընթեր Մշտական խորհրդի, ՀԱՊԿ-ի Քարտուղարության կանոնադրությունները և ստեղծվեց կազմակերպության Միացյալ շտաբը:

ՀԱՊԿ-ի խորհրդարանական չափման զարգացման վերաբերյալ ՀԱԽ-ի Մինսկի նստաշրջանի (2006 թ. հունիս) որոշմամբ ԱՊՀ միջխորհրդարանական ասամբլեայի շրջանակներում ստեղծվեց ՀԱՊԿ-ի Խորհրդարանական ասամբլեա<sup>5</sup>:

ՀԱԽ-ում ՀՀ ներկայիս նախագահությունը մեծ պատասխանատվություն է դնում Հայաստանի վրա, քանի որ ՀԱԽ-ը ՀԱՊԿ-ի բարձրագույն մարմինն է, և նրա հիմնական խնդիրների թվում են՝ կազմակերպության շրջանակներում ռազմաքաղաքական ինտեգրման զարգացման ռազմավարության, հիմնական ուղղությունների ու հեռանկարների որոշումը, արտաքին քաղաքականության բնագավառում անդամ պետությունների փոխգործության համադաստում ու խորացումը, միջազգային իրավունքի սուբյեկտների հետ համագործակցության զարգացումը, կոլեկտիվ անվտանգության համակարգի և նրա տարածքային կառույցների զարգացումն ու կատարելագործումը, միջազգային ահաբեկչության, ծայրահեղականության, թմրանյութերի ու զենքի ապօրինի շրջանառության, անդրազգային հանցավորության, անօրինական միգրացիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունների որոշումը, խաղաղարարական գործունեությունը և այլն<sup>6</sup>:

<sup>5</sup> Տես «Документы первого пленарного заседания Парламентской Ассамблеи Организации Договора о коллективной безопасности». СПб., 30 марта 2007 г., сс. 23—80. «ISSN 0869-8287». Секретариат Совета Межпарламентской Ассамблеи государств-участников СНГ, «Информационный бюллетень», 2007:

<sup>6</sup> ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանը, ելույթ ունենալով ՀԱՊԿ-ի՝ «ՀՀ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանության ուղղությամբ համատեղ պաշտպանական օպերացիայի պատրաստում և անցկացում» թեմայով «Ռուբեժ 2008» հրամանատարաշտա-

Ըստ «ԱՊՀ մասնակից պետությունների ռազմական համագործակցության ոլորտում օգտագործվող հիմնական տերմիններ և հասկացություններ» տեղեկատու քառարանի<sup>7</sup> ՀԱՊ-ի մասնակից պետությունների դաշնադրային ռազմավարության հիմնական դրույթները կազմում են ռեալ ձևավորվող աշխարհաքաղաքական և ռազմական ռազմավարական իրադրությունում հնարավոր ագրեսիան կանխելու ու համատեղ հետ մղելու նպատակով ռազմաքաղաքական ու ռազմական բնագավառներում՝ դաշնադրային ռազմական շինարարության, զորքերի (ուժերի) դաշնադրային (միացյալ) խմբավորումների պատրաստման և կիրառման, ՀԱՊ-ի մասնակից պետությունների կոլեկտիվ անվտանգության համակարգի ձևավորման և գործառնման խնդիրների գործնական լուծման ու միջոցառումների իրականացման վերաբերյալ հայեցակարգային գաղափարների և տեսակետների համախումբը:

1992 թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների դաշնադրային ռազմավարության հիմնական դրույթները հաստատվել են ՀԱՊԿ-ի ՀԱԽ-ի 2000 թ. մայիսի 24-ի որոշմամբ: Սակայն վերջին 2 տարում ՀԱՊԿ-ի մի շարք պետություններ ընդունել են ռազմական դոկտրիններ կամ դրանց նոր խմբագրումներ (Հայաստանի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն և Տաջիկստանի Հանրապետություն), ինչի հետևանքով անհրաժեշտություն կա այդ փաստաթղթում կատարելու համապատասխան շտկումներ:

ՀԱՊԿ-ի Անվտանգության խորհրդում և մյուս կանոնադրական մարմիններում ՀՀ նախագահությունը հնարավորություն է տալիս նաև անդամ պետությունների ուշադրությունը հերթական անգամ հրավիրելու այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է վերանայել Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ձևաչափում 90-ական թվականների վերջերին ընդունված տեսական բազան, որը որոշում է դաշնադրային ռազմական շինարարության օպերատիվ-ռազմավարական հարցերի ամբողջ համալիրը, քանի որ այդ տեսական բազան արդեն չի համապատասխանում ժամանակի ոգուն և ռազմական անվտանգության ապահովման գործում ՀԱՊԿ-ի անդամ պետությունների գերակայություններին:

Անհրաժեշտ է նաև շտկումներ կատարել պաշտպանական քաղաքականության ձևավորման գործընթացում: Խոսելով պաշտպանական քաղաքականության մասին՝ մենք պետք է հստակ կերպով պատկերացնենք դրա տարբերությունը ռազմավարական և օպերատիվ պլանավորումից: Փորձենք պարզել հիմնական հայեցակարգերը և փոխադարձ կապը պաշտպանական քաղաքականության մշակման գործընթացում:

բային համատեղ գորավարությունների բացման ժամանակ, հայտարարեց, որ «Ընթացիկ տարում ՀԱՊԿ-ի կանոնադրական մարմիններում նախագահությունը անցնում է Հայաստանին, և ես վստահ եմ, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարման ժամանակահատվածում մենք կգործադրենք բոլոր ջանքերը՝ ուղղված պատեհաժամ և արդյունավետ համատեղ գործողություններ կատարելու ՀԱՊԿ-ի անդամ պետությունների ունակությունների կատարելագործմանը» (տես նյութեր «Ռուբեժ 2008» ՀՇՀՁ պատրաստման և անցկացման հետազոտությունների արդյունքների վերաբերյալ, ՀՀ ՊՆ, ՀԱՊԿ-ի Միացյալ շտաբ, Երևան, 2008):

<sup>7</sup> Ств «Основные термины и понятия, применяемые в сфере военного сотрудничества государств-участников СНГ. Словарь-справочник». Штаб по координации сотрудничества государств-участников СНГ. М., 1999, с. 35:

Այնպիսի պատերազմ, ինչպիսիք եղել են երկու համաշխարհային պատերազմները, ՀԱՊԿ-ի անդամ պետությունների մի մասի համար տեսանելի ապագայում կոլեկտիվ անվտանգության ապահովման օրակարգում ներառված չէ, թեև ՀԱՊԿ-ի պատասխանատվության գոտուն սահմանակից շրջաններում պատերազմները շարունակվում են, և գոյություն ունեն լուրջ ճգնաժամներ: ՈՒՍտի և ՀԱՊԿ-ի անդամ պետությունները չեն կարող հեռու մնալ այդ պատերազմներից ու հակամարտություններից:

Պաշտպանական քաղաքականություն ասելով մենք հասկանում ենք այն որոշակի ուղեգիծը կամ գործելակերպը, որոնք պաշտպանական ոլորտում դեկավարման կամ ապագա որոշումների իրականացման նպատակով ընտրվում են եղած բոլոր հնարավոր տարբերակներից, առաջադրված են բարձրագույն գործադիր իշխանության կողմից, կոչված են ուղղորդելու ռազմական ոլորտում գործերի կառավարման հետ կապված գործողությունները, որոշումները և այլ հարցեր ու հիմնված են ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթների վրա: Դա ռազմական ոլորտում պետության անվտանգության ապահովման մի յուրահատուկ ծրագիր է:

Պաշտպանական քաղաքականության պլանավորման ժամանակ անհրաժեշտ է ձևակերպել և լուծել երկու հիմնական խնդիր, այն է՝ որոշել, թե վերջնական նպատակներին հասնելու համար ինչպես օգտագործել առկա միջոցները, և որոշել այն միջոցները, որոնք կազմակերպությանը կամ անդամ պետություններին հնարավորություն կտան ապագայում արդյունավետ կերպով չեզոքացնելու հավանական մարտահրավերները և սպառնալիքները:

Առաջին խնդիրը ներառում է ինչպես ռազմավարական, այնպես էլ օպերատիվ ոլորտներ, ինչպես նաև մանրակրկիտ կերպով մշակված իրավիճակային պլանավորում, զորքերի կառավարում մարտական գործողությունների ժամանակ, այսինքն՝ զորքերի (ուժերի) կիրառում:

Երկրորդ խնդիրը լուծելիս, եթե պաշտպանական քաղաքականության նկատմամբ կիրառվում է նպատակներին կողմնորոշված մոտեցում, պետք է հաշվի առնել, որ հենց դրված նպատակներն են պայմանավորում ապագա զինված ուժերի կառուցվածքը: Օրինակ՝ պաշտպանական ոլորտի բարեփոխումները արդյունավետ չեն լինի, եթե պաշտպանական քաղաքականությունը և պլանավորումը կողմնորոշված չեն նպատակին հասնելուն: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ պաշտպանական քաղաքականությունն ընդգրկում է ինչպես նպատակները, այնպես էլ միջոցները, և հատկապես առաջադրված նպատակներն են որոշում զարգացումը:

Վերը ասվածի համաձայն՝ կոլեկտիվ անվտանգության Կովկասյան տարածաշրջանի ուժերի և միջոցների ձևավորումը պետք է շարունակվի Հայաստանի Հանրապետության ընդունած ազգային անվտանգության ռազմավարության, ինչպես նաև այն փաստի հաշվառմամբ, որ Հայաստանի Հանրապետությունը չունի ՀԱՊԿ-ի անդամ պետություններից որևէ մեկի հետ ընդհանուր սահման: Դա նշանակում է, որ 2007 թ. հոկտեմբերի 6-ին ստորագրված «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի անդամ պետությունների ազրեսիայի սպառնալիքի կամ ազրեսիայի

ակտի դեպքում ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու մեխանիզմի մասին» արձանագրության կիրարկումը մեր հանրապետության նկատմամբ կապված կլինի որոշակի բարդությունների հետ և պահանջում է յուրահատուկ մոտեցում: Մասնավորապես՝ կոլեկտիվ անվտանգության միացյալ (միասնական) համակարգերի առնչությամբ ՀԱՊԿ-ի փաստաթղթերում հաճախ օգտագործվում է «արտաքին սահմանների պահպանություն» տերմինը: Հայաստանի Հանրապետության դեպքում արտաքին սահման է ամբողջ պետական սահմանը:

Հայաստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղըզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Տաջիկստանի Հանրապետության նախագահները 2008 թ. դեկտեմբերի 19–21-ը կայացած ոչ պաշտոնական զագաթնաժողովում պայմանավորվեցին ՀԱՊԿ-ի կոլեկտիվ անվտանգության ուժեր (օպերատիվ արձագանքման հավաքական ուժեր, կամ ՕԱՀՈՒ) ստեղծելու մասին: Նախատեսվում էր, որ այդ ուժերը պետք է իրականացնեն նաև հատուկ օպերացիաներ՝ ուղղված միջազգային ահաբեկչության և ծայրահեղականության բռնի դրսևորումների, անդրազգային կազմակերպված հանցավորության, թմրանյութերի անօրինական շրջանառության դեմ, ինչպես նաև բնական ու տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանը:

Հայաստանի Հանրապետության նախագահը այս նախաձեռնության իրականացման վերաբերյալ տվեց հստակ ցուցումներ, ինչի շնորհիվ ՀԱՊԿ-ի անդամ պետությունների ներկայացուցիչների խորհրդատվությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը հանդես էր գալիս հստակ դիրքորոշմամբ: Հայաստանն առաջարկեց մշակել ՀԱՊԿ-ի ՕԱՀՈՒ-ի ստեղծման Հայեցակարգ, որում հստակ կերպով սահմանված լինեն ուժերի նախանշանակումն ու խնդիրները, ՀԱՊԿ-ի անվտանգության տարածաշրջաններում թե դրանցից դուրս դրանց կիրառման, խաղաղ և պատերազմական ժամանակ ենթակայության հարցերը, մարտահրավերների և սպառնալիքների ցանկը, և ըստ այդմ որոշվեն ՕԱՀՈՒ-ի կառուցվածքը և միջոցները: Հայաստանը նաև առաջարկեց ստեղծել բազմագործառույթ, բարձր մակարդակի պատրաստությամբ, օպերատիվ առումով համատեղելի, արագ տեղաշարժվող, արագ (անհապաղ) ծավալմանը պատրաստ ու երկարատև ինքնուրույն գործողությունների ունակ, օդային և ցամաքային բաղադրիչներ ունեցող, ըստ իրադրության և առաջադրված խնդիրների՝ կազմակերպական ու կառուցվածքային փոփոխությունների հնարավորություն ունեցող ուժեր: ՕԱՀՈՒ-ի բազմագործառույթությունը պահանջում է որոշակի հրամանատարության, այդ ուժերի կիրառման պլանավորման, համատեղ պատրաստումը համադասելու հետ կապված հարցերի լուծում: Հայաստանն առաջարկում է ՀԱՊԿ-ի օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի հիմնական խնդիր համարել համատեղ ռազմական բաղադրիչը և սգրեսիվայի հետմղումը: Բանի որ Հայաստանի Հանրապետությունը ՀԱՊԿ-ի անդամ պետություններից ոչ մեկի հետ ընդհանուր սահման չունի, առաջ քաշվեց Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետությունից ՕԱՀՈՒ-ի ստորաբաժանումներն ու միջոցները երրորդ պետությունների տարածքով տեղափոխելու

հարցը: Այդ կապակցությամբ առաջարկվեց քննարկել Հայաստանի Հանրապետության տարածքում մշտական հիմունքներով ՕԱՀՈՒ-ի ստորաբաժանումներից մեկի ստեղծման հնարավորությունը:

Մեծ աշխատանք պետք է կատարվի ՀԱԽ-ի որոշումների ընդունման մեխանիզմի կատարելագործման ուղղությամբ: Ագրեսիայի հետմղման նպատակով ուժի կիրառման վերաբերյալ ՀԱԽ-ի որոշումների ընդունման մեխանիզմի ստեղծումը եղել է այդ պայմանագիրը «լցոնող» միջոցառումների համակարգում լուծում պահանջող կարևոր խնդիրներից մեկը: Անհրաժեշտ էր տվյալ հարցը լուծելիս համալիր ձևով կոնկրետացնել հետևյալ հարցերը. այն պայմանները, որոնց դեպքում գործարկվում է որոշումներ ընդունելու մեխանիզմը, խորհրդատվությունների անցկացման ժամկետները, կարգը և վայրը, խորհրդատվությունների կազմակերպման հնարավոր մակարդակները, որոշումների, նյութերի և նախագծերի նախապատրաստումը, որոշումների ընդունման բաշխումն ըստ մակարդակների, ընդունված որոշումների իրականացման կարգը և պետությունների օրենսդրությունների ներդաշնակեցումն ընդունված որոշումների իրագործման ապահովման գործունեության տեսանկյունից: Անհրաժեշտ էր հնարավորինս կարճ ժամկետներում խորհրդատվությունների անցկացման մեխանիզմ: Այս հարցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը բազմիցս հանդես է եկել գործնական առաջարկություններով:

Ռազմական ուժի կիրառման վերաբերյալ որոշումների կատարման արդյունավետությունը մեծապես կախված է հետևյալ հարցերի լուծումից. ագրեսիայի կամ դրա սպառնալիքի հետմղման նպատակով ռազմական ուժի կիրառման վերաբերյալ ՀԱԽ-ի որոշումների իրականացման ուղղությամբ մասնակից պետությունների ջանքերի հստակ համադասում, կոլեկտիվ անվտանգության համակարգի բոլոր կառույցների փոխգործության օպերատիվություն՝ դրանց պարտականությունների և լիազորությունների սահմանազատման պայմանով, հատկացված ուժերի ու միջոցների օգտագործման վճռականություն, հակամարտության գոտում ռազմական իրադրության և հակամարտության կամ սպառնալիքի հետ կապված ռազմաքաղաքական իրավիճակի պատեհաժամ օբյեկտիվ վերլուծություն, ինչպես նաև փոփոխվող իրադրությանը պատշաճ ձևով հակազդելու նպատակով համապատասխան որոշումների նախագծերի նախապատրաստման օպերատիվություն: Կոլեկտիվ անվտանգության համակարգի ուժերի ու միջոցների կիրառման վերաբերյալ որոշում ընդունում է ՀԱԽ-ը, ինչը իրավաբանորեն չի համապատասխանում ՀԱՊԿ-ի անդամ պետությունների մի մասի ազգային օրենսդրությանը, որի համաձայն՝ պետության սահմաններից դուրս գինված ուժերի կիրառման վերաբերյալ որոշումը կայացվում է պետության բարձրագույն օրենսդիր մարմնի, Հայաստանի դեպքում՝ Ազգային ժողովի կողմից: Բացի այդ, նպատակահարմար կլիներ նախատեսել, որ առանձին դեպքերում տարածաշրջանային խմբավորման ուժերով ագրեսիայի կամ դրա սպառնալիքի հետմղման վերաբերյալ որոշումն ընդունվեր տվյալ տարածաշրջանի պետությունների ղեկավարների կողմից: Դա հնարավորություն կտար որոշումն ընդունելու օպերատիվ կերպով, ինչը շատ կարևոր է, քանի որ, արդի մարտական գոր-

ծողությունների սրընթացության և ՀԱՊԿ-ի առանձին անդամ պետությունների տարածքների չափերի հաշվառմամբ, ժամանակը ագրեսիայի հետմղման վճռորոշ գործոնն է:

ՀԱԽ-ում և կանոնադրական մարմիններում Հայաստանի նախագահության ժամանակաշրջանում պետք է կատարվի հսկայական աշխատանք, քանի որ ՀԱԽ-ի 2008 թ. սեպտեմբերի նստաշրջանի արդյունքները պահանջում են ձեռնարկել հետագա արդյունավետ միջոցներ՝ ուղղված Հավաքական անվտանգության մասին պայմանագրի ռազմական բաղադրիչի՝ որպես անդամ պետությունների անվտանգության նոր ճարտարապետության հիմքի զարգացմանը: Լրամշակման կարիք ունի կոլեկտիվ անվտանգության համակարգի ռազմական բաղադրիչի զարգացման մտահղացումը: Մտահղացման մեջ ներկայացվում են ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրիչի նկարագիրը միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարով, ինչպես նաև դրա զարգացման նպատակներն ու գերակա ուղղությունները և գերակա խնդիրների կատարման կարգը, ռազմական բաղադրիչի զարգացմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորման կարգը: Անհրաժեշտ է ուսումնասիրել ՀԱՊԿ-ի անդամ պետությունների արտաքին սահմանների մոտ ռազմաքաղաքական իրադրության փոփոխման դինամիկան: Պահանջվում է նաև դաշնադրային ռազմական շինարարության նորմատիվային իրավական հիմք կազմող փաստաթղթերի լրամշակում, համաձայնեցում, ընդունում և իրագործում:

Ներկայումս ՀԱՊԿ-ի շրջանակներում ստեղծվել են կոլեկտիվ անվտանգության տարածաշրջաններում միացյալ ռազմական համակարգերի խմբավորումների ձևավորման ու գործառնման նորմատիվային իրավական հիմքերը, կոլեկտիվ անվտանգության Արևելաեվրոպական ու Կովկասյան տարածաշրջաններում երկկողմ հիմունքով ձևավորվել են գորքերի (ուժերի) դաշնադրային խմբավորումներ և դրանց կառավարման մարմիններ: Շարունակվում է աշխատանքը կոլեկտիվ անվտանգության տարածաշրջաններում միացյալ ռազմական համակարգերի խմբավորումների զարգացման ուղղությամբ, իրականացվում է ռազմատեխնիկական համագործակցություն:

Ինչ վերաբերում է ՀԱՊԿ-ի կոլեկտիվ անվտանգության Կովկասյան տարածաշրջանի դաշնադրային խմբավորմանը, սպա նպատակահարմար է Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության ու կազմակերպության մարտահրավերների ու սպառնալիքների ընդհանուր ցանկի հիման վրա որոշել մարտահրավերների ու սպառնալիքների ցանկը և, ըստ դրա՝ շարունակել Կովկասյան տարածաշրջանի գորքերի (ուժերի) միացյալ խմբավորման ձևավորումը, ընդամին պետք է նկատի ունենալ, որ կարևոր են ոչ այնքան խմբավորումն ու տարածաշրջանային միացյալ համակարգերը, որքան այն ներուժը, որ նրանք կունենան վերը նշված սպառնալիքների կանխման կամ հետմղման առնչությամբ իրենց առջև դրվող խնդիրները լուծելու համար:

ՀԱՊԿ-ին անդամությունը Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն է տալիս կազմակերպության ներուժն օգտագործելու առաջին հերթին իր ազգային



անվտանգության շահերն ապահովելու և առաջ մղելու նպատակով, ինչպես նաև միջազգային հարաբերություններում գործարկելու քաղաքական աջակցության ՀԱՊԿ-ի ռեսուրսները:

Կազմակերպության էությունը, նրա հիմքում դրված համագործակցության սկզբունքներն ու ձևերը կանխորոշում են Եվրասիական մայրցամաքում ընդհանուր ու համընդգրկուն անվտանգության համակարգերի բաղադրիչ մաս դառնալու նրա ռեալ հնարավորությունը:

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ФОРМИРОВАНИЯ НОВОЙ БЕЗОПАСНОСТНОЙ АРХИТЕКТУРЫ ОДКБ В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ ОБОРОННОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*С. О. АБРАМЯН, полковник, начальник отдела  
международного военного сотрудничества Управления  
МВС и ОП МО РА—заместитель начальника Управления*

### РЕЗЮМЕ

В 2008 г. председательствование в уставных органах ОДКБ перешло к Республике Армения. Период председательствования РА в уставных органах ОДКБ совпал по времени с периодом осуществления реформ в Вооруженных силах РА.

ОДКБ рассматривается как перспективная составляющая системы обще-европейской безопасности и стабильности в Азиатском регионе. В то же время принятая в конце 90-х годов в формате ОДКБ теоретическая база, определяющая комплекс оперативно-стратегических вопросов коалиционного военного строительства, устарела и не отвечает духу времени и приоритетам государств-членов ОДКБ в обеспечении военной безопасности. Не создан оптимальный механизм принятия решений на применение силы в целях отражения агрессии.

Отмечается возможность использования РА коллективного потенциала ОДКБ в обеспечении и продвижении интересов национальной безопасности, а также задействования имеющихся в ОДКБ ресурсов политической поддержки в международных делах.

ԱՄՆ-Ի ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԵԿԱՎԱՐՄԱՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գեղապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետի տեղակալ—  
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագիր,  
Վ. Պ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, փոխգեղապետ, «Հայկական բանակ»  
ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ—իրավաբան,  
Տ. Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ավագ լեյտենանտ,  
պարմանական գիտությունների թեկնածու, «Հայկական բանակ»  
ռազմագիտական հանդեսի ավագ սպա-մասնագետ



**Ներածություն**

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պաշտպանական բարեփոխումների կարևոր ոլորտներից է ղեկավարման ու կառավարման համակարգերի կատարելագործումը: Մինչդեռ ՀՀ պետական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր քաղաքական-իրավական մշակույթում առայժմ ձևավորված չէ այդ երկու հասկացությունների հստակ ըմբռնումը, ինչը խորհրդային «ապարատային» ավանդույթների շարունակականության հետևանք է\*:

Վասական ընկալմամբ «կառավարումը» սուբյեկտի նպատակաուղղված ազդեցությունն է օբյեկտի վրա՝ այն ցանկալի վիճակի բերելու նպատակով: Կառավարումն իրականացվում է տարբեր մակարդակներում՝ հաստատութենական, կառավարային և տեխնիկական<sup>1</sup>: Ռազմավարական կառավարման գործընթացը (այսինքն՝ լայն իմաստով կառավարման) պայմանականորեն կարելի է բաժանել երկու հատվածի՝ բաղկացած մի քանի փուլից<sup>2</sup>:

\* Թեև ԽՍՀՄ-ում հռչակվում էր, որ կոմունիստական կուսակցությունը կատարում է ղեկավարի և առաջնորդի դեր, սակայն նա հաճախ միջամտում էր կառավարման գործընթացներին: Օրինակ՝ կոմկուսի համագումարը, որոշում կայացնելով երկրում բեռնատար ավտոտրանսպորտի զարգացման մասին, նաև հրահանգում էր, թե ում հետ համագործակցությամբ, ինչ արտադրողականությամբ, ինչ ժամկետներում, որտեղ պետք է հիմնադրվի այդ գործարանը (ԿԱՄԱԶ) և ինչ բեռնատարողությամբ մեքենաներ պետք է արտադրի, այսինքն՝ իրեն վերապահում էր և՛ ղեկավարման, և՛ կառավարման գործառույթներ:

<sup>1</sup> Տես, օրինակ, Մ. X. Мескон, М. Альберт, Ф. Хегоурн. Основы менеджмента. М.—СПб.—Киев, 2008, сс. 32—36:

<sup>2</sup> Տես К. Джанда, Дж. М. Берри, Дж. Голдман, К. В. Хула. Трудным путем демократии. М., 2006, сс. 529—532:

Առաջին հատվածը ներառում է նպատակի ձևավորումը, խնդրի առաջադրումը և խնդրի լուծման ուղիների, ձևերի, միջոցների ու եղանակների նախանշումը, ռազմավարական որոշումների կայացումը, դրանց իրականացման մշտազնունումն ու գնահատումը, որը նշանակվում է նաև «ղեկավարում» (*Governance*) տերմինով: Այն ընդգրկում է պաշտոնով պայմանավորված առաջավարման (*Leadership*) հիման վրա ռազմավարական որոշումների կայացման ամբողջ գործընթացը:

Կառավարման գործընթացի երկրորդ հատվածը ներառում է կայացված որոշումների կատարմանն ուղղված գործողությունների պլանավորումը, կազմակերպումն ու վերահսկումը: Սա ըստ էության «վարչարարություն» է (*administration*), որը ևս կոչվում է «կառավարում» (*Management*):

Փաստորեն, առկա են «կառավարում» տերմինի ընկալումներ ինչպես լայն (ներառելով ղեկավարումը), այնպես էլ նեղ (առանց ղեկավարման) իմաստներով:

Այդ ոչ հստակության արտացոլումն է այն խառնաշփոթը, որ տվյալ հարցում տիրում է նաև մեր օրենսդրության մեջ: Այսպես. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև հանրային ծառայության տարբեր ոլորտներում հարաբերությունները կարգավորող ավելի քան երկու տասնյակ օրենքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ և՛ «կառավարում», և՛ «ղեկավարում» տերմինները կիրառվում են տարբեր իմաստներով:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածում, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածում «կառավարում» տերմինը կիրառվում է լայն իմաստով, իսկ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներում, «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում՝ նեղ իմաստով:

Հաշվի չառնելով առանձին բացառությունները՝ կարող ենք ասել, որ «ղեկավարում» տերմինը որպես կանոն կիրառվում է «անձնավորված» դեպքերում՝ պաշտոնատար անձանց կամ մեկ դեմքով հանդես եկող կոլեգիալ մարմինները\*, ինչպես նաև խորհրդային կարծրատիպային իներցիայի դրսևորմամբ նախարարությունը որպես պետական իշխանության իրականացման մարմին ընկալելու և «անձնավորելու» հետևանքով\*\*։ Այստեղ «ղեկավարում» տերմինը կիրառված է ներկայացուցչական («պետ», «գլուխ») բաղադրիչի առումով:

Շատ դեպքերում պաշտոնատար անձի համապատասխան լիազորությունը սահմանվում է «ղեկավարում և կազմակերպում է» արտահայտությամբ, որի վերաբերյալ օրենսդրի միանշանակ ընկալումը ևս դժվար է պատկերացնել, սակայն համապատասխան լիազորությունները հուշում են, որ երևույթն ավելի նման է «կառավարմանը»՝ լայն իմաստով:

\* Տես, օրինակ, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, որտեղ խոսվում է քաղաքացիական ծառայության խորհրդի մասին:

\*\* Տես, օրինակ, «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, որտեղ նշվում է, որ «արտաքին գործերի նախարարությունը ղեկավարում է դիվանագիտական ծառայությունը»:

Որոշակի միօրինակություն կա պետական ծառայության հատուկ տեսակների վերաբերյալ օրենքներում, որոնցում կիրառվում է «միանձնյա ղեկավարում» տերմինը, ինչը, նշվող լիազորություններից դատելով, ենթադրում է լայն իմաստով «կառավարում», որն իրականացվում է միանձնյա:

Բերված օրինակները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության մեջ դիտարկվող տերմինները կիրառվում են առանց հստակ տարբերակման: Սա միանշանակ կերպով ցույց է տալիս, որ պետական կառավարման բնագավառում չկան որոշումների ընդունման և կատարման վերաբերյալ միօրինակ պատկերացումներ, ինչն էապես նվազեցնում է պետական կառավարման արդյունավետությունը:

Մեր կարծիքով՝ այս խնդիրն առաջացել է խորհրդային՝ «ապարատային», կառավարման մոդելի և արևմտյան «մեներջմենտի» մոդելի էկլեկտիկ միախառնման պատճառով:

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունում կառավարման խորհրդային մոդելի առկայությամբ արևմտյան մոդելի տարրերի ներմուծումն առաջացրեց դրանց անխուսափելի աղճատում: Խորհրդային մոդելը, ստանալով «եվրոպական փաթեթավորում», պահպանեց իր բովանդակությունը և շարունակեց գոյատևել՝ պարունակելով ներքին հակասություններ, որոնց դրսևորումները կարող ենք տեսնել նույնիսկ միևնույն իրավական ակտում:

Երևույթին էապես նպաստեց նաև մի օբյեկտիվ հանգամանք, որը կարող է բնորոշ լինել բոլոր հետխորհրդային փոքր երկրներին: Նմանադրության միևնույն գործակցով մեծ երկրների մեծ համակարգերի համամասնական «փոքրացումը» փոքր երկրների փոքր համակարգերի ձևավորման ժամանակ հանգեցնում է ղեկավարման և կառավարման հատվածների հաշվեկշռային անհամամասնության:

Փորձենք ավելի պարզ ներկայացնել այս երևույթը որևէ նախարարության օրինակով:

Մեծ երկրի համապատասխան նախարարության համակարգում նպատակները և խնդիրները սահմանող, դրանց հասնելու և լուծելու ընդհանուր ուղիները, ձևերը, մեթոդները, եղանակները որոշող անձինք ու ենթահամակարգերը (ղեկավարման հատված), առաջադրված նպատակներն ու խնդիրները ղեկավարման հատվածի որոշումներին համապատասխան իրագործող անձանց ու ենթահամակարգերի (կառավարման հատված) նկատմամբ լինելով 1/20 հարաբերակցությամբ (պայմանականորեն), կարող են բաղկացած լինել մինչև մի քանի հարյուր անձանցից ու նրանց միավորող տասնյակ ենթահամակարգերից: Նման ղեկավարման հատվածն անշուշտ կարող է թե՛ նախանշել խնդիրները, թե՛ դրանց լուծման վերաբերյալ որոշումներ կայացնել:

Փոքր երկրի նախարարությունում այդ մոտավոր 1/20 հարաբերակցության պայմաններում ղեկավարման հատվածը կարող է բաղկացած լինել ընդամենը 2 տասնյակ ապարատային անձանցից, որոնք կոչված չեն նպատակներ ձևավորելու և խընդիրներ առաջադրելու: Ինքնին հասկանալի է, որ կառավարման հատվածը «ենթա-

գիտակցաբար» նախանշելու է այնպիսի նպատակներ ու խնդիրներ, որոնք բխեն իր կորպորատիվ շահերից, իսկ որևէ կերպ առաջադրված ավելի դժվար ու բարդ խնդիրները լուծվեն ըստ նպատակահարմարության, քանի որ «դեկորատիվ» ղեկավար հատվածը չի կարող «դիմադրել» ամենակարող ապարատին:

Այս պայմաններում վտանգ կա (և դրա դրսևորումներն առկա են նաև Հայաստանի Հանրապետությունում), որ կառավարման հատվածն սկսի գործել ինքնաբավության բանեկարգով, որի դեպքում նրա կորպորատիվ ապարատային շահը, ինչպես դա խորհրդային ժամանակաշրջանում էր, կգերակայի պետության շահին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանն ընտրել է զարգացման ժողովրդավարական ուղին, և պաշտպանական բարեփոխումներն իրականացվում են գերազանցապես «Հայաստան–ՆԱՏՕ ԱԳՊԾ» շրջանակներում, մենք նպատակահարմար համարեցինք ուսումնասիրել պաշտպանական ոլորտում ղեկավարման ու կառավարման կիրառական սկզբունքները Արևմուտքի առավել զարգացած պետության՝ ԱՄՆ-ի օրինակով: Միևնույն ժամանակ, մենք քաջ գիտակցում ենք, որ ԱՄՆ-ի փորձի մեխանիկական ներբերումը մեր իրականության մեջ (երկու երկրների մասշտաբների, ռեսուրսների, քաղաքական մշակույթների, նպատակների միջև առկա հսկայական տարբերության, ինչպես նաև իրավական համակարգերի առանձնահատկությունների հաշվառմամբ) կարող է միայն վնասել մեր երկրի զարգացմանը:

Տարբերումնմից խուսափելու համար նշենք, որ սույն հոդվածում «ռազմավարական կառավարում», «ղեկավարում», «կառավարում» և «ղեկավարություն» հանգուցային հասկացություններն օգտագործվում են հետևյալ իմաստներով.

- **ռազմավարական կառավարում**<sup>3</sup>՝ գործունեություն, որը նպատակաուղղված է տվյալ օբյեկտի զարգացման ռազմավարական գերակայությունների ընտրությանը և իրականացմանը<sup>3</sup>,

- **ղեկավարում**<sup>4</sup>՝ տվյալ ոլորտում ռազմավարական նպատակների հստակեցում, իրականացվելիք գործունեության վերաբերյալ ռազմավարական որոշումների կայացում (մշակում և ընդունում) ու դրանց իրականացմանը հասնելու համար գործունեության ուղղորդում և վերահսկում՝ համապատասխան համակարգի միջոցով,

- **կառավարում**<sup>5</sup>՝ գործընթաց, որը նախատեսում է ընդունված ուղղորդող ռազմավարական փաստաթղթերի ու որոշումների շրջանակներում ընթացիկ գործառույթային կարգավորում, այդ թվում՝ իրականացման համար անհրաժեշտ որոշումների կայացում: Կառավարումը ներառում է պլանավորում, կազմակերպում և վերահսկում,

- **ղեկավարություն**<sup>6</sup>՝ առաջնորդության, առաջավարության (լիդերության) հասկացության տարատեսակ, այն է՝ համապատասխան շրջանակներում իշխանության լիազորություններով օժտված ղեկավարների խումբ, որն ունի տվյալ գործում ռազմավարական որոշումների մշակման և ընդունման նախաձեռնություն ցուցաբերելու իրավունք:

Ինչպես տեսնում ենք, «ղեկավարում» և «կառավարում» հասկացությունները միանգամայն տարբեր են: Առաջինը համապատասխանում է *ինչ* անելուն, իսկ երկ-

<sup>3</sup> Шу «Энциклопедия государственного управления в России». М., 2008, том II, с. 290:

որոշը՝ *ինչպես* անելուն: Մինևույն ժամանակ, գործառության առումով դրանք փոխկապված են. դեկավար օղակն իր գործունեության մեջ կիրառում է կառավարման տարրեր, և՛ հակառակը<sup>4</sup>: Այստեղ կարևորն այն է, թե ինչ նպատակով է դա արվում և ինչ տեսակարար կշիռ ունի: Դեկավարման դեպքում կառավարումը հանդես է գալիս որպես դեկավարման արդյունավետության ապահովման գործիք, իսկ կառավարման ժամանակ անհրաժեշտ է լինում կայացնել որոշումներ, որոնք նպաստում են կառավարման արդյունավետության ապահովմանը:

### **1. ԱՄՆ-ի պաշտպանության ոլորտում ամենավերին օղակներում որոշումների կայացման համակարգը**

ԱՄՆ-ի Սենատի միջազգային գործերով հանձնաժողովում ներկայացնելով ներկայիս վարչակազմի քաղաքականության հիմնադրույթները՝ Օբամայի վարչակազմում պետքարտուղարի պաշտոնի գլխավոր թեկնածու Հիլարի Բլինտոնը առաջ քաշեց միջազգային հարցերում «խելամիտ ուժի», դիվանագիտության ու պաշտպանական հզորության զուգակցման հայեցակարգը: Նրա կարծիքով՝ ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Օբամայի վարչակազմը պետք է օգտագործի այն, ինչը կոչվում է «խելամիտ ուժ», գործիքների այն ամբողջ շարքը, որն ունի իր տրամադրության տակ՝ համատեղելով դիվանագիտական, տնտեսական, ռազմական, քաղաքական, իրավական և մշակութային ռազմավարությունները:

Պաշտպանական հզորության ապահովման նպատակով իրականացվող պաշտպանական քաղաքականությունը ԱՄՆ-ում ազգային անվտանգության ապահովման ռազմավարական մակարդակի պետական մարմինների նպատակաուղղված գործունեություն\* է: Պաշտպանական քաղաքականության ձևավորման և իրականացման գործում կարևոր դեր ունի Կոնգրեսը, որն ստուգման ու հաշվեկշռման սկզբունքի հիման վրա վերահսկում է գործադիր իշխանության գործունեությունը: Վերահսկման և ընդունված չափանիշներին ու կանոններին համապատասխանեցման մեխանիզմների կիրառմամբ Կոնգրեսն ստուգում է գործադիրի ներկայացրած որոշումների հիմնավորվածությունը, ինչն արտացոլում է տվյալ գործընթացների թափանցիկությունը:

Ավագ Ջորջ Բուշի նախագահության օրոք ձևավորվեց հետևյալ ավանդույթը. Ազգային անվտանգության խորհուրդն զբաղվում է ռազմավարական հարցերի մշակմամբ և արտաքին ու պաշտպանական քաղաքականության ոլորտում կառավարության (վարչակազմի) գործունեության համադասմամբ, իսկ պետքարտուղարը (արտաքին գործերի նախարարը) և պաշտպանության քարտուղարը կառավարում են իրենց գերատեսչությունների ամենօրյա աշխատանքը՝ իրականացնելով այդ քաղաքականությունը<sup>5</sup>: Մինևույն ժամանակ, ԱՄՆ-ի նախագահի<sup>6</sup> ու նաև Ազգային

<sup>4</sup> Տե՛ս «Государственное управление». М., 2002, т. I, сс. 15—16:

\* Այդ գործունեությունը սահմանված է օրենքներով և քաղաքական ռազմավարական փաստաթղթերով:

<sup>5</sup> Տե՛ս C. Simpson. National Security Directives of the Reagan and Bush Administrations: the Declassified History of the US Political and Military Policy, 1981—1991. Boulder, 1995:

<sup>6</sup> Տե՛ս «Official Site of the US DoD» (<http://www.defenselink.mil/osd/topleaders.aspx>):

անվտանգության խորհրդի պաշտպանական քաղաքականության գծով գլխավոր («Principal») խորհրդականն է պաշտպանության քարտուղարը: Նա պատասխանատու է ընդհանուր պաշտպանական քաղաքականության ձևակերպման և քաղաքականությանը վերաբերող բոլոր այն խնդիրների համար, որոնք անմիջականորեն առնչվում են ՊՆ-ի հետ, ինչպես նաև հաստատված քաղաքական ուղեգծի իրականացման համար: Նախագահի ուղղորդման ներքո պաշտպանության քարտուղարը պաշտպանության նախարարության նկատմամբ գործադրում է իր իշխանական լիազորությունները, իրականացնում է նրա գործունեության ուղղորդումն ու վերահսկումը: Պաշտպանության քարտուղարը կառավարության և Ազգային անվտանգության խորհրդի անդամ է<sup>7</sup>:

Պետքարտուղարի, պաշտպանության քարտուղարի և ԱՄՆ-ի նախագահի՝ ազգային անվտանգության գծով օգնականի միջև իրավասությունների ու պարտականությունների հստակ սահմանազատումը Ջ. Բուշին հնարավորություն տվեց ապահովելու նրանց ղեկավարած գերատեսչությունների սիներգիկ՝ համագործակցությունը<sup>8</sup>:

Այժմ գործում են ԱԱԽ-ի երեք ենթախմբեր՝ ԱԱԽ-ի ղեկավարների կոմիտեն (ԱԱԽ-ՂԿ), ԱԱԽ-ի տեղակալների կոմիտեն (ԱԱԽ-ՏԿ) և ԱԱԽ-ի քաղաքականության համադասման կոմիտեն (ԱԱԽ-ՔՀԿ)<sup>9</sup>:

1.1. ԱԱԽ-ՂԿ-ն ազգային անվտանգության պաշտպանական ոլորտում հարցերի քննարկման գլխավոր միջգերատեսչական համաժողովն է: Այն քննում, համադասում, վերահսկում է ազգային անվտանգության, մասնավորապես՝ պաշտպանական, քաղաքականության զարգացումն ու իրականացումը:

ԱԱԽ-ՂԿ անդամներն են՝ պետքարտուղարը, պաշտպանության քարտուղարը, ԱՄՆ-ի նախագահի՝ ազգային անվտանգության գծով խորհրդականը (նախագահ), Կենտրոնական հետախուզական գործակալության (ԿՀԳ՝ CIA) տնօրենը և Շտաբների պետերի միացյալ կոմիտեի (ՇՊՄԿ) նախագահը (*Chairman of Joint Chiefs of Staff*), ինչպես նաև նախագահական վարչակազմի ղեկավարը: Հատուկ ղեկավարում նրանց կարող են միանալ ֆինանսների նախարարը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը: Պետքարտուղարի և պաշտպանության քարտուղարի համաձայնությամբ ԱԱԽ-ՂԿ նախագահը կարող է հրավիրել նաև այլ մասնակիցների:

ԱԱԽ-ՂԿ նախագահը պատասխանատու է, նշված պետական պաշտոնյաների հետ խորհրդակցելով, ԱԱԽ-ՂԿ նիստեր նշանակելու, օրակարգը որոշելու և անհրաժեշտ փաստաթղթեր պատրաստելու համար:

<sup>7</sup> Տես նույն տեղում:

\* Սիներգիկ՝ երևույթ, երբ համախումբ ազդեցությունը գերազանցում է պարզ գումարային ազդեցությունը:

<sup>8</sup> Տես Օ. Ա. Колобов, Ф. Ф. Корнилов, А. С. Макарычев, А. А. Сергунин. Процесс принятия внешнеполитических решений: исторический опыт США, государства Израиль и стран Западной Европы. Н. Новгород, 1992:

<sup>9</sup> Տես Bernard Weinraub. Bush Backs Plan to Enhance Role of Security Staff. «New York Times», 1989, 26 February:

1.2. ԱԱԽ–ՏԿ-ն ազգային անվտանգության պաշտպանական ոլորտում տեղակայման մակարդակով հարցերի քննման գլխավոր միջգերատեսչական համաժողովն է: Այն քննում ու վերահսկում է ԱԱԽ-ում միջգերատեսչական համաձայնեցման գործընթացը (ներառյալ՝ միջգերատեսչական խմբերը, որոշվեց այդ կերպ ամրապնդել միջգերատեսչական կոմիտեների գոյություն ունեցող համակարգը<sup>10</sup>) և խորհրդատվություններ է տրամադրում ազգային անվտանգության քաղաքականության զարգացման և իրականացման վերաբերյալ: ԱԱԽ–ՏԿ անդամներն են ԱՄՆ-ի նախագահի՝ ազգային անվտանգության գծով օգնականի տեղակալը, ՊՆ՝ քաղաքական հարցերով ենթաքարտուղարը, պետքարտուղարի՝ քաղաքական հարցերով տեղակալը, ԿՀԳ տնօրենի տեղակալը և ՇՊՄԿ նախագահի տեղակալը: ԱԱԽ–ՏԿ նախագահը, պետնախարարության և ՊՆ ներկայացուցիչների համաձայնությամբ, կարող է հրավիրել նաև այլ մասնակիցների: Գաղտնի նիստերին պետք է ներկա լինեն արդարադատության նախարարի և գլխավոր դատախազի ներկայացուցիչները: ԱԱԽ–ՏԿ նախագահը պատասխանատու է վերը նշված անդամների հետ խորհրդատվությամբ ԱԱԽ–ՏԿ նիստերը կազմակերպելու, օրակարգը որոշելու, անհրաժեշտ փաստաթղթեր պատրաստելու համար:

ԱԱԽ–ՏԿ-ն երաշխիքներ է տալիս, որ բոլոր փաստաթղթերում, որոնք պետք է քննարկվեն ԱԱԽ-ում կամ ԱԱԽ–ՏԿ-ում, հարցերը կլինեն լիովին վերլուծված, փաստերը՝ հավաստի կերպով շարադրված, կարծիքները՝ լայն սպեկտրով քննարկված, և ըստ այդմ՝ գնահատված կլինեն դրանցից յուրաքանչյուրի հեռանկարները, ռիսկայնությունը և կարևորությունը: ԱԱԽ–ՏԿ-ն կարող է հանձնարարականներ տալ ԱԱԽ–ՔՀԿ քաղաքային միջգերատեսչական խմբերին (ՄԽ):

1.3. Առանձնացվել են հետևյալ ԱԱԽ–ՔՀԿ ՄԽ-երը.

– ըստ տարածաշրջանային հատկանիշի՝ Եվրոպա և հետխորհրդային տարածք, Լատինական Ամերիկա, Ասիա, Աֆրիկա, Մերձավոր Արևելք,

– ըստ գործառնության հատկանիշի՝ պաշտպանություն, համաշխարհային տնտեսություն, հետախուզություն և վերահսկողություն սպառազինության, ինչպես նաև Կոնգրեսի հետ կապերի նկատմամբ:

ԱԱԽ–ՔՀԿ ՄԽ-երի յուրաքանչյուր նիստ հիմնական միջգերատեսչական համաժողով է այս կամ այն տարածաշրջանի առնչությամբ կամ գործառնության ոլորտում քաղաքականության զարգացման և իրականացման համար: ԱԱԽ–ՔՀԿ ՄԽ-երը պատասխանատու են ԱԱԽ-ում քննարկման նպատակով քաղաքական հարցերի առանձնացման և մշակման համար, ներառյալ՝ անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը: ԱԱԽ–ՔՀԿ անդամ են ԱԱԽ–ՂԿ-ում ներգրավված յուրաքանչյուր գործադիր մարմնի կամ գործակալությունների ներկայացուցիչները՝ նախարարի տեղակալի մակարդակով: Համաձայն հմ. 1 հրահանգի՝ ԱԱԽ–ՔՀԿ ՄԽ-երի ղեկավարներ են նշանակվում հետևյալ սկզբունքով՝

- ԱԱԽ–ՔՀԿ տարածաշրջանային ՄԽ-ում՝ պետքարտուղարի կողմից,

<sup>10</sup> Տես Օ. Ա. Կոլոբով, Ֆ. Ֆ. Կոռնիլով և ուրիշներ, նշ. աշխ.:



- ԱԱԽ–ՔՀԿ պաշտպանության գծով ՄԽ-ում՝ պաշտպանության քարտուղարի կողմից,
- ԱԱԽ–ՔՀԿ սպառազինության նկատմամբ վերահսկողության գծով ՄԽ-ում՝ ԱՄՆ-ի նախագահի ազգային անվտանգության գծով օգնականի կողմից,
- ԱԱԽ–ՔՀԿ հետախուզության գծով ՄԽ-ում՝ ԿՀԳ տնօրենի կողմից,
- ԱԱԽ–ՔՀԿ համաշխարհային տնտեսության գծով ՄԽ-ում՝ ֆինանսների նախարարի կողմից:

Յուրաքանչյուր ԱԱԽ–ՔՀԿ ՄԽ կազմի մեջ մտնում է երկրի նախագահի՝ ազգային անվտանգության գծով օգնականի կողմից նշանակված ԱԱԽ-ի պատասխանատու աշխատողը, որն զբաղեցնում է գործադիր քարտուղարի պաշտոնը, որպեսզի օգնի ԱԱԽ–ՔՀԿ տվյալ ՄԽ նախագահին՝ ժողովների պլանավորման, օրակարգի որոշման և այլ հարցերում<sup>11</sup>:

## **2. ԱՄՆ-ի պաշտպանական քաղաքականության հիմնական փաստաթղթերը**

Պաշտպանական քաղաքականության ղեկավար փաստաթղթերն են «Ազգային անվտանգության ռազմավարությունը» պաշտպանական խնդիրներին վերաբերող մասով<sup>12</sup>, նրա տրամաբանությունից բխող «Ազգային պաշտպանական ռազմավարությունը»<sup>13</sup>, «Ազգային ռազմական ռազմավարությունը»<sup>14</sup> և որպես պաշտպանական-անվտանգային համակարգի մշտազննման գործիք՝ «Պաշտպանական քառամյա վերանայումը»<sup>15</sup>:

ԱՄՆ-ի պաշտպանական քաղաքականության ոլորտի այս ղեկավար փաստաթղթերի համակարգն իրագործվում է խիստ կանոնակարգված ձևով: ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունում, որի գլուխ կանգնած է պաշտպանության քարտուղարը, ռազմավարական որոշումների մշակման, կայացման և իրականացման գործընթացը՝ *ռազմավարական կառավարումը*, կարգավորվում է «Ռազմավարական կառավարման պլանով» (*Strategic Management Plan*)<sup>16</sup>:

### **2.1. «Ռազմավարական կառավարման պլան»**

Այս փաստաթուղթը դրված է պաշտպանական ոլորտում ռազմավարական կառավարման բարդ, բազմաշերտ համակարգի հիմքում, որը հենվում է ավելի քան

<sup>11</sup> Տես *U. Մինստոն*, նշ. աշխ., էջ 902–903:

<sup>12</sup> Տես «The US National Security Strategy» (<http://www.whitehouse.gov/nsc/nss/2006/>):

<sup>13</sup> Տես «The US National Defense Strategy» ([http://www.globalsecurity.org/military/library/policy/dod/nds-usa\\_mar2005.htm](http://www.globalsecurity.org/military/library/policy/dod/nds-usa_mar2005.htm)) կամ (<http://www.defenselink.mil/pubs/2008NationalDefenseStrategy.pdf>):

<sup>14</sup> Տես «The US National Military Strategy» (<http://www.au.af.mil/au/awc/awcgate/nms/nms1995.pdf>): Այս փաստաթուղթում ամփոփված է պաշտպանական քաղաքականության մաս կազմող ռազմական քաղաքականությունը:

<sup>15</sup> Տես «Quadrennial Defense review report» (<http://www.defenselink.mil/qdr/report/Report20060203.pdf>):

<sup>16</sup> Տես «2008 US DOD Strategic Management Plan», P. 1 (<http://www.defenselink.mil/dbt/products/SMP/FY08%20Strategic%20Management%20Plan.pdf>):

քառասուն տարվա պատմություն\* ունեցող օրենսդրության ու ավանդույթների վրա: Ըստ էության, դա վերը նշված ռազմավարական փաստաթղթերի իրականացմանն ուղղված ղեկավար հանձնարարականների տեխնոլոգիական փաթեթ է, որը «գործնական պատկերացում է տալիս ղեկավարման ու կառավարման շրջանակների և գործընթացների վերաբերյալ»<sup>17</sup>: «Պլանը»՝ որպես ռազմավարական կառավարման համակարգի բարեփոխումները նախանշող փաստաթուղթ, ենթակա է փոփոխման ԱՄՆ-ում ընդունված քառամյա պաշտպանական վերանայումների հիման վրա<sup>18</sup>:

«Ռազմավարական կառավարման պլանը» նախարարության ռազմական և քաղաքացիական բարձրաստիճան ղեկավարությունն օգտագործում է որպես իր գործունեությունը գերակա նպատակներին համահունչ դարձնող ուղեցույց, իսկ ռազմական վարչությունները, պաշտպանական գործակալությունները և մարտական հրամանատարներն օգտագործում են որպես իրենց գործունեության գնահատման չափանիշ, որով որոշվում է, թե արդյոք ձեռք բերված արդյունքները համապատասխանում են նախարարության կողմից առաջադրված կոնկրետ նպատակներին:

Այդ համակողմանի պլանը նկարագրում է, թե ինչպես են գործողությունների հաջորդականության վերաբերյալ որոշումներ կայացնելու, դրանք գործարկելու և արդյունքները գնահատելու համար օգտագործվում պաշտպանության նախարարության ռազմավարական կառավարման հետևյալ տարրերը.

- *ղեկավարումն ու ռազմավարական որոշումների կայացման համար խորհրդարվությունը,*
- *ռազմավարական կառավարման կազմակերպվածքը,*
- *ռազմավարական կառավարման որոշումների կայացումը*<sup>19</sup>:

**2.1.1. Ղեկավարում և ռազմավարական որոշումների կայացման համար խորհրդարվություն:** Ռազմավարական որոշումներ կայացնելիս պաշտպանության քարտուղարը կատարված ընտրությունը վերանայելու և ռազմավարական ու այլ-ընտրանքային տարբերակներ առաջարկելու համար հենվում է ստորև ներկայացվող մի շարք աջակցող մարմինների և խմբերի վրա, որոնց աշխատանքի արդյունավետության համար պատասխանատու է պաշտպանության քարտուղարի աշխատակազմը:

Ղեկավարում: 2008 թ. մայիսի 11-ին պաշտպանության քարտուղարը ձևավորեց չորս մարմիններ, որոնք պետք է իրեն խորհուրդներ տան և օգնեն գերատեսչության գործունեությունը ռազմավարական նպատակներին համապատասխանեցնելու վերաբերյալ հանգուցային ռազմավարական որոշումների ընդունման ժամանակ: Այդ մարմիններն են.

\* Այս համակարգը ձևավորվել է Ջ. Քենեդիի նախագահության օրոք: ՊՆ համակարգում ԱՄՆ-ի այդ ժամանակվա պաշտպանության քարտուղար Ռ. Մակնամարայի կատարած բարեփոխումների վերաբերյալ հանգամանորեն տես *В. В. Шлыкков. Один в поле не воин. «Россия в глобальной политике», № 3, май—июнь 2007 г.* (<http://www.globalaffairs.ru/numbers/26/7704.html>):

<sup>17</sup> Տես «2008 US DOD Strategic Management Plan», P. 1:

<sup>18</sup> Տես նույն տեղում, էջ 5:

<sup>19</sup> Տես նույն տեղում:

- *Պաշտպանության բարձրաստիճանի ղեկավարության խորհուրդը* (ՊԲՂԽ՝ *DSLCS*), որը հրավիրվում է բարձր մակարդակի խնդիրների ու գերակայությունների, ինչպես նաև գերատեսչության ռազմավարական ուղղորդման գործում պաշտպանության քարտուղարին խորհրդով ու աջակցությամբ ապահովելու համար: ՊԲՂԽ գործադիր քարտուղարը (*Executive Secretary*) Միացյալ շտաբի պետն (*Director of Joint Staff*) է, որը քաղաքականության գծով ենթաքարտուղարի հետ համագործակցությամբ մշակում է քաղաքական օրակարգը,

- *Ավագ ղեկավարի՝ վերանայման խումբը* (ԱՂՎԽ՝ *SLRG*), որը հրավիրվում է պաշտպանության քարտուղարի հայեցողությամբ՝ տրամախաչվող այնպիսի ընդհանուր ռազմավարական խնդիրների լուծման համար, որոնք առնչվում են պաշտպանության քարտուղարի գրասենյակին, ռազմական գերատեսչություններին, մարտական հրամանատարություններին և միջգերատեսչական կապերին: ԱՂՎԽ գործադիր քարտուղարը Ծրագրերի վերլուծության և գնահատման (ԾՎԳ՝ *PA&E*) տնօրենն է,

- *Փոխարտուղարի խորհրդարար աշխատանքային խումբը* (ՓԽԱԽ՝ *DAWG*), որը հրավիրվում է ամեն շաբաթ, որպեսզի խորհրդով և աջակցությամբ ապահովի այն հարցերի վերաբերյալ, որոնք առնչվում են պաշտպանության գերատեսչության նախաձեռնողական կառավարմանը, աշխատանքային կերպավորմանը, գործողություններին և այլ հարցերի: ՓԽԱԽ-ի գործադիր քարտուղարը ԾՎԳ տնօրենն է,

- *Պաշտպանության քիզնե-համակարգերի կառավարման կոմիտեն* (ՊԲՀԿԿ՝ *DBSMC*), որը վերահսկում է ՊՆ աշխատանքային գործունեության կանոնավոր կատարումը:

Ռազմավարական որոշումների կայացման համար խորհրդատվություն: Պաշտպանության քարտուղարի գլխավոր անկախ ռազմական խորհրդականն է Շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահը: Նա պետք է ԱՄՆ-ի նախագահին և պաշտպանության քարտուղարին ապահովի խորհրդով, որի ձևակերպման համար կիրառվում է ռազմավարական պլանավորման միացյալ համակարգը (*Ռ-ՊՄՀ՝ JSPS*): Ռազմավարական ծրագրման, պլանավորման, պահանջումներին և ռիսկի վերաբերյալ խորհուրդը, որը մշակվում է Ռ-ՊՄՀ միջոցով՝ ՇՊՄԿ նախագահի կողմից տրված լիազորությունների շրջանակներում, հիմք է ապահովում Միացյալ շտաբի ապագա գործողությունների համար, ինչպես նաև պետության ու պաշտպանական ոլորտի բարձրաստիճանի ղեկավարությանն առաջադրում է ելակետային ռազմական դրույթներ՝ ռազմավարության ուղղվածության և դրա հետ կապված ռազմավարական ուղղորդման ու քաղաքականության մշակման համար: Պաշտպանության քարտուղարը հիմնվում է նաև փորձաքննական խորհուրդների և վերլուծությունների վրա, որոնք ապահովում են փորձագետներից կազմված երեք անկախ մարմիններ: Դրանց անդամների թվում են կառավարության նախկին հեղինակավոր պաշտոնյաներ, արդյունաբերության մասնավոր հատվածի ու գիտական շրջանների ներկայիս ու նախկին ղեկավարներ: Նշենք, որ ՇՊՄԿ նախագահի, ինչպես նաև ՊՆ բոլոր բարձրաստիճանի ղեկավարների կարծիքը և գնահատումները հիմնվում են նրանց պատրաստվածության, քաղաքացիական ու ռազմական կառավարման համապարփակ

ՊՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԱՎԱԳ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ  
 ԸՍՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 5105.79 ՀՐԱՄՆԱԳՐԻ  
 ԵՎ «ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2222 ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ» (2005 Թ.)

ՊՆ ԱՎԱԳ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	Անդամակցությունը և հանդիպումների հաճախականությունը			
	ՊԲՂԽ (տարին երկու անգամ)	ԱՂՎԽ (ըստ քարտուղարի հայեցողության)	ՓԽԱԽ (շաբաթական)	ՊԲՀԿԿ (ամսական)
Պաշտպանության քարտուղար	հախազահ	հախազահ		
Պաշտպանության փոխքարտուղար / ՊՆ կառավարման համակարգի գլխավոր պաշտոնյա	√	√	հախազահ	հախազահ
Ռազմական վարչությունների գծով քարտուղար	√	√	√	√
Գնումների, տեխնոլոգիաների և քիմուրքային ապահովման գծով ենթաքարտուղար	√	√	√	փոխհախազահ
Քաղաքականության գծով ենթաքարտուղար	√	√	√	√
Ենթաքարտուղար (վերահսկիչ) / գլխավոր ֆինանսական ծառայող	√	√	√	√
Անձնակազմի և պատրաստության գծով ենթաքարտուղար	√	√	√	√
Հետախուզության գծով ենթաքարտուղար	√	√	√	√
Կառավարման համակարգի գլխավոր պաշտոնյայի տեղակալ	√	√	√	√
Քարտուղարի՝ ցանցային ինտեգրման և տեղեկատվության գծով օգնական / տեղեկատվության գծով գլխավոր ծառայող	√	√	√	√
Քարտուղարի՝ հասարակության հետ կապերի գծով օգնական	√	√	√	
Քարտուղարի՝ իրավաբանական հարցերի գծով օգնական	√	√	√	
Գլխավոր խորհրդական (հյուպատոս)	√	√	√	√
Վարչարարության և կառավարման գծով տնօրեն		√	√	√
Ծրագրային վերլուծության և գնահատման գծով տնօրեն	√	√	√	√
Շտաբների պետերի միացյալ կոմիտեի հախազահ	փոխհախազահ	փոխհախազահ		
Շտաբների պետերի միացյալ կոմիտեի փոխհախազահ	√	√	փոխհախազահ	
Յամաքային գործերի շտաբի պետ	√	√	√	
ՌՕՈՒ-ի շտաբի պետ	√	√	√	

ՊՆ ԱՎԱԳ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	Անդամակցությունը և հանդիպումների հաճախականությունը			
	ՊԲԳԽ	ԱԳՎԽ	ՓԽԱԽ	ՊԲՀԿԿ
Ռազմածովային գործողությունների գծով պետ (ՌԾՈՒ պետ)	√	√	√	
Ծովային հետևակի գործառնականության հրամանատար	√	√	√	
ԱՄՆ-ի առափնյա պաշտպանության հրամանատար	√			
Աֆրիկյան խմբավորման հրամանատարության հրամանատար	√			
Կենտրոնական խմբավորման հրամանատարության հրամանատար	√			
ԱՄՆ-ի Եվրոպական խմբավորման հրամանատարության հրամանատար	√			√
ԱՄՆ-ի Միացյալ ուժերի հրամանատարության հրամանատար	√			√
ԱՄՆ-ի Հյուսիսային խմբավորման հրամանատարության հրամանատար	√			
ԱՄՆ-ի Խաղաղօվկիանոսյան հրամանատարության հրամանատար	√			
ԱՄՆ-ի Հատուկ գործողությունների հրամանատարության հրամանատար	√		√	
ԱՄՆ-ի Հարավային խմբավորման հրամանատարության հրամանատար	√			
ԱՄՆ-ի Ռազմավարական ուժերի հրամանատարության հրամանատար	√			
ԱՄՆ-ի Տրանսպորտային ուժերի հրամանատարության հրամանատար	√			√
Կորեայում ԱՄՆ-ի ՋՈՒ-ի հրամանատար	√			
Միացյալ շտաբի պետ (տնօրեն)	√	√	√	√
Ազգային գվարդիայի բյուրոյի պետ	√	√	√	
Միացյալ շտաբի Պլանավորման և քաղաքականության վարչության տնօրեն (J5)			√	
Միացյալ շտաբի Բյուջետավորման և ֆինանսավորման վարչության տնօրեն (J8)			√	
ՊՆ վարչությունների տնօրեններ (անհրաժեշտության դեպքում)				√
ՅԶ կառավարման գլխավոր ղեկավար				√
ՌԾՈՒ-ի կառավարման գլխավոր ղեկավար				√
ՌՕՈՒ-ի կառավարման գլխավոր ղեկավար				√

կառույցին մասնակցության վրա, ինչն օգնում է գերատեսչության գործունեության ամենօրյա ուղղորդմանը:

Պաշտպանական կոլեգիաներ: Երեք անկախ քաղաքացիական կոլեգիաները նույնպես ներկայացնում են գնահատումներ և այլընտրանքային առաջարկություններ՝ կապված պաշտպանական քաղաքականության և գործունեության մի շարք հարցերի հետ: Այսպես.

- *պաշտպանական քաղաքականության կոլեգիան* պաշտպանական քաղաքականության հարցերի վերաբերյալ անկախ, հիմնավորված խորհրդով ու կարծիքով ապահովում է քարտուղարին, փոխքարտուղարին և քաղաքական գծով ենթաքարտուղարին,

- *պաշտպանական գիտության կոլեգիան* ազգային անվտանգության ամրապնդման նպատակով գնահատում է գերատեսչության առջև հետազոտական, ինժեներական և արտադրական ոլորտներում ծառայող հրատապ ու բարդ տեխնոլոգիական խնդիրները, հստակեցնում այդ բնագավառներում նոր տեխնոլոգիաների և տեխնոլոգիայի նոր կիրառումների հարցերը,

- *պաշտպանական բիզնես-կոլեգիան* նախարարության ղեկավարությանը տրամադրում է անկախ խորհուրդներ և առաջարկություններ բիզնես-ծրագրերի համար արդյունավետ ռազմավարությունների մշակման վերաբերյալ:

Այս խորհրդատու կոլեգիաների կարծիքները հաճախ հաշվի են առնվում այն դեպքերում, երբ ձևակերպվում են ներքին կառավարման գծով նախաձեռնությունները կամ ԱՄՆ-ի «Նախագահի կառավարման ծրագրում» նախանշվող կառավարական բարեփոխումների իրականացման նկատմամբ գերատեսչության դիրքորոշումները:

### **3. Պաշտպանական քաղաքականությունը և այդ ոլորտում որոշումների կայացման գործընթացի ընդհանուր սկզբունքները**

ԱՄՆ-ում պաշտպանական քաղաքականությունը իրականացվում է պետության պաշտպանական գերատեսչության միջոցով, սակայն դրա մշակումը կատարվում է ինչպես պաշտպանության նախարարության համապատասխան օղակների, այնպես էլ պետական ու հասարակական տարբեր կազմակերպությունների միջոցով: Դա արվում է համադասող օղակի համար առավել արդյունավետ, ռացիոնալ և օպտիմալ նախագծերի մշակումների նախապատրաստման, իսկ ռազմավարական որոշում կայացնող օղակի համար՝ որոշումների կայացման արդյունավետության, ռացիոնալության և օպտիմալության ապահովման նպատակով: Տարբեր կազմակերպություններ ասելով՝ նկատի ունենք և՛ ներգերատեսչական, և՛ արտագերատեսչական օղակները:

Անվտանգության ապահովման պաշտպանական ոլորտի որոշումների կայացումը բացառապես պետության ռազմաքաղաքական ղեկավարության (այսուհետև՝ Ռ-Գ) առանձնաշնորհն է: Երբեմն մասնագիտական գրականության մեջ Ռ-Գ-ն անվանվում է նաև *ռազմավարական ղեկավարություն*: Նման որոշումներ կայացնող (դրա համար պատասխանատու) անձանց հայացքները, որպես կանոն, ենթարկվում են որոշակի ազդեցության: Այդ պայմաններում ռազմաքաղաքական որոշումների

կայացման գործընթացում զգալի չափով աճում է պետական և ոչ պետական վերլուծական կազմակերպությունների (ռազմավարական գաղափարների գեներացիայի «ուղեղային» կենտրոններ) դերը, որոնք զբաղվում են անվտանգության ու, մասնավորապես, պաշտպանության խնդիրների հետազոտություններով:

Իրերի նման դրվածքը բնորոշ է հատկապես ԱՄՆ-ին, որտեղ ներկայումս համապատասխան պետական կազմակերպություններին զուգահեռաբար գոյություն ունի ոչ պետական «ուղեղային» կենտրոնների (ՌԻԿ-եր) լայն ցանց: Վերջիններս զբաղվում են հետազոտություններով ներքին, արտաքին ու պաշտպանական քաղաքականության, ազգային անվտանգության, սոցիալական հարաբերությունների, գիտատեխնիկական մշակումների և այլ ոլորտներում: Միայն ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոնի մերձակա Կոլումբիա շրջանում դրանց թիվը կազմում է շուրջ 1000: Սակայն առավել ազդեցիկ ՌԻԿ-երի թիվը չի անցնում մեկ տասնյակից<sup>20</sup>: ԱՄՆ-ում ռազմավարական փաստաթղթերի մշակման ժամանակ անվտանգային ընկերակցության գերատեսչությունների մտավոր ռեսուրսի համախմբումը կատարվում է Պաշտպանության ազգային համալսարանի (առաջին հերթին՝ նրա Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի) հովանու ներքո: Սակայն մեծ է նաև մասնավոր ՌԻԿ-երի դերը. օրինակ՝ առաջատար ոչ կառավարական «Ռ-ԷՆՌ-» կազմակերպության գիտական պատվերների 80 %-ը Պենտագոնի պատվերներն են:

ՌԻԿ-երի գլխավոր նախանշանակումն է համապատասխան դրամաշնորհների տրամադրման միջոցով պետական պատվերի շրջանակներում կամ ինքնուրույն նախաձեռնությամբ (հասարակական կամ մասնավոր հիմնադրամներից ֆինանսավորմամբ) արդիականություն ունեցող այս կամ այն խնդիրների ուսումնասիրությունն ու առաջարկությունների մշակումը, որոնց արգասիքները Ռ-Ը-ն հաշվի է առնում գործնական որոշումների մշակման ժամանակ: Ավելին. մասնավոր ՌԻԿ-երը կարող են պատվեր ստանալ ոչ միայն անմիջական որոշում կայացնող օղակից, այլև գերատեսչական պետական հիմնարկից կամ մեկ այլ ՌԻԿ-ից, որը կատարում է ենթակապալառուի հետազոտությունների արդյունքների համատեղ քննարկում և որոշում կայացնող օղակին ուղղված իր առաջարկություններում հաշվի է առնում դրանք: Որոշում կայացնող գերատեսչության ղեկավարն իր հերթին կարող է պատվերն ուղարկել և՛ պետական, և՛ մասնավոր ՌԻԿ՝ ակնկալելով ստացվելիք երկու առաջարկությունների համախմբից լավագույնն ընտրելու հեռանկարը, իսկ որոշ դեպքերում՝ իր կողմից կայացվելիք որոշման մեջ համադրելու դրանք:

**4. Պաշտպանական քաղաքականության ոլորտում քաղաքական ռազմավարական որոշումների կայացումը և իրականացումը պաշտպանության նախարարության մակարդակում**

ՊՆ-ում կիրառվում է պաշտպանական քաղաքականության վերաբերյալ ռազմավարական որոշումների մշակման, պատրաստման և իրականացման երկթև հա-

<sup>20</sup> Shtu C. Чесноков. Роль негосударственных «мозговых центров» в процессе принятия решений военный-политическим руководством США в области обороны и безопасности. «Зарубежное военное обозрение», 2007, № 5:

մակարգ, որը կարելի է նմանեցնել մի եռանկյունու<sup>21</sup>: Այդ եռանկյունու վերին գագաթում գտնվում է որոշումներ ընդունողը, վերին անկյունում՝ դրանք ձևակերպողը, աջ անկյունում գտնվում են այդ որոշումների նախագծերը մշակող հաստատությունները, իսկ ձախ անկյունում՝ իրականացնողները: Վերին գագաթից դեպի անկյուններ գնացող թևերում գտնվում են պետական համադասող օղակները, իսկ այդ օղակների միջև կապը ապահովվում է նաև հորիզոնական հարթությունում, երբ մշակողները մշտազնունմ են իրականացնողների գործունեությունը:

Որոշումները կայացվում են հետևյալ շղթայով. որոշումները մշակող՝ պաշտպանության քարտուղարի գրասենյակը, դրանք քննարկող ու զտող Պաշտպանական քաղաքականության գծով խորհրդատուների կոմիտեն (*ՊԶԽԿ՝ Defense Policy Board Advisory Committee*) և որոշումները կայացնող պաշտպանության քարտուղարը, որոնք էլ կազմում են գերատեսչության ղեկավարությունը: Վերջինիս և ավելի բարձր օղակների ընդունած որոշումները իրականացվում են պաշտպանական գործակալությունների և ռազմական վարչությունների միջոցով:

Որոշումների վերջնական մշակումը կատարվում է ՊԶԽԿ-ում: Կոմիտեն պաշտպանության քարտուղարին, փոխքարտուղարին, որը ՊՆ կառավարման համակարգի գլխավոր պաշտոնյան է, և քաղաքականության գծով ենթաքարտուղարին ապահովում է պաշտպանական քաղաքականության հանգուցային խնդիրների վերաբերյալ անկախ, տեղեկունակ խորհրդատվությամբ և կարծիքներով: Այս կառույցը ՊՆ-ի համար պատմականորեն ծառայել է որպես մասնավոր հատվածի ՌԻԿ-երից կամ փորձագետներից խորհրդատվական փորձաքննական եզրակացություն ստանալու լծակների համակարգ:

Պաշտպանության քաղաքականության գծով ենթաքարտուղարի<sup>22</sup> գրասենյակի առաքելությունն է մշտապես ապահովել ազգային անվտանգության նպատակներին համահունչ արագ ու պատշաճ արձագանքման և ուսումնասիրված խնդիրների վերաբերյալ *խորհուրդների փրամադրում ու աջակցություն* պաշտպանության քարտուղարին և նախարարության ղեկավարությանը<sup>23</sup>: Պաշտպանության քաղաքականության գծով ենթաքարտուղարի պարտականությունները ներառում են իր գրասենյակի միջոցով պաշտպանական (ներառյալ՝ ռազմական) պլանավորման տեսլականի, ղեկավարման և ուժային քաղաքականության, այլ երկրների հետ ՊՆ հարաբերությունների ու պաշտպանության ոլորտում միջգերատեսչական քաղաքականության մշակման և իրականացման գործում ՊՆ դերի որոշումը<sup>24</sup>:

Մշակված քաղաքականության իրականացումը համադասում են ինչպես քաղաքականության գծով ենթաքարտուղարն ու նրա գրասենյակը, այնպես էլ գործադիր քարտուղարի գրասենյակը: Գործադիր քարտուղարը նաև աջակցում է պաշտպա-

<sup>21</sup> Տես [www.defenselink.mil/osd/](http://www.defenselink.mil/osd/):

<sup>22</sup> Տես [www.defenselink.mil/policy/sections/sections/leadership/index.html](http://www.defenselink.mil/policy/sections/sections/leadership/index.html):

<sup>23</sup> Տես <http://www.defenselink.mil/policy/>:

<sup>24</sup> Տես <http://www.defenselink.mil/home/top-leaders/>:



մության քարտուղարին ու փոխքարտուղարին իրենց գործադիր լիազորությունների իրականացման մասով<sup>25</sup>:

Պաշտպանական քաղաքականության մաս կազմող **ռազմական քաղաքականության** ղեկավարումն ու կառավարումն ԱՄՆ-ում իրականացվում են որոշակի առանձնահատկություններով: Ռ-ազմական քաղաքականության իրականացման գծով հիմնական պատասխանատուներն են ՇՊՄԿ նախագահը, ԱՄՆ-ի *բանակի, կամ ցամաքային զորքերի, ռազմածովային և ռազմաօդային քարտուղարները* (համապատասխանաբար՝ *United States Secretary of the Army, United States Secretary of the Navy, United States Secretary of the Air Force*), որոնք, ղեկավարելով ճյուղային ռազմական վարչությունները, զբաղեցնում են քաղաքացիական պաշտոններ և կատարում են ըստ ճյուղերի ընթացիկ կառավարման ու ապահովման (գործադիր) գործառույթներ ԱՄՆ-ի ՋՈՒ-ի տեսակներին\* առնչվող բոլոր հարցերով<sup>26</sup>: Այս քարտուղարները պարտավոր են պաշտպանության քարտուղարին և դաշնային մակարդակի գործադիր իշխանությանը խորհրդատվություն տրամադրել ՋՈՒ-ի առաքելությունների իրականացման համար անհրաժեշտ կարիքների և հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում օրենսդրին տալ հաշվետվություն իրենց պատասխանատվության սահմաններում ռազմական քաղաքականության իրականացման վերաբերյալ: Նրանք պաշտպանության քարտուղարին, գործադիր իշխանությանը և Կոնգրեսին ներկայացնում ու հիմնավորում են ցամաքային զորքերին, նավատորմին (այդ թվում՝ ծովային հետևակին) և ավիացիային առնչվող ռազմական քաղաքականությունը, պլանները, ծրագրերը, նախագծերը և բյուջեն, ինչպես նաև այդ մասին իրազեկում են հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում այդ քարտուղարները խորհրդակցություններ են անցկացնում ՋՈՒ-ի տեսակների բարձրաստիճան ղեկավարության հետ՝ այլևայլ հարցերի, խնդիրների քննարկումն ու ուղղորդումն ապահովելու կամ նրանցից խորհուրդ ստանալու նպատակով<sup>27</sup>:

ՇՊՄԿ նախագահը ԱՄՆ-ի նախագահի, Ազգային անվտանգության խորհրդի և պաշտպանության քարտուղարի գլխավոր ռազմական խորհրդակցան է<sup>28</sup>: Նա պար-

<sup>25</sup> Տես <http://www.dod.mil/execsec/about.html>:

\* ԱՄՆ-ում կան ՋՈՒ-ի 4 տեսակ՝ ցամաքային զորքեր, կամ բանակ (*the Army*), ՌՃՈՒ (*the Navy*), ՌՕՈՒ (*the Air Force*) և ծովային հետևակ (*Marine Corps*), ընդամենի թեև վերջինս ունի առանձին հրամանատարություն և շտաբ, սակայն նրա ապահովման (քաղաքացիական) բաղադրիչները վարչականորեն ենթարկվում են Ռ-ազմածովային քարտուղարի վարչությանը:

<sup>26</sup> Քարտուղարները նաև պարտավոր են ղեկավարել իրենց ոլորտի քաղաքացիական ծառայողների անձնակազմը (տես «Cornell University, Law school», Title 10. § 3013, Secretary of the Army ([http://www.law.cornell.edu/uscode/html/uscode10/uscode10\\_usc\\_sec\\_10\\_00003013---000-.html](http://www.law.cornell.edu/uscode/html/uscode10/uscode10_usc_sec_10_00003013---000-.html)); § 5014, Office of the Secretary of the Navy ([http://www.law.cornell.edu/uscode/html/uscode10/uscode10\\_usc\\_sec\\_10\\_00005014---000-.html](http://www.law.cornell.edu/uscode/html/uscode10/uscode10_usc_sec_10_00005014---000-.html)); § 8013, Secretary of the Air Force ([http://www.law.cornell.edu/uscode/html/uscode10/uscode10\\_usc\\_sec\\_10\\_00008013---000-.html](http://www.law.cornell.edu/uscode/html/uscode10/uscode10_usc_sec_10_00008013---000-.html))):

<sup>27</sup> Տես <http://www.army.mil/institution/leaders/sa/>:

<sup>28</sup> Տես «Goldwater-Nichols DOD Reorganization Act of 1986» ([http://www.jcs.mil/cjs/\\_goldwater\\_nichol\\_act1986.html](http://www.jcs.mil/cjs/_goldwater_nichol_act1986.html)):

տավոր է խորհրդի կարգով արտահայտել ռազմական քաղաքականության խնդիրների վերաբերյալ իր նախագահած կոմիտեի յուրաքանչյուր անդամի և անձամբ իր կարծիքը, միևնույն ժամանակ, խորհուրդներ է տալիս ռազմական քաղաքականություն մշակող քարտուղարներին՝ որպես ռազմավարական պլանավորում իրականացնող, ինչպես նաև ռազմական ուժ կիրառող օդակի ղեկավարների<sup>29</sup>:

### **Ամփոփում**

Ելնելով վերը շարադրվածից՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին.

- ԱՄՆ-ի պաշտպանական քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման և իրականացման գործընթացն ունի բազմաշերտ ու բազմաբովանդակ կառուցվածք և բխում է իշխանության մարմինների տարանջատման սկզբունքից: Որոշումները մշակում, ձևակերպում և իրականացնում են տարբեր օդակներ, ինչը պայմանավորված է ներգերատեսչական ու միջգերատեսչական շահերի միջև հակասությունները հարթելու և ազգային շահերին համապատասխանեցնելու, որոշումների կայացման գործընթացում այդ շահերի ոչ կառուցողական բախում թույլ չտալու և ազգային շահերի գերակայությունն ապահովելու անհրաժեշտությամբ,

- ԱՄՆ-ում պաշտպանական քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնող ամենավերին օդակը ԱՄՆ-ի նախագահն է, որի որոշումները օրենսդրությամբ սահմանված դեպքերում ենթակա են օրենսդիր մարմնի հաստատման,

- ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունը պաշտպանական քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման նախապատրաստման գործընթացում կիրառում է առաջավարության (լիդերության) սկզբունքը, իսկ իրականացման ժամանակ գործում է վարչական ապարատի՝ պաշտպանական գործակալությունների ու ռազմական վարչությունների միջոցով: Այսինքն՝ որոշումների նախագծերի ձևավորման, օրակարգի ձևակերպման, մշակման ու որոշումը կայացնող օդակին դրանց ներկայացման ընթացքում օգտագործվում են խորհրդատու պաշտոնյաների ստեղծագործական կարողությունները, իսկ վերջիններս մեծապես հենվում են իրենց օդակում առաջավարման սկզբունքով գործող պաշտոնյաների կամ պետական ու մասնավոր «ուղեղային» կենտրոնների մտավոր ներուժի ու նախաձեռնողականության վրա,

- ԱՄՆ-ում ռազմական քաղաքականության օրակարգի կազմումը, մշակումը և ներկայացումը կատարում են ՋՈՒ-ի տեսակների քարտուղարներն ու ՇՊՍԿ նախագահը: Միևնույն ժամանակ, ուժային քաղաքականության մշակման ու դրա ռազմավարական պլանավորման մեջ իրենց ուրույն դերն ու տեղն ունեն պաշտպանական քաղաքականության գծով ենթաքարտուղարը, նրա օգնականները և ենթաքարտուղարի գրասենյակի՝ ղեկավար գործառույթներ ունեցող այլ պաշտոնյաներ,

- պաշտպանական (այդ թվում՝ ռազմական) քաղաքականությունն իրականացվում է հիմնականում ՊՆ գործադիր քարտուղարի գրասենյակի համադասման ներքո գործող պաշտպանական գրասենյակների ու ռազմական վարչությունների միջոցով,

<sup>29</sup> Stu «Goldwater-Nichols Act of 1986», U.S. Code, Title 10, Subtitle A, Part I, Chapter 5, 151, 153 ([http://www.jcs.mil/cjs/goldwater\\_nichol\\_act1986.html](http://www.jcs.mil/cjs/goldwater_nichol_act1986.html)):

• թերությունների կամ նոր խնդիրների բացահայտման նպատակով պաշտպանական քաղաքականության իրականացման փորձաքննության (ներգերատեսչական վերահսկողության) ու դրա արդյունավետության և արդյունքների գնահատման գործառնություններ կատարում են պաշտպանության քարտուղարի ենթաքարտուղարները՝ յուրաքանչյուրն իր գծով, իսկ ընդհանուր վերահսկողությունը դրվում է պաշտպանության քաղաքականության գծով ենթաքարտուղարի վրա,

• ԱՄՆ-ի ազգային անվտանգության ոլորտում բացառված է ապարատի կորպորատիվ շահերի առաջնությունը:

Այսպիսով՝ պաշտպանական քաղաքականության վերաբերյալ նախագծերի մշակումը լրիվ փուլաշրջանով շարունակաբար կատարվում է ենթաքարտուղարի գրասենյակի՝ ուղղությունների ղեկավարների կողմից: Նման կառուցվածքը հնարավորություն է տալիս.

• մշակողի և իրականացնողի միջև պահպանելու կենսունակ հորիզոնական կապեր,

• արդյունքները մշտազննող մշակողին՝ ոչ միայն չկտրվելու իրականությունից, այլև ժամանակին վերհանելու այն խնդիրները, որոնք հրատապ լուծման կարիք ունեն:

Այս մոդելի շնորհիվ էապես չեզոքացվում են որոշումների կայացման և իրականացման համակարգերի թերությունները, որոնք հատուկ էին ԽՍՀՄ-ին, որտեղ վարչական ապարատի ուղղահայաց կառուցվածքի միջոցով նման խնդիրների լուծումների հասունացումը արձագանքման առումով ժամանակավրեպ էր:

Կարծում ենք, որ ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների շրջանակներում ղեկավարման ու կառավարման համակարգերի կատարելագործման ծրագրերի մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այդ համակարգերի ամերիկյան մոդելը, որի հիմնական սկզբունքներն են ղեկավար ու կառավարող մարմինների տարանջատվածությունը և որոշումների մշակման ժամանակ մասնագիտական-փորձագիտական աջակցությունը:

## ОБ ОПЫТЕ РУКОВОДСТВА И УПРАВЛЕНИЯ СИСТЕМОЙ ОБОРОННОЙ ПОЛИТИКИ США

*Д. С. ЧИЛИНГАРЯН, полковник, заместитель начальника ИНСИ  
МО РА — главный редактор военно-научного журнала «Айкакан банак»,*

*В. П. АВЕТИСЯН, подполковник, заместитель главного редактора  
военно-научного журнала «Айкакан банак» — юрист,*

*Т. Р. МАРТИРОСЯН, старший лейтенант, кандидат исторических наук,  
старший офицер-специалист военно-научного журнала «Айкакан банак»*

### РЕЗЮМЕ

Важной сферой осуществляемых в РА оборонных реформ является совершенствование систем руководства и управления. Однако изучение государственной практики РА показывает, что в нашей политико-правовой культуре наблюдается смешение этих понятий, что является пережитком советских

аппаратно-корпоративных традиций. В качестве передовой модели государственного руководства и управления в сфере оборонной политики на примере процессов принятия и исполнения стратегических решений рассматривается американская модель. Анализ этой модели свидетельствует о необходимости дифференциации данных понятий и соответствующих им структур и процессов. Предлагается в ходе осуществляемых в РА оборонных реформ учесть американскую модель, основными принципами которой являются разделенность органов руководства и управления и использование профессиональной экспертной поддержки на стадии разработки решений.

## ON THE EXPERIENCE OF THE GOVERNANCE AND MANAGEMENT OF THE USA DEFENSE POLICY SYSTEM

*D. S. CHILINGARYAN, Colonel, Deputy Commandant of the INSS, MoD, RA —  
Editor-in-Chief of the Defense-Academic Quarterly «Haikakan Banak»,  
V. P. AVETISYAN, Lieutenant-Colonel, Deputy Editor-in-Chief  
of the Defense-Academic Quarterly «Haikakan Banak»—Lawyer,  
T. R. MARTIROSYAN, Senior Lieutenant, Candidate of Historical Sciences,  
Senior Officer-Specialist of the Defense-Academic Quarterly «Haikakan Banak»*

### SUMMARY

The improvement of the governance and management system is an important sphere of the defense reforms being implemented in the RA. However, the study of the RA state practice shows that the confusion of these notions is observed in our political-legal culture, and this is a vestige of the Soviet bureaucratic-corporate traditions. The US model is considered as an advanced model of state governance and management in the sphere of defense policy by the example of the processes of making and implementing strategic decisions. The analysis of this model testifies the necessity of differentiation of the given notions, and the relevant structures and processes. The US model, the basic principles of which are the split of governance and management bodies and the use of professional expert support at the stage of decision-making, is proposed to be taken into account in the course of defense reforms being implemented in the RA.

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ  
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԸԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

*Վ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, ավագ լեյտենանտ, իրավագիտության մագիստրոս,  
ՀՀ ՊՆ ՎԱ Գնումների փաստաթղթերի ձևակերպման բաժնի սպա,  
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի  
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ*



Ժամանակակից պետության առջև ծառայած խնդիրների շարքում առանձնանում են պետության տարածքային ամբողջականության պահպանման, ինքնիշխանության պաշտպանության և քաղաքացիների անվտանգության ապահովման խնդիրները: Դրանց լուծման նպատակով պետությունը իրականացնում է մի շարք միջոցառումներ, որոնք ընդունված է անվանել պաշտպանության կազմակերպում: Պաշտպանության կազմակերպումը կատարվում է պաշտպանության բնագավառում կառավարման միջոցով, որը պետական կառավարման մի առանձին ոլորտ է:

Պետական կառավարումը պետության գործառնությունների և խնդիրների իրականացման միջոց է: Իսկ այդ գործառնություններն ու խնդիրներն էլ պայմանավորված են պետության էությանը, դերով և նշանակությամբ: Ժամանակակից ժողովրդավարական պետության խնդիրն է, մի կողմից, մարդու իրավունքների և ազատությունների ապահովումը, նրա գործունեության համար ազատ միջավայրի ստեղծումը, իսկ մյուս կողմից՝ հասարակության մեջ որոշակի կանոնակարգվածության ապահովումը: Այլ կերպ ասած՝ պետությունը, լինելով առավելապես սոցիալական փոխզիջման գործիք, հոգում է հասարակության կարիքները, ինչպիսիք են անվտանգության ու խաղաղության ապահովումը, առողջապահության կազմակերպումը, կապի և տրանսպորտի միջոցների կանոնակարգումը, ճանապարհաշինությունը, հանցավորության դեմ պայքարը և այլն<sup>1</sup>:

Պետությունը՝ որպես սոցիալական փոխզիջման գործիք, հասարակության բնականոն զարգացումն ապահովելու նպատակով իր առջև դրված խնդիրները լուծելու համար իրականացնում է մի շարք գործառնություններ: Այդ գործառնությունները պայմանավորված են հասարակության գործերին պետության միջամտության աստիճանով:

Կախված իրականացման ոլորտից՝ այդ գործառնությունները կարող են լինել ներ-

<sup>1</sup> Տես Գ. Բ. Атаманчук. Теория государственного управления. М., 2004, с. 203:

քին և արտաքին: Երկրի պաշտպանությունը հիմնականում վերաբերում է պետության արտաքին գործառնություններին, քանի որ լուծում է արտաքին խնդիրներ: Այս առումով անհրաժեշտ է նկատել, որ պաշտպանությունը չի սահմանափակվում միայն ռազմական գործողությունների կատարմամբ. այն ավելի լայն հասկացություն է, որը ներառում է պաշտպանունակության մեծացում, երկրի ու բնակչության նախապատրաստում պաշտպանությանը և այլն: Միևնույն ժամանակ այդ միջոցառումները ևս կոչված են նպաստելու արտաքին խնդիրների լուծմանը<sup>2</sup>:

Պետությունը՝ որպես հասարակական կյանքի կազմակերպման ձև, օժտված լինելով իշխանությամբ, ուժի կիրառման իրավունքով, ինքնիշխանությամբ և այլ հատկանիշներով, պատասխանատվություն է կրում ազգային անվտանգության ապահովման համար:

«Պետության անվտանգություն» հասկացությունը, որը ներկայումս առավելապես գործածվում է որպես ազգային անվտանգություն, նախ և առաջ կապվում է արտաքին ու ներքին սպառնալիքներից իրեն պաշտպանելու, իր գոյությունը պահպանելու ունակության հետ: Այսպես. «անվտանգության իրավունքի» մասին հայտնի իրավաբան միջազգայնագետ Է. դը Վատտելը գրել է. «Անվտանգությունը պետության իրավունքն է՝ իրեն պաշտպանելու ցանկացած վիրավորանքից»<sup>3</sup>: Այդ իրավունքը, ըստ նրա, հարաբերվում է պետության այսպես կոչված պահպանության և կատարելագործման հետ: Պետությունը, հասնելով ինքնուրույնության, միջազգային հարաբերություններում պահպանում և պաշտպանում է իր ինքնիշխանությունը: Ընդ որում, հաշվի առնելով համընդհանրացման ինտենսիվ գործընթացները, նա պետք է դա անի բոլոր հնարավոր միջազգայնորեն իրավաչափ միջոցներով: Սակայն պետությունը, ենթարկվելով միջազգային իրավունքին, այդուհանդերձ, իր տարածքում պահպանում է գերագույն իշխանությունը, որով ապահովում է միջազգային հարաբերություններում իր քաղաքական անհատականությունը:

Քաղաքացիական իրավական հասարակությունում պետական կառավարման ցանկացած ոլորտ ենթակա է ներքին օրենսդրական կարգավորման: Մասնավորապես՝ Հայաստանի պայմաններում իրավական առումով դա բխում է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով<sup>4</sup>:

Սակայն ներկայումս հարցը չի լուծվում միայն ներպետական օրենսդրությամբ: Պետությունները, լինելով միջազգային հարաբերությունների համակարգի բաղկացուցիչ մաս, սահմանելով միջազգային-իրավական նորմեր, պարտավոր են իրենց

<sup>2</sup> Տես «Общая теория государства и права». Академический курс. М., 2007, т. 1, 3-е изд., с. 389:

<sup>3</sup> Э. де Ваттель. Право народов, или принципы естественного права, применяемые к поведению и делам наций и суверенов. М., 1960, кн. II, с. 418.

<sup>4</sup> Տես «ՀՀ Սահմանադրություն», 2005 թ.:

ներքին կյանքում ևս առաջնորդվել դրանցով: Այսպես. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի չորրորդ մասը նախատեսում է, որ միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել<sup>5</sup>:

Ներկայումս, համընդհանրացման պայմաններում, հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները ենթակա են միջազգային իրավական կարգավորման: Պաշտպանության բնագավառի կառավարումը ևս բացառություն չէ: Այս է փաստում նաև «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի երկրորդ հոդվածը, համաձայն որի՝ պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրությունը բաղկացած է նաև ՀՀ միջազգային պայմանագրերից<sup>6</sup>:

Միջազգային իրավական այն նորմերը, որոնք առնչվում են պաշտպանության բնագավառի կառավարման հետ, կարելի է բաժանել երկու խմբի՝ պաշտպանության կառավարման համակարգի հիմքերին ու նպատակներին վերաբերող նորմեր և զինված ուժերի կիրառման ընթացքում ծագող հարաբերությունները կարգավորող նորմեր: Առաջին խմբին կարելի է դասել բոլոր այն նորմերը, որոնք վերաբերում են զինված ուժերի կիրառմանը, իսկ երկրորդին՝ մարդասիրական իրավունքի, այն է՝ հակամարտությունների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող նորմերը: Վերջիններս նպատակ են հետապնդում սահմանափակել զինված ուժերի գործողությունների ազատությունը:

Առաջին խումբը կազմող նորմերը ևս կարելի է բաժանել երկու ենթախմբի. դրանք են ինքնապաշտպանությունը և մասնակցությունը միջազգային խաղաղության վերականգնմանը:

Հարկ է նշել, որ 1994 թ. դեկտեմբերի 3-ին ԵԱՀԽ անդամ պետությունների կողմից ընդունվեց «Անվտանգության ռազմաքաղաքական առումներին վերաբերող վարքականոն»: Ըստ դրա տասներկուերորդ կետի՝ մասնակից պետությունները պետք է պահպանեն միայն այնպիսի ռազմական կարողություններ, որոնք համապատասխանում են անհատական կամ կոլեկտիվ անվտանգության օրինական պահանջ-մունքներին՝ հաշվի առնելով միջազգային իրավունքին համապատասխան ստանձնած իրենց պարտավորությունները<sup>7</sup>:

Ինչպես արդեն վերը նշվեց, պետությունը բոլոր թույլատրելի միջոցներով ձգտում է պահպանելու և պաշտպանելու իր ինքնուրույնությունը միջազգային հարաբերություններում: Այս նորմը իր ամրագրումն է ստացել «Պետությունների իրավունքների

<sup>5</sup> Տես նույն տեղում:

<sup>6</sup> Տես «Պաշտպանության մասին ՀՀ օրենք»: Ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից 2008 թ. նոյեմբերի 27-ին (<http://www.parliament.am/legislation.php?sel=alpha&ltype=3>):

<sup>7</sup> Տես «Code of Conduct on Politico-Military Aspects of Security». Budapest, 1994, 3 December:

և պարտականությունների հռչակագրի» առաջին հոդվածում, որտեղ նշվում է, որ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի առանց որևէ պետության թելադրանքի իրականացնելու իր անկախության և դրա հետ կապված բոլոր օրինական իրավունքները, ներառյալ՝ պետական կառավարման ձևն ինքնուրույն կերպով ընտրելու իրավունքը<sup>8</sup>: Այդ իրավունքի պաշտպանությունը պետությունն իրականացնում է իր հիմնական հատկանիշների պաշտպանության միջոցով:

Ինքնիշխանությունը, տարածքը և բնակչությունն այն հիմնական հատկանիշներն են, որոնց ամբողջությամբ է պայմանավորված պետության իրավասուբյեկտությունը<sup>9</sup>: Հետևաբար, որևէ պետության կողմից այլ պետության ինքնիշխանության, տարածքի, բնակչության նկատմամբ իրավախախտումը համարվում է ոսնձգություն պետության իրավասուբյեկտության դեմ: Ձինված հարձակման ձևով դրսևորվող ոսնձգության դեմ պայքարի համար պետությունը ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածով օժտված է ինքնապաշտպանության իրավունքով:

Հատկանշական է, որ համաձայն նույն 51-րդ հոդվածի՝ ՄԱԿ-ի Կանոնադրությունը «ոչնչով չի խաթարում անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության որևէ անդամի հարձակման ենթարկվելու դեպքում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկի միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման միջոցառումներ»<sup>10</sup>: Այսինքն՝ ինքնապաշտպանության իրավունքը միջազգային հարաբերություններում իրավաչափ է համարվում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ընդունել դրա իսկության վերաբերյալ այլ որոշում: Հարկ է նշել, որ համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածի առաջին կետի՝ «Միավորված ազգերի կազմակերպության նպատակներն են. 1. Պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով արդյունավետ համախմբված միջոցներ ձեռնարկել՝ կանխելու և վերացնելու խաղաղության սպառնալիքները, ինչպես նաև ճնշելու ագրեսիայի կամ խաղաղությունը խախտող այլ գործողությունները, և խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնելու միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը»<sup>11</sup>:

Ինչպես տեսնում ենք, միջազգային խաղաղությանն սպառնացող գործողություններին արձագանքելը ոչ միայն առանձին պետության, այլև ՄԱԿ-ի գործն է: Ինքնապաշտպանության իրավունքը, ի տարբերություն միջազգային խաղաղության ապահովումից, պետության իրավասուբյեկտությունը (այն է՝ ինքնիշխանությունը, տարածքը և բնակչությունը) պաշտպանելու միջոց է, մինչդեռ ՄԱԿ-ի և նրա անդամ պետությունների կողմից ձեռնարկվող միասնական միջոցառումները միջազգային խաղաղության կամ անվտանգության վերականգնման միջոցներ են:

<sup>8</sup> Տես «Международное право». Сборник документов. М., 2000, с. 32:

<sup>9</sup> Տես С. В. Черниченко. Теория международного права. М., 1999, с. 9:

<sup>10</sup> «Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրություն»: Ե., 2005:

<sup>11</sup> Նույն տեղում:



Սակայն, ինքնապաշտպանությունը չի կարող վերաճել այլ պետության նկատմամբ պատժամիջոցի: Այսինքն՝ պետությունները պետք է հաշվի առնեն ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ հարձակման ենթարկված պետության կողմից ինքնապաշտպանության կարգով ձեռնարկվող միջոցառումները չպետք է խոչընդոտեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից իր լիազորությունների իրականացմանը:

Ալեհայտ է, որ «Ինքնապաշտպանության իրավունք» հասկացությունը տեսականորեն ներառում է երկու սկզբունքորեն տարբեր հասկացություններ: Մի կողմից՝ պետությունը, միջազգային իրավունքի սուբյեկտ լինելով, օժտված է իր դեմ զինված հարձակում սկսվելու դեպքում այդ հարձակմանը ուժով պատասխանելու իրավունքով, իսկ մյուս կողմից՝ այդ իրավունքը իրականացնելու համար պետությունը պետք է կատարի բավականին լուրջ նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես՝ պետք է ստեղծի զինված ուժեր, իրականացնի դրանց նյութատեխնիկական ապահովում, ոլորտի իրավական կարգավորում և այլն: Այստեղից էլ բխում է ինքնապաշտպանության իրավունքի երկակի բնույթը: Խաղաղ պայմաններում դա հնարավոր զինված հարձակմանը դիմակայելուն ուղղված նախապատրաստական բնույթի միջոցառումների համակարգ է՝ Չինված հարձակման դեպքում այն տեղափոխվում է անմիջական փոխազդեցության իրական ոլորտ՝ դառնալով պետության կոնկրետ գործողություն, որը այդ հարձակումը հետ մղելու և դրա հետևանքները իր համար բարենպաստ դարձնելու նպատակ է հետապնդում<sup>12</sup>: Ավելին. իրավաբանների

\* Ինքնապաշտպանության իրավունքի իրականացման նպատակով պետության ներսում տեղի է ունենում պաշտպանության կազմակերպում: Պաշտպանության նախապատրաստման գործընթացի միջազգային-իրավական կարգավորումը շատ մեծ կարևորություն է ներկայացնում այն առումով, որ այս փուլում հնարավոր է լինում սահմանափակել պետությունների ռազմական ներուժը: Պատմությունը ցույց է տալիս, որ համաշխարհային պատերազմներին նախորդել է պետությունների ռազմական արդյունաբերության աճման աննախադեպ տեմպը: Բավականին մեծ միջոցներ ուղղելով ռազմական կարիքների բավարարմանը՝ պետություններն ստեղծում էին հզոր ռազմական ներուժ, որն էլ հետագայում փորձում էին օգտագործել պատերազմում: Անկասկած, պետությանը որոշակի քանակով ռազմական տեխնիկա անհրաժեշտ է իր ինքնապաշտպանությունը կազմակերպելու և միջազգային պարտավորությունները կատարելու համար: Սակայն միջազգային անվտանգությունը պահանջում է խուսափել որևէ պետության ռազմականացումից: ՌԲՍտի տեխնիկայի քանակը պետք է համապատասխանի պետության մեծությանը, միջազգային տեղին ու դերին և բավարար լինի պետության առջև կանգնած սպառնալիքները չեզոքացնելու համար: Միմյանց նկատմամբ ԵԱՀԿ անդամ պետությունների վստահության ամրապնդման նպատակով այդ աշխարհամասի մի շարք երկրներ միջազգային մակարդակով պայմանավորվածություն են ձեռք բերել առկա սպառազինությունների և զինված ուժերի թվաքանակը սահմանափակելու վերաբերյալ:

Ըստ պաշտպանության նախապատրաստման նորմերի՝ արգելվում է որոշ տեսակի զենքերի ձեռքբերումը: Մասնավորապես՝ «Միջուկային զենքի չտարածման մասին» պայմանագիրը արգելում է այդ պայմանագիրն ստորագրած և միջուկային զենք չունեցող պետություններին ձեռք բերել միջուկային զենք, «Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին» պայմանագիրը արգելում է պայմանագրի անդամ որևէ պետության տարածքում որոշակի թվաքանակից ավելի ռազմական տեխնիկա և սպառազինություն պահելը: Այսպիսով՝ նախադրյալներ են ստեղծվում սպառազինության մրցավազքից և դրանից բխող լուրջ հակամարտություններից խուսափելու համար:

<sup>12</sup> Տես Չ. Ի. Տկաչուով. Самооборона в международном праве. М., 1973, с. 75:

միջև տարածայնություններ կան նաև ինքնապաշտպանության իրավունքի կիրառման ծավալների վերաբերյալ: Մի մասը համարում է, որ պետությունը ինքնապաշտպանության պետք է դիմի միայն այն դեպքում, երբ նրա վրա արդեն հարձակվել են, մյուս մասը պնդում է, որ պետությունը ինքնապաշտպանության իրավունքի համատեքստում ունի ավելի լայն լիազորություններ՝ հնարավոր հարձակումը կանխելու նպատակով: Այդ դեպքում պետությունն իրեն ուժ կիրառելու իրավունք է վերապահում նույնիսկ այն դեպքում, երբ հակառակորդի ճամբարում նկատվում է «բռնամական մտադրությունների» ցուցադրում: Չսպասելով հակառակորդի կողմից հնարավոր սպառնալիքի իրականացմանը՝ պետությունը նախապատրաստվում և առաջինն է ուժ կիրառում<sup>13</sup>:

Զինված հարձակման դեպքում ինքնապաշտպանության նպատակով ուժ կիրառելու իրավունքը, ըստ Վատտելի, պատկանում է բացառապես ինքնիշխանին: Խոսելով անվտանգության իրավունքի մասին՝ նա ցույց է տալիս, որ բնությունը մարդկանց իրավունք է տալիս ուժ կիրառելու, եթե դա անհրաժեշտ է իրենց պաշտպանության և իրավունքների պահպանման համար: Քաղաքական հասարակություններում միավորվելուց հետո այդ իրավունքի իրականացումը այլևս չի պատկանում անհատներին: Եթե անհատը ցանկանում է իր իրավունքն իրականացնել օտար պետության հպատակի հանդեպ, ապա նա պետք է դիմի այդ պետության ինքնիշխանին կամ պաշտոնատար անձանց, որոնք իրականացնում են հանրային իշխանություն: Եթե նա պաշտպանություն չստանա, ապա պետք է դիմի իր ինքնիշխանին, որը պարտավոր է աջակցություն ցուցաբերել: Չափազանց վտանգավոր կլիներ անհատներին իրավունք վերապահել ինքնուրույն լուծելու իրենց վեճերը օտարերկրացիների հետ, քանի որ նրանցից յուրաքանչյուրը կարող է պատերազմի մեջ ներքաշել իր պետությունը<sup>14</sup>:

Պաշտպանությունը, որպես կառավարման գործընթաց, պետք է ունենա որոշակի նպատակներ: Եթե պետությունը բնորոշվում է երեք հատկանիշներով՝ ինքնիշխանությամբ, տարածքով ու բնակչությամբ, և զինված հարձակումն ուղղված է դրանց դեմ, ապա կարող ենք ասել, որ պաշտպանության (նույնն է՝ ինքնապաշտպանության) նպատակը պետության տարածքում ապրող բնակչության, այդ պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությանը միտված գործընթաց է<sup>15</sup>:

Տարածքի պաշտպանությունը և ինքնիշխանության պաշտպանությունը, թվում է, թե չեն կարող խնդիրներ առաջացնել: Ինչ վերաբերում է բնակչության պաշտպանությանը, ապա հիմնական վիճահարույց հարցն այն է, թե արդյոք պետությունը իրավունք ունի արտասահմանում գտնվող իր քաղաքացիների պաշտպանության նպատակով կիրառել զինված ուժ, թե՞ պետք է դիվանագիտական և բոլոր այլ ճանա-

<sup>13</sup> *Stu Ch. Gray. The Use of Force and International Legal Order. In: «International Law», edited by Malcolm D. Evans. Oxford, 2003, PP. 589—618:*

<sup>14</sup> *Տես Է. դը Վալուրել, նշ. աշխ., էջ 426:*

<sup>15</sup> Տես «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

պարհներով հասնի իր քաղաքացիների դուրսբերմանը<sup>16</sup>: Մեր կարծիքով՝ պետությանն իր քաղաքացիների վրա հարձակումը կարող է դիտել որպես հարձակում իր վրա և դիմել ինքնապաշտպանության<sup>17</sup>: Ջարգացնելով այդ միտքը՝ կարելի է ասել, որ առհասարակ նշված երեք հատկանիշներից որևէ մեկի դեմ զինված հարձակում տեղի ունենալու դեպքում պետությունն իրավասու է կիրառելու զինված ուժ:

Ինքնապաշտպանության իրավունքին բնորոշ են մի շարք յուրահատուկ գծեր:

Միջազգային իրավունքի տեսակետից ինքնապաշտպանության իրավունքը պետության իրավունքն է և պայմանավորված է այն հանգամանքով, որ ինքնապաշտպանության իրականացումը ենթադրում է ինքնիշխանության, տարածքի և բնակչության պաշտպանություն: Քանի որ միջազգային իրավունքի ոչ մի այլ սուբյեկտ օժտված չէ այդ հատկանիշներով, հետևաբար և ինքնապաշտպանություն տերմինի գործածումը նրանց նկատմամբ իրավաբանորեն ճիշտ չէ:

Ինքնապաշտպանության իրավունքի իրավաչափության կարևորագույն պայման է դրա համամասնությունը հարձակմանը. համամասնությունը, այլ ոչ՝ համանմանությունը: Համանմանություն ասելով՝ տվյալ համատեքստում հասկանում ենք պետության պարտականությունը՝ օգտագործել այն նույն զենքը, որն օգտագործել է հարձակվող կողմը: Մինչդեռ համամասնությունը նշանակում է, որ ինքնապաշտպանությունը չպետք է դուրս գա իր նպատակի, այն է՝ զինված հարձակումը կասեցնելու շրջանակներից: Հակառակ դեպքում՝ ինքնապաշտպանության պատրվակով կարող է սկսվել զինված հակամարտություն<sup>18</sup>:

Այս տեսակետը հետևողականորեն մերժվում էր խորհրդային գիտնականների կողմից, որոնք, մասնավորապես, նշում էին, որ այն ընդունելը կնշանակի ընդունել «ընդլայնված ինքնապաշտպանությունը»<sup>19</sup>: Սակայն, մեր կարծիքով, ինքնապաշտպանության համամասնության սկզբունքը իրականում գոյություն ունի և բխում է հենց ՄԱԿ-ի Կանոնադրության մի շարք հոդվածներից, մասնավորապես՝ 51-րդ հոդվածից: Ինքնապաշտպանության նպատակն է կասեցնել զինված հարձակումը մինչև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից համապատասխան միջոցների ձեռնարկումը: Այն չի հետապնդում իրավախախտին պատժելու նպատակ: Հակառակ դեպքում, փաստորեն, կանտեսվեին Անվտանգության խորհրդի լիազորությունները: Այսպես, որպես պատասխան մի քանի զինված անձանց կողմից սահմանի խախտմանը և որոշակի ռազմական գործողությունների ծավալմանը՝ պետությունը կարող է լայնամասշտաբ հարձակում սկսել սահմանի ամբողջ երկայնքով և անգամ առաջ շարժել իր զորքերը՝ խախտելով սահմանները: Իրավաբանական գիտության տեսանկյունից պետությունը իրավաչափ է կիրառում զինված ուժը, քանի որ այն հետևել է զինված հարձակմանը: Սակայն ակնհայտ է, որ հետագայում ձեռնարկվող միջոցառումները

<sup>16</sup> Տես *Զ. Գրեյ*, նշ. աշխ.:

<sup>17</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Վ. Խաչատրյան*, Մարդասիրական ինտերվենցիայի իրավական հիմքերը ժամանակակից միջազգային իրավունքում: «Հայկական բանակ», 2007, հմ. 4:

<sup>18</sup> Տես *Զ. Գրեյ*, նշ. աշխ.:

<sup>19</sup> Տես *Է. Բ. Սկսկունով*, նշ. աշխ., էջ 140—146:

դուրս են գալիս ինքնապաշտպանության սահմաններից: Իհարկե, դժվար է ուրվագծել այդ սահմանները: Մասնավորապես՝ շատ վիճելի է մնում այն հարցը, թե արդյոք պետությունը իրավունք ունի սահմանն անցնել և այնտեղ ոչնչացնել թշնամու զորակայանները, որոնք օգտագործվում են իր տարածքի վրա հարձակում գործելու համար: Փաստորեն, այս դեպքում արդեն պետությունը ոչ թե նպատակ է հետապնդում կասեցնելու զինված հարձակումը, այլ կանխելու այն, ինչը պետք է համարվի կանխիչ ինքնապաշտպանություն: Արևմտյան դոկտրինում այս դեպքերում շատ հաճախ որպես օրինակ է բերվում «Կարոլինայի գործը», որը տեղի է ունեցել նախքան ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունումը<sup>20</sup>: Սակայն այստեղ էլ պետք չէ կտրվել իրականությունից: Մեր կարծիքով՝ պետությունը, ենթարկվելով սահմանակից պետության տարածքից կատարվող զինված հարձակման, չի կարող սպասել, թե երբ, օրինակ, հրետանին կհատի իր սահմանը, և նոր միայն հակամիջոցներ ձեռնարկել: Եթե դրանք ոչ թե հնարավոր, այլ ռեալ վտանգ են ներկայացնում, ապա պետությունը միանշանակ կերպով իրավասու է ոչնչացնելու այդ վտանգի աղբյուրը: Չինված հարձակման ենթարկվելը չի նշանակում, թե հարձակման միջոց հանդիսացող սպառազինությունը հատել է սահմանը և գործում է տվյալ պետության տարածքում: Դա ոչ թե կանխիչ ինքնապաշտպանություն է, այլ ինքնապաշտպանություն՝ բուն իմաստով, քանի որ արդեն իսկ տեղի է ունեցել զինված հարձակում:

Արևմտյան գրականությունում ինքնապաշտպանության իրավունքի իրականացման պայմաններում, բացի համամասնությունից, նշվում է նաև անհրաժեշտությունը<sup>21</sup>, որը, մեր կարծիքով, նույն համամասնության սկզբունքի տրամաբանական շարունակությունն է: Սակայն խնդիրն այն է, որ այս պահանջը ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ հստակ կերպով նշված չէ, թեև այն միջազգային իրավունքի մաս է<sup>22</sup>: Մի բան ակնհայտ է՝ այն, որ ինքնապաշտպանության հիմքը կարող է լինել միայն զինված հարձակումը: Սա բխում է ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածից, համաձայն որի՝ ինքնապաշտպանության իրավունքը պատկանում է հարձակման ենթարկված պետությանը:

Պետության համար պաշտպանական ոլորտի կառավարման մյուս ուղղությունը միջազգային խաղաղության ապահովմանը մասնակցությունն է:

ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունումից հետո առանձին պետությունների անվտանգությունը դադարել է միայն նրանց հոգածության առարկա լինելուց: Թեև առանձին տարածաշրջաններում դեռ գոյություն ունեն զինված հակամարտություններ, սակայն այլևս չկա այն երևույթը, որ մի պետություն ամբողջությամբ զավթում է մեկ այլ պետություն: ՄԱԿ-ի Կանոնադրության առաջին հոդվածը սահմանում է, որ ՄԱԿ-ի հիմնական նպատակներից է միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանումը: Դրա հետ մեկտեղ, «Անվտանգության ռազմաքաղաքական ոլոր-

<sup>20</sup> Տես «Encyclopedia of Public International Law». North Holland, 1992, Vol. II, P. 543:

<sup>21</sup> Տես *Mark W. Janis, John E. Noyes*. International Law. Cases and commentaries. St. Paul, 1997, P. 424:

<sup>22</sup> Տես *Զ. Գոլդ*, նշ. աշխ.:

տում վարքագծի կանոնների» երրորդ կետում մասնակից պետությունները համոզմունք են հայտնում, որ ընդհանուր անվտանգությունը անբաժանելի հասկացություն է, և որ նրանցից յուրաքանչյուրի անվտանգությունը անբաժանելիորեն կապված է մյուս բոլոր անդամների անվտանգության հետ: Սա նշանակում է, որ պետությունները չեն կարող մնալ դիտորդի դերում, եթե որևէ պետություն հարձակվում է մեկ այլ պետության վրա: Մարդկության պատմությունը, հանձինս երկու համաշխարհային պատերազմների, պատասխանում է այն հարցին, թե ինչ է տեղի ունենում, երբ միջազգային հանրությունը չի փորձում կանխել արյունահեղ պատերազմների բռնկումը:

Միջազգային անվտանգության պահպանման համար առաջին հերթին պատասխանատու է Անվտանգության խորհուրդը: Համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության 39-րդ հոդվածի՝ Անվտանգության խորհուրդը որոշում է խաղաղության ցանկացած վտանգման, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայությունը և հանձնարարականներ է տալիս կամ վճռում է, թե համաձայն 41-րդ և 42-րդ հոդվածների՝ ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման կամ վերականգնման համար: 42-րդ հոդվածը սահմանում է, որ անհրաժեշտության դեպքում, եթե Անվտանգության խորհուրդը գտնի, որ 41-րդ հոդվածում նախատեսված միջոցները անբավարար են, ապա կարող է օգտվել, ծովային կամ ցամաքային ուժերով նախաձեռնել այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ կհամարվեն միջազգային անվտանգությունն ու խաղաղությունը վերականգնելու համար: Դրանք կարող են ներառել Միավորված ազգերի կազմակերպության անդամների օգտին, ծովային կամ ցամաքային զինուժի ցուցադրություններ, շրջափակում և այլ գործողություններ: 43-րդ հոդվածով ամրագրվում է պետությունների պարտավորությունը՝ նպաստելու միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանը (Անվտանգության խորհրդի կոչով և հատուկ համաձայնագրի կամ համաձայնագրերի հիման վրա) և այդ նպատակով տրամադրելու միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման համար անհրաժեշտ զինուժ, օժանդակություն և համապատասխան միջոցներ, ներառյալ՝ սահմանն անցնելու իրավունքը: Համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության 46-րդ հոդվածի՝ այդ ուժերի կիրառման հարցը որոշում է Ռ-ազմական անձնակազմի կոմիտեն: Մակայն ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունմանը հաջորդող իրադարձությունները այդպես էլ կյանքի չկոչեցին նշված դրույթները: Մասնավորապես՝ Ռ-ազմական անձնակազմի կոմիտեի ձևավորումը այդպես էլ մնաց չիրականացված, պետությունների հետ այդպես էլ բանակցություններ չվարվեցին զինված ուժերի տրամադրման հարցով, չստեղծվեցին հարկադրանքի կիրառումն ապահովող զինված ուժեր:

Դրա փոխարեն միջազգային խաղաղությունն ու անվտանգությունն այսօր ապահովվում են այլ եղանակով: Մասնավորապես՝ Բուտրոս Բուտրոս-Ղալիի «Խաղաղության օրակարգ» հանրահայտ զեկույցում մեկնաբանություն են ստացել այնպիսի տերմիններ, ինչպիսիք են «խաղաղապահական գործողությունները», «խաղաղությանը հարկադրման գործողությունները» և «խաղաղության կառուցման գործողությունները»: Դրանց էությունն այն է, որ այլ պետությունների գորամիավորումները

մասնակցում են հակամարտության գոտիներում խաղաղության վերականգնմանը<sup>23</sup>: Տվյալ հանգամանքը պայմանավորված է այն իրողությամբ, որ խաղաղ ճանապարհով վեճերի լուծումը կամ հակամարտային գործողությունների կանխումը երբեմն չեն տալիս անհրաժեշտ արդյունք: Նման դեպքերում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը դիմում է խաղաղության պարտադրման գործողությունների: 2003 թ. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Ք. Անանի կողմից ստեղծվեց բարձր մակարդակի մի հանձնաժողով, որին հանձնարարվեց գնահատել արդի սպառնալիքները, վտանգներն ու մարտահրավերները: Այդ հանձնաժողովի «Աշխարհում անվտանգության մակարդակի բարձրացում. մեր ընդհանուր պատասխանատվությունը» հաշվետվության մեջ ներկայացված է 101 առաջարկություն, մասնավորապես, առաջարկվում է ուժի կիրառման մասին որոշում ընդունելիս դեկավարվել հետևյալ սկզբունքներով.

– սպառնալիքի լրջությունը (արդյոք սպառնալիքն այնքան լուրջ է, որ արդարացված լինի ուժի կիրառման *prima facie*-ն),

– պատշաճ նպատակը (արդյոք ուժի կիրառման հիմնական նպատակն է տվյալ սպառնալիքի վերացումը թե կանխումը),

– վերջին միջոցը (արդյոք բոլոր ոչ ռազմական միջոցներն են քննարկվել և սպառվել),

– միջոցների համամասնությունը (արդյոք կիրառվելիք ուժը նվազագույնս անհրաժեշտ է տվյալ սպառնալիքին դիմակայելու համար),

– հետևանքների հաշվեկշիռը (որքանով է ակնհայտ, որ ուժի կիրառման հետևանքներն ավելի վատը չեն լինի, քան անգործության հետևանքները)<sup>24</sup>:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը ևս իր մասնակցությունն է ունենում միջազգային խաղաղության պահպանման ու վերականգնման գործում: Մինչև նույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 8.2 հոդվածը սահմանում է, որ ՀՀ Ձինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը, իսկ 55-րդ հոդվածի համաձայն՝ հանրապետության նախագահը Ձինված ուժերի օգտագործման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակում կատարվելու, դրա անմիջական վտանգի առկայության դեպքում՝ ռազմական դրություն հայտարարելուց հետո: Ինչպես տեսնում ենք, միջազգային խաղաղության և անվտանգության վերականգնմանը մասնակցության մասին խոսք չկա: Մինչդեռ ՀՀ գլխավոր քաղաքական փաստաթղթում՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ, նշված է. «Գիտակցելով արդի մարտահրավերների նկատմամբ մեկ պետության կարողությունների սահմանափակ լինելը՝ Հայաստանի Հանրապետության»

<sup>23</sup> Խաղաղապահական գործողությունների մասին ավելի հանգամանորեն տես Վ. Ա. Խաչատրյան, Խաղաղապահ գործողությունների մի քանի հարցերի շուրջ: «Օրենք և իրականություն», 2006 թ., հունվար:

<sup>24</sup> Տես Kofi A. Annan. Courage to Fulfil Our Responsible. «The Economist», 2004, 2 December (<http://www.un.org/News/ocsg/sg/stories/sg—2dec2004.htm>):

պետությունը կարևորում է ակտիվ ռազմաքաղաքական համագործակցությունը ինչպես տարածաշրջանի, այնպես էլ արտատարածաշրջանային պետությունների հետ: Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերը մասնակցում են խաղաղության և անվտանգության ապահովման միջազգային գործողություններին»<sup>25</sup>:

2006 թ. նոյեմբերի 13-ին՝ հայկական խաղաղապահ ստորաբաժանման Իրաք մեկնելուց առաջ, ՀՀ պաշտպանության նախարար, ներկայումս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը վստահություն հայտնեց, որ «Հայաստանը չի կարող լինել լոկ անվտանգության սպառող: Հայաստանն իր համեստ, բայց հաստատուն ներդրումը պիտի ունենա միջազգային անվտանգության գործընթացներում»<sup>26</sup>: Այսօր հայկական խաղաղապահ զորախմբերը ծառայում են Կոսովոյում գործող խաղաղապահ ուժերի կազմում: Ինչպես նշվեց՝ մեկ այլ զորախումբ էլ խաղաղապահ առաքելություն էր իրականացնում Իրաքում: 2008 թ. հոկտեմբերի 7-ին տեղի ունեցավ ՀՀ ՊՆ 12-րդ խաղաղապահ բրիգադի՝ Իրաքում հետպատերազմյան վերականգնման գործընթացի շրջանակներում խաղաղապահական առաքելություն իրականացրած հայ խաղաղապահների զորախմբի վերջին՝ 8-րդ, հերթափոխի դիմավորման արարողությունը<sup>27</sup>: Մեր խաղաղապահների նկատմամբ պետության կողմից ցուցաբերվում է բարձր հոգածություն: Ավելին. զորախմբերի ծառայությանը, առօրյային, խնդիրներին երկրի պետական այրերը ծանոթանում են նաև տեղում<sup>28</sup>:

Մեր երկրում իրականացվող պաշտպանական բարեփոխումները ենթադրում են նաև պաշտպանական ոլորտի օրենսդրության շարունակական վերանայում ու կատարելագործում: Ուստի հույս ունենք, որ մոտ ապագայում կմշակվի նաև միջազգային խաղաղության պահպանման ու վերականգնման գործին ՀՀ մասնակցության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտը: Այս հարցը կարևորվում է նաև ՀՀ Ձինված ուժերում ներկայումս ընթացող լայնամասշտաբ բարեփոխումների համատեքստում, մասնավորապես՝ միջազգային երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների ու ռազմական համագործակցության ընդլայնման ու խորացման տեսանկյունից:

<sup>25</sup> «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 24–25:

<sup>26</sup> «Հայաստանը չի կարող լինել միայն սպառող» (<http://www.armtown.com/news/am/arv/20061114/2006111405/>):

<sup>27</sup> Տես «Վերադարձավ Իրաքում խաղաղապահ առաքելություն իրականացնող վերջին հերթափոխը» (<http://www.mil.am/arm/index.php?page=2&p=6&id=633&y=2008&m=12&d=29>):

<sup>28</sup> Տես, օրինակ, «ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի այցը Կոսովո» (<http://www.mil.am/arm/index.php?page=2&p=4&id=656&y=2008&m=12&d=29>):

**МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО**

**ИЗУЧЕНИЕ НЕКОТОРЫХ  
ОБОРОННЫХ ФУНКЦИЙ ГОСУДАРСТВА  
В КОНТЕКСТЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА**

*В. А. ХАЧАТРЯН, старший лейтенант, магистр юридических наук,  
офицер Отдела оформления документов закупок административного аппарата  
МО РА, соискатель кафедры конституционного права юридического  
факультета ЕГУ*

**РЕЗЮМЕ**

Международным правом четко регламентируется применение государствами вооруженной силы. Оно допускается только в тех случаях, когда на государство совершено вооруженное нападение или существует непосредственная угроза такого нападения (право на самооборону), в том числе—и при участии в международных действиях по восстановлению мира. В статье анализируются различные интерпретации данных норм, обосновывается необходимость превентивных мер.

Отмечается, что Армения, являясь членом международного сообщества, участвует в операциях по восстановлению безопасности и мира, хотя это в Конституции не закреплено. Предлагается в ходе реформ в оборонной сфере ввести в Конституцию соответствующую норму.

**INTERNATIONAL LAW**

**THE STUDY OF SOME DEFENSE FUNCTIONS OF THE STATE  
IN THE CONTEXT OF INTERNATIONAL LAW**

*V. A. KHACHATRYAN, Senior Lieutenant, Master of Law, Officer at the Department  
of Procurement Documents Preparation of Administrative Staff, MoD, RA,  
Applicant at the Chair of Constitutional Right of the Faculty of Law, YSU*

**SUMMARY**

According to International Law the use of the armed force by states is clearly regulated. It is allowed only in those cases, when the state is subjected to an armed attack or there is a direct threat of such an attack (it is the right on self-defense), including—the participation in international operations on peace restoration. In this article different interpretations of the given norms are analysed, and the necessity of carrying out preventive measures is grounded.

It is mentioned that Armenia being a member of international community participates in operations on security and peace restoration, though that is not fixed in the Constitution. A relevant norm is proposed to be introduced in the Constitution in the course of reforms in the defense sphere.



**ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ**

*Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, կապիտան, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, կապիտան,  
Գ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ*

**ՀԱՅ-ՌՈՒՄԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ**

առաջավար—лидер; leader  
առաջավարություն—лидерство; leadership  
առանձնաշնորհ—привилегия; privilege  
բազմազանեցում—диверсификация; diversification  
նաշնադրային խմբավորում—коалиционная группировка; coalition group  
դիրքորոշում—1. позиция, 2. установка, 3. ориентация; 1. directive, 2. aim, orientation  
ենթակապալառու—субподрядчик; subcontractor  
ենթակառուցվածք—инфраструктура; infrastructure  
ինքնարավոյրյան բանեկարգ—режим самодостаточности; self-sufficiency regime  
իրավասուբյեկտություն—правосубъектность; legal personality  
իրավիճակային պլանավորում—ситуационное планирование; situation planning  
խորհրդարանական չափում—парламентское измерение; parliamentary dimension  
խորրային բնույթ—глубинный характер; profound nature  
կանոնակարգվածություն—регламентированность; state of being regulated  
կառավարելիություն—управляемость; controllability  
կառավարում—управление; management  
—նազմարական կառավարում—стратегическое управление; strategic

management  
կերպափոխում—трансформация; transformation  
կոլեկտիվ—1. коллектив, 2. коллективный; 1. collective group, 2. collective  
հայեցակարգային մոտեցում—концептуальный подход; conceptual approach  
հաշվեկշռային անհամամասնություն—балансовая непропорциональность; balance disproportion  
հավաքական—1. сборная (сущ.), 2. сборный (прил.); 1. team, 2. collective  
ձևաչափ—формат; format  
ղեկավարություն—руководство; leadership  
—պետության ղեկավարություն—руководство государства; State leadership  
—նազմարադարական ղեկավարություն—военно-политическое руководство; military-political leadership  
ղեկավարում—руководство; governance  
—միանձնյա ղեկավարում—единоличное руководство; one-man governance  
մշտագնում—мониторинг; monitoring  
պաշտպանունակություն—обороноспособность; defense capability  
պատեհաժամ հակազդում—своевременная реакция; opportune reaction  
նազմական բաղադրիչ—военная составляющая; military component  
սպայական շրջափոխություն—офицерская ротация; officers' rotation

սպառազինությունների մրցավազր—гонка вооружений; arms race  
 վարչակազմ—администрация; administration  
 վարչարարություն—администрирование; administration  
 տեղեկունակություն—информативность; informative ability  
 ուղեղային կենտրոն—мозговой центр;

think-tank  
 փոխգործելիություն—интероперабельность; interoperability  
 փոխգործողություն—տես *փոխգործություն*  
 փոխգործություն—взаимодействие; interaction  
 քաղաքական ընտրախավ—политическая элита; political elite

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

администрация—1. վարչակազմ, 2. վարչություն  
 администрирование—վարչարարություն  
 балансовая непропорциональность—հաշվեկշռային անհամահունքություն  
 взаимодействие—փոխգործություն, փոխգործողություն, գործակցություն  
 военная составляющая—ռազմական քաղաքիչ  
 глубинный характер—խորքային բնույթ  
 гонка вооружений—սպառազինությունների մրցավազր  
 диверсификация—բազմազանեցում  
 интероперабельность—փոխգործելիություն  
 информативность—տեղեկունակություն  
 инфраструктура—ենթակառուցվածք  
 коалиционная группировка—դաշնադրային խմբավորում  
 коллектив—կոլեկտիվ  
 коллективный—կոլեկտիվ  
 концептуальный подход—հայեցակարգային մոտեցում  
 лидер—առաջավար, առաջատար, առաջնորդ  
 лидерство—առաջավարություն, առաջատարություն, առաջնորդություն  
 мозговой центр—ուղեղային կենտրոն  
 мониторинг—մշտազննում  
 обороноспособность—պաշտպանունակություն  
 ориентация—դիրքորոշում  
 офицерская ротация—սպայական շրջափոխություն

парламентское измерение—խորհրդարանական չափում  
 позиция—1. դիրք, 2. դիրքորոշում  
 политическая элита—քաղաքական ընտրախավ  
 правосубъектность—իրավասուրյեկություն  
 привилегия—1. առանձնաշնորհ, 2. առավելություն  
 регламентированность—կանոնակարգվածություն  
 режим самодостаточности—ինքնաբավության բանեկարգ  
 руководство—1. ղեկավարում, 2. ղեկավարություն  
 —военно-политическое руководство—ռազմաքաղաքական ղեկավարություն  
 —единоличное руководство—միանձնյա ղեկավարում  
 —руководство государства—պետության ղեկավարություն  
 сборная—հավաքական  
 сборный—հավաքական  
 своевременная реакция—պատեհաժամ հակազդում  
 ситуационное планирование—իրավիճակային պլանավորում  
 субподрядчик—ենթակապալառու  
 трансформация—կերպափոխում  
 управление—կառավարում  
 —стратегическое управление—ռազմավարական կառավարում  
 управляемость—կառավարելիություն  
 установка—դիրքորոշում  
 формат—ձևաչափ

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

- administration—1. վարչարարություն, 2. վարչակազմ
- aim—դիրքորոշում
- arms race—սպառազինությունների մրցակարգ
- balance disproportion—հաշվեկշռային անհամահասունություն
- coalition group—դաշնադրային խմբավորում
- collective—1. կոլեկտիվ, 2. հավաքական
- collective group—կոլեկտիվ
- conceptual approach—հայեցակարգային մոտեցում
- controllability—կառավարելիություն
- defense capability—պաշտպանունակություն
- directive—դիրքորոշում
- diversification—բազմազանեցում
- format—ձևաչափ
- governance—ղեկավարում  
—one-man governance—միանձնյա ղեկավարում
- informative ability—տեղեկունակություն
- infrastructure—ենթակառուցվածք
- interaction—փոխգործություն, փոխգործողություն
- interoperability—փոխգործելիություն
- leader—առաջավար, առաջատար, առաջնորդ
- leadership—1. առաջավարություն, առաջատարություն, առաջնորդություն, 2. ղեկավարություն
- military-political leadership—ռազմաքաղաքական ղեկավարություն
- State leadership—պետության ղեկավարություն
- legal personality—իրավասուբյեկտություն
- management—կառավարում
- strategic management—ռազմավարական կառավարում
- military component—ռազմական բաղադրիչ
- monitoring—մշտագնում
- officers' rotation—սպայական շրջափոխություն
- opportune reaction—պատեհաժամ հակազդում
- orientation—see *aim*
- parliamentary dimension—խորհրդարանական չափում
- political elite—քաղաքական ընտրախավ
- privilege—առանձնաշնորհ
- profound nature—խորքային բնույթ
- regulation—1. կարգավորում, 2. կանոն, 3. կանոնակարգ, 4. կանոնակարգում
- self-sufficiency regime—ինքնաբավության քանելակարգ
- situation planning—իրավիճակային պլանավորում
- subcontractor—ենթակապալառու
- team—1. թիմ, 2. հավաքական
- think-tank—ուղեղային կենտրոն
- transformation—կերպափոխում

### **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՒՀ-ի կողմից հաստատված «Գոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

### **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаян МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

### **For the information of the authors and readers**

Defense-academic quarterly «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

**ՀԱՅԿԱՍՏ ԲԱՆԿ**

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Մ. Շահվերդյան*  
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասատրյան*  
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*  
Տեխնիկական բաժնի պետ՝ *Ա. Պ. Նազարեթյան*

Հայերեն տեքստերի խմբագիր՝ *Ա. Կ. Շահբազյան*  
Ռուսերեն և անգլերեն տեքստերի խմբագիր՝ *Լ. Հ. Պասիկյան*  
Տեխնիկական խմբագրումը՝ *Ա. Պ. Նազարեթյանի*  
Ձևավորող նկարիչ՝ *Հ. Գ. Մահակյան*  
Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեքստերի բարգմանությունը՝ *Ն. Ս. Մկրտչյանի, Լ. Հ. Պասիկյանի*  
Համակարգչային ապահովումը՝ *Գ. Ս. Դադայանի, Վ. Ռ. Խալսաֆյանի*  
Սրբագրիչներ՝ *Ն. Հ. Բաղդասարյան, Տ. Մ. Տիրացույան*

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝ *Ա. Հ. Հակոբյանի*

Լուսանկարչական ապահովումը՝  
ՀՀ նախագահի պաշտոնական կայքից,  
ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՆեցու փողոց, 56/6, հեռ. 28-12-94, 23-29-71:

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների  
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2008 թ.

Հանձնվել է շարվածքի 21.10.2008: Ստորագրվել է տպագրության 22.12.2008:  
Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70×100 1/16:  
Տեքստը՝ 120 էջ + 4 էջ ներդիր:  
Պայմանական տպագրական 9.75 մամուլ: Տպարանակը՝ 500:  
Տառատեսակը՝ «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:  
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Ամարաս» տպարանում:



Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հ. Բաղրամյանի 111-ամյակին նվիրված տոնական միջոցառումը՝ ՀՀ ԶՈՒ-ի բարձրաստիճան սպաների, ՀՀ ԱԺ պատգամավորների, Մարշալ Բաղրամյանի անվան զորամասի զինվորների, ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի սաների, «Փոքր Միեր» կադետաստեպուհական կրթահամալիրի հայկագույնների մասնակցությամբ.

Երևան, Բաղրամյան պողոտա, 2008 թ. դեկտեմբերի 2



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ